



ՆԱՅԱՍՏԱՆԻ ԱԸՉՊԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL
LIBRARY
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է
Հայաստանի ազգային գրադարանի
թվային շտեմարաններում՝ համաձայն
դրա իրավատիրոջ հետ կնքած
Համագործակցության պայմանագրի, և
կարող է օգտագործվել բացառապես
օրենքով նախատեսված կարգով՝
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ
հեղինակային իրավունքները**

8426

ՄԻՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՏԱՄՔԸ
ԾՐԱԳԻՐ Է ԵՎ
ԵՐԴՈՒՄ

281.6

Ս-98

281.6

U-98

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

04 NOV 2009
2

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՏԱՄՔԸ ԾՐԱԳԻՐ
Է ԵՎ ԵՐԴՈՒՄ

(Հոդվածներ, հարցազրույցներ)

Երևան, «Նաիրի», 2001

9005 VON A O
07.08.2013

8426

ՄԱՅՄԱՆԻՐԱՆՍ ԱՆԻՍ

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՆՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 45-ԱՄՅԱԿԻՆ

ՄԱՅԹՈՒՄԻՆՈՅԳՈՒՄ
ԴԻՔՄԻՇ ԳԳՍԱՏՄԻԱՆ
ՍԻՆՈՒՄ Է

(գամբարացի կրթական)

Գիրքը մեր օրերի և հոգևորականի մասին է:
Հոգևորական, որի շուրթերը մեռածազրված են
Աստծո կենարար խոսքերով.
«Լից օրհնութեամբ շնորհաց քոյ գշրթունս իմ»,
իսկ գործը՝ հույսի աղոթքով:

1005 ՎՊԻՄԱՆԻ ԾՐԱԳԻՎ

1374-2001



ԵՐԿՈՒ ԽՈՍԸ

Գրականությունը օվկիանոս է, որ սնվում է շնորհա-
շատ գրողների հորդարոյս գետերով: Այդ օվկիանոսը
նաև իր մեջ է ընդունում գետեր-վտակներ, առու-աղը-
յուրներ, որոնք հաճախ վրիպում են տեսաբանների ու-
շաղղությունից: Մաքրամաքուր գրական գործերից բա-
ցի, գրականություն են մուտք գործում այլ գործեր ևս,
ինչպես հրապարակախոսությունը, գրականագիտական
երկերը, ճամփորդական նոթերը, հուշագրությունները,
լրագրությունը, որոնց լավագույն արտադրանքը
հարստացնում է գրական անդաստանը:

Ահա, մեկ տասնամյակից ավելի մամուլում, հեռու-
տատեսությամբ և ռադիոյով սփռվում են ինքնատիպ մի
լրագրողի՝ Միլվա Սուքիասյանի հյութեղ հոդվածներն ու
հարցազրույցները: Դրանց թիվը հարյուրների է հաս-
նում: Սուքիասյանը տարբերվում է նաև, որ մշտապես
տեսադաշտում է պահում Հայոց եկեղեցին: Նրա հաղոր-
դումները, հոդվածաշարերն ու հարցազրույցները վեր-
ջին տասնամյակի Հայոց եկեղեցու յուրօրինակ տարեգ-
րությունն են: Եվս մի կարևոր առանձնահատկություն ու-
նի շնորհալի լրագրողը: Նրա հոդվածները գեղարվես-
տական որակ ու հնչեղություն են ստանում՝ հատկապես
հյութեղ ու ճոխ բառապաշարի հարստությամբ:

Սույն հատկանիշներն առավել տեսանելի դարձան,
երբ 2000-2001 թվականներին Սուքիասյանի հոդվածնե-
րի և հարցազրույցների լավագույն էջերն առանձին
գրքերով հրատարակվեցին՝ «Պատիվ արեք հայոց վե-
հափառներին», «Նվիրական ուխտյալներ», «Խորհրդա-
նիշ մտքի և խղճի», «Գործունեության հավատամքը
ծրագիր է և երգում»: Հեղինակը սովորական լրագրու-
յունն ու հրապարակախոսությունը, հարցազրույցներն

անգամ բարձրացրել է գրական աստիճանի: Հրատարակված այս գրքերից յուրաքանչյուրի մասին արժե անանձին ու հանգամանորեն խոսել՝ որպես ակնարկային-հոգևոր գրականության ինքնատիպ գործերի, որոնց էջերում Հայոց եկեղեցու տասնամյա պատմությունն է արտացոլվել՝ խորությամբ ու լայնությամբ: Անկաշկանդ, ազատ շարադրանք, ճոխ և հարուստ լեզու՝ գրաբարյան տեղին դարձվածքներով. ամեն բառ-պատկեր իր տեղում է: Առանձին գրույցներ իրար մոտ բերել, կապակցել միմյանց, դարձնել մի ներդաշն փունջ, որ սկիզբ, զարգացում, ավարտ ունենա՝ ուղղակի անհավանական է քվում: Այ, հենց սա արվեստի հրաշքն է, որ շատ քչերի է հաջողվում:

Գրախոսության ընձեռած սահմաններում՝ ուզում եմ անդրադառնալ Միլվա Մուքիասյանի «Գործունեության հավատամքը ծրագիր է և երդում» գրքին, որովհետև Արարատյան Հայրապետական բեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որ սույն գրքի «զխավոր հերոսն է», ուսանելի և ինքնատիպ մի անհատականություն է, որի եկեղեցական ու ազգային գործունեության շուրջ Մուքիասյանը հողվածաշարերով հյուսել է նրա դիմապատկերը: Ինչ հրաշալի է սկսվում գիրքը և ինչ հրաշալի կուռ վերջաբան է ընտրված: Այս գրքից ընթերցողի առջև օժտված մի լրագրող-հրապարակախոս-վարքագիր է հառնում: Տարբեր հողված-հարցազրույցների, տարբեր խնդիրների համաձուլվածքից մի ամբողջական, յուրօրինակ գործ է ստացվել:

Նավասարդ եկեղեցականի կյանքը և հոգևոր ու ազգային գործունեությունը վերջին տասնամյակում՝ լավագույնս արտացոլում են մեր հանրային կյանքի բազմաճյուղ տեղաշարժերը: Երկրաշարժ, արցախյան պատերազմ, տնտեսական ճգնաժամ, կաթողիկոսական ընտրություններ, քրիստոնեության 1700-ամյակ..., ահա այն մոտավոր ոլորտները, որոնցում Նավասարդ սրբազանի գործունեությունը ծավալվում է, և Միլվա Մուքիասյանի հողվածների ու հարցազրույցների սպառիչ շրջանակում

ուրվագծվում մեր օրերի լավագույն հոգևորական-մտավորական գործիչներից մեկի ամբողջական կերպարը. «Նավասարդ սրբազանը կարողանում է մարդկանց սիրտը կարդալ: Այդպիսի ընդունակությանը սրբազանը միացրել է նաև մեկ ուրիշ առանձնաշնորհ. ժողովրդի ցավին ցավակից լինել, ուրախությանը՝ մասնակից, մոտենալ և հավասարվել նրան ու այդպես խավար հոգիների կորդացած հողը մշակել և Ավետարանի սերմեր ցանել»: Նրան այսպես է բնութագրում հողվածագիրը և այնուհետև անկաշկանդ ու զգացական լիցք պարունակող ոսկեդեմիկ հայերենով պատմում նրա կյանքի և գործերի մասին: Հողվածից հողված, հարցազրույցից հարցազրույց մեր առջև հառնում է և ամբողջանում հոգևոր առաջնորդի տիպար կերպարը, որն առաջամարտիկ է՝ «խաչով, մաքով, աղոթքով, հորդորով և նույնիսկ՝ սրով»:

Միլվա Մուքիասյանի գրքում Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը բնութագրվում է որպես լավագույն և բոլորակալից այն սակավաթիվ հոգևորական իշխաններից մեկը, որի զերագույն նպատակը ազգի ու հայրենիքի բարգավաճ հեռապատկերն է: Նա ոչ միայն նյութական միջոցներով, այլև կոչով, հորդորով, աղերսով գոտեպնդում է ծանր կյանքով տոկացող հայրենակիցներին. «Մենք ազգի ծառաներն ենք և եկեղեցու զինվորները: Ձինվորը կուլի դաշտ գնում է մարտի ոչ նրա համար, որ պարզևների արժանանա, այլ հայրենիքի ու ազգի համար նահատակ դառնա»: Այնքան սրտառուչ և սրտի խորքերից է ասված, որ չես կարող դույզն իսկ կասկածել: Սա ոչ միայն Նավասարդ սրբազանի ողորքի խոսքն է, այլև Միլվա Մուքիասյանի մեծ ծառայությունը, որ այսպես պարզ ու զեղեցիկ մեզ ներկայացրել է մեր հոգևոր ու ազգային վառ անհատականություններից մեկի՝ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի ազգանվեր ու եկեղեցաշեն ավարտուն դիմապատկերը: Արի, ուժեղ հողով և լավատես սրբազան հայրն աներկմիտ ասում է. «Ազգի առաջընթացի հույսն եմ տարել հաջորդ հազարամյակ: Ես հավատում եմ մեր հայրենիքի զալիքին»:

Այս խորունկ հավատին հավատում է ընթերցողը: Միլվա Մուքիասյանի «Գործունեության հավատամքը ծրագիր է և երդում» գրքի մատուցած արժեքներից մեկն է, թերևս, հավատի այս շողարձակումն է, որ «հերոսից» փոխանցվում է ընթերցողին:

«Գրելը պետք է խոստովանություն լինի, իսկ խոստովանությունը պահանջում է գերագույն ազնվություն»: Միլվա Մուքիասյանի ինչպես նախորդ գրքերում, այնպես էլ այս գրքում սրբությանը պահպանվում է Նիկոլ Աղբալյանի այս պատգամը: Նա գրում է հյուրերը լեզվով և այնպիսի ջերմությամբ, որ ընթերցողը վերջին էջը բերքելուց հետո սիրում է գրքի հերոսին, նշանակում է, որ հեղինակը հասել է իր նպատակին:

Ընդհանրապես եմ Միլվա Մուքիասյանին և սպասում նրա նոր գրքերին:

Հովհաննես Մուրադյան

ՀՈՒՎԱԾՆԵՐ

«Միլվա պետք է խոստովանություն լինի, իսկ խոստովանությունը պահանջում է գերագույն ազնվություն»:

Միլվա Մուքիասյանի ինչպես նախորդ գրքերում, այնպես էլ այս գրքում սրբությանը պահպանվում է Նիկոլ Աղբալյանի այս պատգամը: Նա գրում է հյուրերը լեզվով և այնպիսի ջերմությամբ, որ ընթերցողը վերջին էջը բերքելուց հետո սիրում է գրքի հերոսին, նշանակում է, որ հեղինակը հասել է իր նպատակին:

Ընդհանրապես եմ Միլվա Մուքիասյանին և սպասում նրա նոր գրքերին:

Հովհաննես Մուրադյան

Այս հարցերի համապատասխանում է ձեռնարկը: Այնու
համեմատում հարկադրված է անստանալ ծախսեր
և կարգապահի համարում այնպիսի մեջ է
թելու, համարի այն հարմարություն է այն ժամ
հայտնում է ընթացակարգը:

«Սիրելի սրբազան,
Գոհունակությամբ սրտի հայտնում ենք, որ Դուք
Հայրապետական Մեր տնօրինությամբ սույն քվականի
դեկտեմբերի մեկից կոչված եք Արարատյան Հայրապե-
տական թեմի Առաջնորդական Փոխանորդի բարձր և
պատասխանատու պաշտոնին:

ՊԺՅՈՒՆԵՐՈՎ

Տարիներ շարունակ Դուք, որպես Արագածոտնի Թե-
մի Առաջնորդ, կատարեցիք Ձեր պարտականություննե-
րը՝ պատասխանատվության բարձր գիտակցումով,
խղճի մտքով, անմնացորդ սիրով և անսակարկ նվիրու-
մով: Վստահ ենք, որ Ձեր նոր պաշտոնում ստավել ջա-
նադրությամբ, որպես հավատավոր հարազատ զավակ և
ուխտապահ միաբան Մայր Աթոռ ս. Էջմիածնի, պիտի
տրանք՝ ի փառս և ի գովություն Աստծո, ի շինություն և ի
պայծառություն մեր Մայր Եկեղեցու, ի մխիթարություն
Մեզ և Արարատյան Տիրախնամ Թեմի բարեպաշտ հա-
վատացյալների:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՆԻՆԵՐԻՑ ԺԱՌԱՆԳԱԾ ԱՎԱՆԴ Է

«Սիրելի սրբազան,
Գոհունակությամբ սրտի հայտնում ենք, որ Դուք
Հայրապետական Մեր տնօրինությամբ սույն քվականի
դեկտեմբերի մեկից կոչված եք Արարատյան Հայրապե-
տական թեմի Առաջնորդական Փոխանորդի բարձր և
պատասխանատու պաշտոնին:

Տարիներ շարունակ Դուք, որպես Արագածոտնի Թե-
մի Առաջնորդ, կատարեցիք Ձեր պարտականություննե-
րը՝ պատասխանատվության բարձր գիտակցումով,
խղճի մտքով, անմնացորդ սիրով և անսակարկ նվիրու-
մով: Վստահ ենք, որ Ձեր նոր պաշտոնում ստավել ջա-
նադրությամբ, որպես հավատավոր հարազատ զավակ և
ուխտապահ միաբան Մայր Աթոռ ս. Էջմիածնի, պիտի
տրանք՝ ի փառս և ի գովություն Աստծո, ի շինություն և ի
պայծառություն մեր Մայր Եկեղեցու, ի մխիթարություն
Մեզ և Արարատյան Տիրախնամ Թեմի բարեպաշտ հա-
վատացյալների:

Առ Աստված Մեր հոգեբույս աղոթքն է, որ Ամենախ-
նամ Տերը գորակից և մարտակից լինի Ձեզ եկեղեցաշեն
Ձեր բոլոր գործերում՝ պարզելով անխաթար առողջույ-
թյուն, ծառայության երջանկություն և մնայուն ձեռքբե-
րումներ»:

Այսպիսի օրհնությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս
Գարեգին Բ-ն հրավիրեց Նավասարդ եպիսկոպոս Կճո-
յանին՝ պաշտոնավարելու Արարատյան Հայրապետա-
կան թեմը, որի տոհմաժառի արմատները պատմական
Հայաստանն է, ընձյուղները՝ Հայաստանյայց եկեղեցին,
կենսահյուրը՝ համայն հայության երազները: Այսօր
սրբազան հայրը հատել է կյանքի 45 տարիները: Նշա-

նակում է 45-ամյակ և ծննդյան տոն, իսկ ծննդյան տոնին մտերիմները նվիրում են անկեղծ սիրող ու ջերմ հոգի:

Միավասիկ, Օշականի Գալուստան տնօրեն պատմաբան Ալֆրեդ Շահնազարյանի հայկական տաք հոգին և լիահնչուն, ճշմարիտ խոսքը. «Նավասարդ սրբազանը ոչ միայն մտքի և հոգու մշակ է, այլև ազնիվ ընկեր ու բարեկամ, որի հետ աշխատելը, նստել-վեր կենալը, գրույցի բռնվելը հաճույք է և պատիվ: Կրոնասիրության և անարատ բարոյականության հետ ավելի գորեղ է սրբազանի մեջ հայրենասիրության ոգին: Այդ ոգու կանչն էր, որ 2000 թվականի ապրիլի 24-ին Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքում, որի պատվավոր քաղաքացին է սրբազան հայրը, հայոց եռագույն դրոշը հպարտորեն ձեռքին բռնած, հայրենաշունչ կոչով իր հայրենակիցներին առաջնորդեց երթի, վստահ, որ՝ «Պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հազած»: Նա ոչ միայն քաղաքագետ է, այլև հոգեբան:

Դժվար է, եթե ոչ անհնարին, թվարկել այն բոլոր շնորհակալ ծրագրերը, որոնք իրականացրել է Նավասարդ սրբազանը հատկապես Արագածոտնի թեմում»:

Նավասարդ սրբազանին հայրաբար սիրել և վստահել է երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը. «Ես հաճախ եմ գալիս Օշական, որպեսզի ոչ միայն ս. Պատարագի մատուցմամբ փառավորենք Ս. Մեսրոպ Մաշտոցի պայծառ հիշատակը, այլև իմ մտածումները, հույզերը, ինչու չէ, նաև մտահոգությունս կիսեմ Մեր հարազատ գավալի՝ Նավասարդ սրբազանի հետ: Սրբազան հայրը դարատան հիմնադրումով հաստատեց, որ հնարավոր է, առանց հիմը կրկնելու, միշտ նվաճել նորանոր ու անմատչելի բարձունքներ մշակույթի ստեղծման ասպարեզում: Վստահ եմ, որ Նավասարդ սրբազանի հետ ստեղծարար գործերով պիտի արտահայտենք մեր ժողովրդի ապրումներն ու սպասումները: Եթե այդպես չլիներ անցյալում և այ-

սօր, Մեսրոպը շատոնց ի վեր ժամանակի մոխիրներու տակ էր քաղված ու կորսված»:

Ծննդյան օրվան ընդառաջ՝ մեզանից յուրաքանչյուրը խորհում է մանկության խորհրդավոր կախարդանքի ուժով ու նորից աներկբայորեն հավատում, որ ամեն մարդ իր աստղն ունի, որի վրա հավիտենապես ապրում է իր հոգին, և բոլոր աստղերը կենդանի ու չխամրող կրակներ են անցած-գնացած օրերի:

45 տարի առաջ Կճոյան ընտանիքում փայլեց մի նոր աստղ՝ ծնվեց նրանց կրտսեր որդին, որի կյանքի ուղին ի վերուստ վճռված սլացող մի կանչ էր, մի դավանանք, որը սիրագործով մոր գրկից նոր իջած՝ դառնում է գրքի ու քղթի անբաժան ընկերը: Ուրիշ ընտրություն չէր կարող ունենալ արտասահմանում կրթություն ստացած, մի քանի լեզուների տիրապետող բարեպաշտ հոգևորականի՝ Ռուբենի որդին, որին առաջին թոթովանքների հետ սովորեցրել են. «Թող մանկանա քո շուրթերին // Մեր ալեհեր հայոց լեզուն»: Այս բնաբան-հորդոր-պատգամով դարձավ ճեմարանի արթուն ուսանող, որտեղ առավել խորացնում է հայերենի իմացությունը իր անբավ հպարտությամբ՝ գրաբարով, միջին հայերենով, արևմտահայերենով: Հայերեն լեզուն նրա մտքում ու հոգում կերպագրվում է, դառնում արյան գույն և ոչ տարազ ու նպաստում, որ երիտասարդ սանը թափանցի և խորանա գրականության, փիլիսոփայության, աստվածաբանության չուսումնասիրած բավիղներում և գերազանց պաշտպանի. «Բանք ընդդիմադրականք ի քակտումն հերձուածոց Յակոբիկ Ասորաց» ավարտաճառը:

Պարբևախառն երիտասարդը՝ «Եղիբ այն, ինչ որ ես» նշանաբանով որոնեց իր տեղը, աշխատեց նախ՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում, հետո նշանակվեց Մայր Տաճարի եկեղեցական արվեստի բաժնի վարիչ: Այդ տարիներին անհատականության գիտակցության հասնելով՝ կարողացավ գտնել ինքն իրեն, ճանաչել աշխարհը և ներքին ձայնին ունկնդիր՝ «Եղիբ այն, ինչ որ պետք է լինես», նվիրվեց եկեղեցուն ու հարազատ

ժողովրդին: Ուսումնառության, ինքնագտնումի հանգրվանները նրա համար ինքնակերտումի հասնելու խնդիր էր, որը պսակվեց, երբ 1987 թվականին ծունկի իջավ ս. Մեղանի առաջ, մյուռոնով օծվեց վսեմ ճակատը:

Նավասարդ եկեղեցականը վերացական մտածող չէ, այլ իր շրջապատի, միջավայրի մարդն է՝ կանգնած հայ իրականության առջև և զգում է, թե իր կոչումն այդ աշխարհի մեջ գործելն ու օգտակար լինելն է: Նա հոգու աչքերով տեսավ աստվածային պատգամի վեհաշունչ բանատողերը և մտատիպար ունենալով Նարեկացուն, Օձնեցուն՝ ընտրեց միանձնական կյանքը, որի շունչը հայերեն է, կամքը՝ ժիր, ազգին նվիրաբերվելու իղձը՝ անբավ: Նա բնավորությամբ համարձակ է, երբեք չի մեծամտացել, մարդահաճություն չի արել, բարի է, ներողամիտ իրեն բնադատողների նկատմամբ: Մրբազանը չապրեց լոկ անձնականով, այլ այն լցվեց հարազատ ժողովրդի ժամանակակից պատմությամբ, նրա խիղճով ու վշտերով, երազներով ու հաղթանակներով:

Միրտը վրդովեց նաև հայ եկեղեցին խոցող տագնապներով, բայց նրա հոգին միշտ լավատեսություն և բարություն ճառագայթեց. «Հայաստանյայց եկեղեցին ու ժողովուրդը պատմական հերոսական փորձառություն ունեն տոկալու չար ժամանակների հարվածներին և միաձույլ ճիգերով կազմակերպելու ինքնապաշտպանությունը, բուժելու վերքերն ու նոր եռանդով, նոր կենսունակությամբ վերանորոգելու քայքայված հավաքական կյանքը»: Հիշենք 1988թ. ադետալի երկրաշարժը, 1990-1992 թվականների պատերազմի ահավոր տարիները: Նավասարդ հոգևորականը, ասես, ծնվեց այդ մեծ դեպքերի հորձանուտից. շարեշար դժվարությունները, մաքառումները, պայքարը հասունացրին:

Նրա ձևավորումը՝ իբրև մարդ, քաղաքացի, հոգևորական, պայմանավորված էր ժողովրդի անցյալով, տվայտանքներով ու վաղվա օրվանից ակնկալած հույսերով: Նա ծնվեց իր ժողովրդի ու եկեղեցու 1700-ամյա խտացումից և իր կյանքով ու գործով, նպատակներով ու ե-

րազներով լիացրեց այդ պատմության բաց էջերը նորանոր իրագործումներով: Նրա քարոզներից կարելի է զգալ ապրած ժամանակի բարախյունն ու կշռույթը. «Հայ ժողովուրդը քաջ որդվոց ծով արյան ճանապարհով հասել է մեր օրերի լուսաբացին, պետականության կազմավորման և դարձել է իր գերագույն շահերին գիտակից ազգ, սեփական ուժերին հավատք ունեցող և ապագայի նկատմամբ լավատեսությամբ համակված հանրություն»:

Ուր էլ գնաց, որտեղ էլ բանախոսեց, իր հետ տարավ Մաշտոցյան ոգին, տարավ իր այուպապերի երազները և պաշտամունքը ազգի. տարօրինակ մի ժողովուրդ, որ ծնրադրել է ոչ թե ուժի, այլ զիր ուժ գրքի առջև, որոնք մարզված բանակներից, ամրակուռ բերդերից, քաջասիրտ զինվորներից առավել հաղթական եղան և բոլոր ճակատամարտերը հոգու ու մտքի անդաստանում շահեցին: Կեղծ խոսքերից զուրկ, պարզ ու իմաստալից քարոզներում սրբազան հայրը սկզբից հենց իր բնաբանին պատշաճ մի շարք դիմումներով գրավում է մասնավոր ունկնդիրների հետաքրքրությունը՝ կենդանի հաղորդականություն ստեղծելով իր և նրանց միջև: Նրա լեզվամտածողությունը բնութագրվում է նոր ու հետաքրքիր բառապատկերներով, որոնցով մտքի, հոգու տրամադրությունները խորությամբ բացվում ու ծավալվում են՝ արտահայտելով հայրենասիրության, եկեղեցասիրության տրամադրություններ. «Մեր ժողովուրդը գիտի հարգել ու փառավորել հիշատակը իր զավակների հերոսական ճիգերի և զոհաբերումների, որոնք արյամբ ներկեցին հայոց ազատագրական պայքարի ճանապարհը»:

Մրբազանի քարոզները փայլում են ձևի և ամբողջ հորինվածքի գեղեցկությամբ, որը ոչ միայն բխում է հեղինակի օժտվածությունից, այլև ընդհանուր նորոգիչ ոգուց: Լսելով նրա քարոզները՝ հավատացյալը լցվում է վեհ զգացմունքներով, ազնիվ և սուրբ ոգևորությամբ. «Մուրբ Աստվածամայրը մեր ժողովրդի համար մշտապես

եղել է անբասիր սիրո և անապականության խորհրդանիշ, և նրա նկարագիրը՝ որպես կատարելատիպի, տենչալի է հայ կանանց համար: Նա հայ եկեղեցու սրբերի սուրբն է, այն ընտրյալ կինը, որն իր վեհությամբ, առաքինությամբ ու մաքրությամբ արժանացավ կրելու այն սուրբ պտուղը, որ Աստված առաքեց երկիր՝ որպես համայն մարդկության փրկություն և կյանքի աղբյուր: Ինչպես Սուրբ Նարեկացին է ասում՝ Սուրբ Մարիամի կուսական կաթի մի կաթիլն անձրևեց մեր մեջ ու կյանք տվեց մեզ. «Ահա կաթի մի կաթիլ քունդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ կենաց ցօղէ ինձ, մայր...»: Ուրեմն և ապրենք Աստծուց շնորհված մեր կյանքը՝ պսակելով աստվածահաճո գործերով, որպեսզի իմաստավորվի այն և բարի հունդ դառնա մեր սրբասուրբ հողի կրծքում»:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի անվան ու պատմության հետ սերտորեն կապված երախտաշատ անունների լուսավոր հույլին կարող ենք ավելացնել Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի անունը, որի պայծառ հիշատակն արդեն իսկ քանդակված է Արագածոտնի թեմի հինավուրց կառույցների վերանորոգված ճակատներին (Օշականի դպրատուն, առաջնորդարան, Ապարանի, Գառնահովիտի, Մուղնիի, Բյուրականի, Կարփիի եկեղեցիներ...), ինչպես նաև քաղմարժեք ձեռնարկների հատվող կարմիր ժապավենների վրա:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ ակադեմիկոս Գագիկ Մարգարյանը դիպուկ բնութագրել է. «Եթե յուրաքանչյուր եկեղեցական, ազգային գործիչ Նավասարդ սրբազանի չափ հետամուտ և նախանձախնդիր լիներ, վստահաբար հայ գրականությունը, արվեստը, ինչու չէ, նաև հայ կյանքն ավելի բարգավաճ վիճակում կլիներ»:

Սրբազանը մի առանձնահատուկ գուրգուրանքով է սիրում գիրքը, դպրությունը, արվեստը, հոգևոր արժեքները, որոնց համար պատրաստ է պատարագվել: Նա զարմանալի երկյուղածությամբ է ձեռքը վերցնում արժե-

ցող, մանավանդ հնատիպ գրքերը: Ամենախոս հայացքով ապրում բարձրաճաշակ կտավների հմայքը: Հավանաբար, այդ մաքրամաքուր զգացումներն էլ նպաստեցին, որ սրբազանը տակավ առ տակավ հավաքեց ու Օշականի դպրատանը ստեղծեց գրադարան-ընթերցարան, իր տեսակի մեջ հետաքրքիր՝ թանգարան-ցուցարան:

Իսկապես, բեղմնավոր եղավ Նավասարդ սրբազանի կյանքը Արագածոտնի թեմում:

Վեղարի վարկին նախանձախնդիր սրբազան հայրը այսօր անխոնջ կերպով, պատվով ու փառքով կատարում է հովվի պարտականությունները Արարատյան Հայրապետական թեմում: Ինչպես սրբազան հայրն է մի առիթով ասել. «Հպարտ եմ, որ մեր ազգը ներկա վիճակում դեռ ունի իր մեջ այնքան բարոյական ուժ, այնքան կենսական գործություն, որ համարձակ կարող է մարդկային պատմությանն առաջարկել քրիստոնեության 1700-ամյակի մեծահանդես, մեծախորհուրդ տոնը, որը հազարավոր հույսերով, ակնկալություններով փառավոր հաղթանակի տոն է»:

Հայաստանյայց եկեղեցու և մշակույթի ու արվեստի պանծացմանն ի նպաստ Նավասարդ սրբազանի գերազնահատելի ջանքերով իրականացրած ծրագրերը մեր եկեղեցու պատմության մեջ կմնան անջնջելի, քանզի նրա դավանանքն է. «Աղոթել՝ նշանակում է գործել»:

Վստահ ենք, որ գալիք 45-ամյակում Նավասարդ սրբազանի աղոթքով պիտի օծվեն նոր եկեղեցիներ ու խաչքարեր, գրվեն նոր գրքեր ու աշխատություններ, մեռնաջրած շուրթերից հնչեն ոգեշունչ քարոզներ ու պատգամներ, երգվեն շարականներ ու օրհներգեր, և այն բոլոր բաժակները, որ պիտի բարձրացվեն սիրո, ողջույնի, արևշատության մտածումներով ու հույզերով լցված՝ պիտի ըմպեն համայն հայության երազների համար:

ՆՈՒՅՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՊՐՈՂ
ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ


Համաշխարհային կերպարվեստը աղքատ ու քերի կլիներ, եթե աշխարհահռչակ նկարիչներն անտեսեին կամ պարզապես չհանդրադառնային իրենց հավաքածուները հարստացնելու յուրօրինակ սեռի գլուխգործոցներով՝ դիմանկարներով: Բնականաբար, հայ տաղանդավոր նկարիչները նույնպես չէին կարող շրջանցել կամ հրաժարվել՝ հավերժացնելու իրենց կտավներում մեր ազգի արժանի գավակներին:

Հետաքրքիր, հիշատակության ու ցուցադրության արժանի հայ անվանի մարդկանց դիմանկարների շարք է ստեղծել Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր, պրոֆեսոր, գեղանկարիչ Արամ Իսաբեկյանը: Պետք է ընդգծել, որ նրա արվեստում ուժգին կերպով ակներև են հայկականության ոգին և ազգային ոճը: Արամ Իսաբեկյան նկարիչն ամբողջ էությանմբ շնչում և ապրում է հայարույր արվեստի մթնոլորտում, հարազատ ժողովրդի կյանքի ակունքներում, որն էլ գույն, գիծ ու պատկեր է դառնում նրա կտավներում: Նրա նկարելու եղանակն ազատ է ու անկաշկանդ՝ պահպանելով ձևերի պարզությունը:

Երախտագետ սրտով կարող ենք ասել, որ այսօրվա գորշությանն ի հակադրություն՝ մեզ օգնության է գալիս նաև անվանի նկարիչ Իսաբեկյանի արվեստը, որը դաժան իրականության կողքին արարում է այլ վսեմացած աշխարհ:

Բարձր գնահատելով արվեստի աշխարհում ճանաչված նկարչի ստեղծագործությունները՝ Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն Հենրիկ Իզիթյանը նկատել է. «Ինձ սրտամոտ են Արամի այն ստեղծագործությունները, որոնցում առավել հավատարիմ է բնօրինակին՝ դիմանկարներն ու նատյուրմորտնե-

1374-2001



րը: Նրան ավելի են հաջողվում հարազատների, բարեկամների ու գործընկերների դիմանկարները»:

Ահավասիկ, Արամ Իսաբեկյանի ընկերն ու բարեկամը՝ Արարատյան Հայրապետական քենի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, դառնում է նրա բնորդը, որն իր բնատիպարի արժանապատվությամբ ընդունել է կեցվածք՝ բնական ու անբռնագրոսիկ: Շնորհաշատ նկարիչն առանձին ջանք չի գործադրել արտաքին նմանությունը պահպանելու, դա նրան հաջողվել է դյուրությամբ: Նրան ավելի հետաքրքրել է Նավասարդ սրբազանի էությունը, անձնավորությունն ամբողջությամբ վերցրած՝ իր ապրումների, խոհերի, բնավորության, խառնվածքի, ֆիզիկական, իրական, ճշգրիտ, անկրկնելի զծերի ընդհանրությամբ: Նմանողության հետ մեկտեղ, սրբազանի դիմանկարում կարելի է տեսնել նաև ներքին ապրումներն արտացոլող մանրամասներ: Թեպետ ոչ շեշտված, բայց և կարելի է նկատել բնավորության խստություն, կամքի վճռակամություն, գործունյա, մտահոգ, աղոթասույզ հոգևորականի անձնական հատկություններ: Իսաբեկյան նկարիչը իրեն հատուկ ճշմարիտ ու անկեղծ հայեցողությամբ ցայտուն պատկերել է սրբազան հորը՝ տարբերելով ոչ միայն քանձրացական հատկանիշներով, այլև շեշտել նրա դասակարգային պատկանելությունը, կերպարի անկրկնելի անհատականությունն ու հպարտությունը: Կերպարն այնքան համոզիչ է, որ դրա մեջ իսկապես կարելի է տեսնել իր կոչումին հավատարիմ բարձրատիճան հոգևորականին:

Նկարը դիտելիս, առաջին հերթին, երևում է կենդանի արտահայտությամբ մարդ անհատը՝ բնավորության ու խառնվածքի որոշակի զծերով: Նրա դեմքը պարուրող մտահոգությունը կապված է ներքին ապրումների հետ, և քվում է բնական, ինքնաբուխ, սովորական, մարդկային: Նրա սևեռուն աչքերն արթնացնում են խոհեր, որոնց մեջ առկայծող կենսունակությունը հաստատում է, որ

նա տարված է կյանքի, իր ժողովրդի, եկեղեցու հետ կապված մտահոգիչ մտքերով, և այդ մտորումները հասնում են դիտողին: Բնավորության և խառնվածքի գծերն արտացոլված են բարեհամբույր, խոսուն, խելացի աչքերում, որոնք ուղղված են դիտողին՝ պարզ, անմիջական, անհիշաչար արտահայտությամբ: Սրբազանի դիմագծերի թախիծը թաքցնում է զսպված ժպիտ, որն այլ առիթով կարող է վայրկենապես փոխարկվել պոռթկուն, վարակիչ ծիծաղի:

Գեղանկարիչը ստեղծել է լուրջ դիմանկար, որտեղ գծանկարը և գույնն իրար կատարելապես ներդաշնակված են՝ օգնելով կերպարի անհատականության շեշտմանը: Եթե փորձենք համատեղել դիմանկարից ստացված տպավորությունը Նավասարդ սրբազանի անձնավորության հետ, կտեսնենք, որ դրանք մույնությամբ համընկնում են: Անվերապահորեն կարող ենք ասել, որ նկարը բավարար պատկերացում է տալիս նկարչի վարպետության, տաղանդի, գեղանկարչական նուրբ զգացողության և լավ ճաշակի մասին:

Ինչպես յուրաքանչյուր արվեստի գործ ունի իր ծննդյան պատմության հեքիաթը, այնպես էլ այս դիմանկարը ծնունդ է պատահական ու երջանիկ զուգադիպման, որի մարմնավորումը հոգևորն ու աստվածայինն է, որ գեղեցիկ ու պատկերավոր մեկնեց հենց նկարիչը. «Իմ արվեստը սերտորեն կապված է մեր երկրի, բնաշխարհի, ժողովրդի հավաքական կյանքի և հոգու, պատմական ու ընկերային արդի վիճակի, սոցիալական պայմանների, ինչպես նաև մեր հույսերի, երազների, իղձերի հետ: Ուստի ես չէի կարող անտարբեր մնալ Նավասարդ սրբազանի նման հետաքրքիր, իմաստուն, գեղեցիկ տղամարդուն նկարելու ցանկությունից: Այդ միտքն իմ մեջ հասունացավ և ավելի սևեռուն դարձավ, երբ ի մոտտ առնչվեցի նրա մտածումների, հույզերի, ապրումների դրսևորելու կերպին ու ոճին: Այս առիթով մի հետաքրքիր պատմություն կուզենայի հաղորդել: Հյուրերի հետ Օշական էի գնացել: Դպրատան հոյակերտ շենքում, ցուցաս-

րահում շրջելիս և ցուցանուշները նայելու ժամանակ մեզ ընկերացավ Նավասարդ սրբազանը, որն իր գունագեղ երևակայությամբ, բովանդակալից պատմություններով հիացրեց հյուրերին, այդ ժամանակ բարեկամներիցս մեկը, դիմելով սրբազանին, ասաց.

«Մարդու ոտքը դաշտում պատահաբար ինչ-որ առարկայի է կաշում: Կռանում-վերցնում է ձեռքը, որից անուշաբույր հոտ է գալիս, ուստի հարցնում է. «Ո՞վ ես դու»:

Պատասխանը լինում է. «Մովորական կա՛մ եմ»:

Մարդը հարցնում է. «Ապա ինչպես է, որ այսքան անուշաբույր ես»:

Պատասխանում է. «Իմ մեջ այն շրջապատի բույրն է, որտեղ դու ինձ գտար՝ դաշտի հոտավետ ծաղիկների, սարերի հովերի, անձրևի ցողի»:

Նավասարդ սրբազանի մեջ Հայաստանյայց եկեղեցու բույրն է՝ իր կանթեղներով, աշտանակներով, մոմի խորհրդավոր լույսով, զանգերի ծլնգոցով, խնկի, կնդրուկի բույրով, հույս ներշնչող աղոթքներով»:

Թող անհամեստություն չքվա, ես մարդկանց հետ մտերմանում, բարեկամանում եմ՝ գնահատելով դիմացիին իմաստությունը, մտածելու կերպը, բարձր ճաշակը, ներաշխարհի հարուստ ու հմայիչ բովանդակությունը: Առանց այդ բովանդակության հնարավոր չէ հոգեկան մերձեցում, որն իր մեջ ներառում է հայրենիք, արվեստ, եկեղեցի, առօրյա հոգսեր: Սրբազան հոր հետ մեր զրույցները, սեղանների շուրջ բանավեճերը օգնեցին քափանցելու նրա ներաշխարհը, տեսնելու, նաև զգալու կամային հատկանիշները, ծանոթանալու եկեղեցական սև սքեմի տակ թաքնված լուսավոր նուրբ հոգուն և այդ ամենը հաղորդել կտավին»:

Արդյունքն այն է, որ դիմանկարը բնական է, կենդանի և անկրկնելի կերպարային հատկություններով: Արամ Իսաբեկյանը և Նավասարդ սրբազանը լրացնում են միմյանց ոչ միայն արվեստի աշխարհում, այլև 1700-ամյա մեր պատմությունը կերտելու սրբազան գործում,

քանզի նկարիչը և հոգևորականը երիտասարդ են, լուսավոր մտքով, ապագան նայող, մեր ժողովրդի համար մտահոգվող ու ապրող ծրագրերով: Իրավացի է նկարիչը, եթե ոչ արվեստագետը, ապա ո՞վ պետք է պեղի ու գտնի մարդու ներաշխարհում քաքնված լավն ու գեղեցիկը, բարին և լուսավորը: Արամ Իսաբեկյանը սերունդ է կրթում, դաստիարակում, արվեստ ու մշակույթ կերտում, իսկ Նավասարդ սրբազանը հոգևոր հունդեր է ցանում նոր սերնդի հոգում:

ԵՐԱԶԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՍԱՆԱԿԻ ՀԵՏ ԵՆ ՄԻԱՀՅՈՒՄՎՈՒՄ

«Մեծ մարդիկ իրենք են իրենց համար պատվանդան կառուցում, արձանը կկանգնեցնի ապագան»:

Մեր օրերում որքան քիչ, բայց և դարձյալ կան հոգևորականներ, որոնք ըմբռնում են մարդկային բարձր կոչումը: Այդպիսի ընտրյալներից է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որը կանգնելով բարդ ու հակասական կյանքի կեղեքող պատկերի առաջ՝ անկեղծությամբ քննել է իրեն ու իր հոգին, խոստովանել իր ցավերն ու տառապանքները և «դժգոհությունից» դժգոհ՝ փորձել անեղձ ճշմարտությամբ ճանաչել իրեն և ապա իր համար ապրելու ուղիներ որոնել: Եվ կյանքի իմաստը որոնող մարդու համար մեկ անգամ ևս շոշափելիորեն մարմնացել է հավերժական ս. Էջմիածինը, մարգարտաշար մագաղաթներում զգացել շունչը հայոց պատմության, աշխարհիկ հրապույրներից առավել գերադասել իմացական լույսը:

Ապագա հոգևորականը, քարոզիչ-դաստիարակը ծնվել է 1957 թվականի սեպտեմբերի 17-ին Երևանում, արվեստներ և գրականություն գնահատող ու սիրող հոգևոր

րականի ընտանիքում: Բանիմաց և իրենց արմատներին հավատարիմ ծնողները հոգ էին տանում, որպեսզի մանկան մեջ զարգանա գիտական և քննական հայացքը շրջապատող աշխարհի, կարդացածի, տեսածի և լսածի նկատմամբ: Իբրև հնագանդ որդի, հետևելով ծնողների հորդորներին, նա յուրացնում է ժամանակի կրթության ընձեռած գիտելիքների պատկառելի պաշար, որը հետագայում լրացնում և ամբողջացնում է անդուլ ինքնաշխատությամբ, որի պտուղները շուտով տեսանելի են դառնում:

Մեծ իմաստունների ավետարանական ճշմարտությանը ամրանում, բյուրեղանում է հավատը, և այդ աներեր հավատով ու վառ երազներով պատանյակը կոչվում է կուսակրոն քահանայական ծառայության: Այդ օրից արդարև անցել է ծրագրերով ու մտահոգումներով հարուստ պարտքի ու պարտականության քսան տարի, տարիներ՝ աշխատանքի, դժվարությունների ու հաջողությունների, քանզի «խր կենաց գաղափիրը իր անձից դուրս է»: Նավասարդ սրբազանն այն հոգևորականներից է, որը հաղթահարում է դժվարությունները աշխատելով, տանջվելով, որն ընդունակ է չարությանը պատերազմ հայտարարել, որը տիրապետում և ոգևորվում է երկնավոր զինվոր Վարդապետի խոսքերից, երկրպագում է գիտությունը, մշակույթը, արվեստը: Մարդ-հոգևորական-աստվածաբան, որ պարտականության զգացումից մոռանում է իր անձը, իսկ գաղափարի ու հավատի առաջ նսեմանում է անձնական երջանկության զգացումը: Եվ վերջապես, նա այն արին է, որ պատրաստ է իր անձը տալ՝ իբրև փրկանք գերված առաքինության, եկեղեցու, ժողովրդի համար՝ հավատալով, թե՛ «Որ կորուսցե, զանձն իւր, գորցե նա»:

Եկեղեցաշինությունից, աստվածաբանությունից դուրս այն անօրինակ հրապույրը, որ ունի սրբազան հայրը, կենդանի խոսքն է՝ եկեղեցու բեմից հնչած թե՛ գիտաժողովների ամբիոններից՝ իբրև ճառ խոռոհասարակության մեջ, թե՛ իբրև պարզ գրուցվածք: Խոսքի մեծագույն

վարպետը ունկնդրի հետ կիսվում է իր հայացքներով ու կենսափորձով: Բնականաբար, լեզվի ճարտարությանը տիրապետելով, կարելի է այն ճկուն, տպավորիչ դարձնել, բայց կարողանալ թափանցել մարդկանց հոգու խորքը, տևական ազդեցություն գործել, այնտեղ մտքեր ու զգացումներ առաջնորդել, հարկավոր է ունենալ բնատուր, աստվածապարզ և շնորհք: Այդ շնորհքն ունի Նավասարդ հոգևորականը, քանզի նրա խոսքը պատկերավորությամբ, օրինակելի բնական կենդանությամբ, փոխաբերությունների անպաճույճ պարզությամբ է հազեցած, բայց դրա գլխավոր ուժը մարդկանց սիրտը կարդալու ընդունակությունն է:

Այդպիսի ընդունակությանը սրբազան հայրը միացրել է նաև մեկ ուրիշ առանձնաշնորհ. իր ժողովրդի ցավին ցավակից լինել, ուրախությանը մասնակից, մոտենալ և հավասարվել նրան ու այդպես խավար հոգիների կորդացած հողը մշակել և Ավետարանի սերմեր ցանել: Մշտանորոգ կյանքի և հավերժության ձգտող ժողովրդի զավակը քաջածանոթ է իր ժողովրդի կարիքներին և սպեղանի դնելով նրա վերքերին՝ ջանում է նրա բուժման ճանապարհները գտնել: Այդպես նա կազմակերպեց Արագածոտնի թեմը, Օշականում ստեղծեց գիտության և մշակույթի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատուն՝ իր անկորնչելի զանձերով, որ մեր մաքառման ու մեր ոգու կնիքն է ու վկայագիրը:

Նավասարդ սրբազանը իր հոգեպարար քարոզներով, մտավորականին հատուկ հաղորդականությամբ խոր տպավորություն է թողնում բոլոր սրտերի, բոլոր հոգիների մեջ: Երիտասարդ և ծեր, մտավորական թե շարքային, բոլորը լսում և կարդում են սրբազանի քարոզները, որոնք խոսում են յուրաքանչյուրի հետ, լցնում հոգու անձկությունը, դառնում անփոխարինելի աղբյուր հոգեվոր շինության և մխիթարության: Սրբազանի խոհն ու խոսքը, որ թաթախված են արվեստի, գրականության, փիլիսոփայության թանձրությամբ, հոգու դողանջ է. մի կողմից՝ ճշգրիտ վավերագրեր են ժամանակի բարքերի

համար, մյուս կողմից՝ բնութագրում են իրեն՝ սրբազան հորը՝ իբրև համարձակ, բուռն, բայց և կրքոտ ու հուզվող. «Խաղաղության բանաձևը մի ամբողջ գաղափարաբանություն է, մարդկային կյանքը ապրելու և գործելու մի աշխարհայացք՝ էապես քրիստոնեական»: Մա ոչ միայն հույզ է, պատկեր, այլև հավատամք, մեկնակետ:

Նավասարդ սրբազանի քարոզները, ուսումնասիրությունները գաղափարի անկեղծության և զգացմունքների մաքրության հոգեթով էջեր են՝ գրական մտքի թռիչքով հորինված, որոնք մեր հոգևոր ժառանգության թանկագին գոհարներ կարող են լինել: Նրա ուսումնասիրությունները հետաքրքիր, ուսանելի և արժեքավոր շատ բան են բովանդակում, իսկ աստվածաբանական, մշակութային, գիտական ծրագրերը ինչպես հայրենիքում, այնպես էլ արտերկրում արժանացել են մտավորականների, գիտնականների ուշադրությանը և անվերապահ գնահատանքին: Ահավասիկ, չուշացավ նաև գնահատականը. Ռուսաստանի Բնական գիտությունների ակադեմիան Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին շնորհեց ակադեմիայի իսկական անդամի պատվավոր կոչում: Այդ բարձր շնորհաբաշխումն ակեղծեց մեր սրտերը, ապրեցինք ազգային հպարտության ցնձազին պահ, երբ Բնության և հասարակության գիտությունների միջազգային ակադեմիան նույնպես իր դռները բացեց Նավասարդ սրբազանի առջև՝ միաձայն ու որոտընդոստ ծափողջույնով շնորհեց իսկական անդամի պատվավոր կոչումը և փոխնախագահի պարտավորեցնող պաշտոնը:

Իսկ ակադեմիայի նախագահ պարոն Ռաֆայել Մելիք-Օհանջյանը, չկարողանալով թաքցնել իր գոհունակությունը, խոստովանում է. «Մեր ակադեմիայի համար մեծ պատիվ է իր շարքերը համալրել այնպիսի անհատականությամբ, ինչպիսին Նավասարդ սրբազանն է, որն իր հետ բերում է գիտական հսկա պաշար: Նրա բարոյական գաղափարախոսության մեջ մտնում են ազնվությունը, զբարտությունը և ամենագլխավորը՝ հավատարմությունը: Նա հավատարիմ է առաջին հերթին

ինքն իրեն, այն լավագույնին, որով օժտել է նրան բնութ-
յունը՝ կյանքի իր կոչմանը: Հայարտություն ես ապրում,
երբ ծանոթանում ես նրա կենսագրությանը, իսկ Արագա-
ծոտնի քեմում ծավալած գործունեությունը բավական
կլիներ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի անունը գալիք
սերունդներին փոխանցելու համար»:

Նավասարդ սրբազանի մասին իր անթաքույց կարծի-
քը հայտնեց նաև Հայաստանի գիտությունների ազգա-
յին ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ֆադեյ
Մարգարյանը. «Նավասարդ սրբազանը զարգացած,
պատրաստված հոգևորական է, որը ոչ միայն հասկա-
նում ու գնահատում է գիտությունը, այլև աջակցում է,
քանզի նա էլ մեզ նման Հայաստանի ապագան կապում
է գիտության առաջընթացի հետ»:

Ակադեմիկոս պարոն Մարգարյանի այս համեստ գնա-
հատականը հաստատում և լրացնում է օրերս Եվրոպա-
կան համալսարանի կողմից Նավասարդ եպիսկոպոս
Կճոյանին շնորհած պատվավոր դոկտորի կոչումը, որն
արժեքավորվում է հին ու հայտնի երաշխավորագրով:

2001թ.

«ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՆՈՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ»

Այսօր տնտեսական ճգնաժամից և ներհակ գաղա-
փարախոսությունից հոգնած հայ մարդուն «հույսը» նե-
ցուկ է, «շնորհը» երկնքի քանկ նվերը... Արարատյան
Հայրապետական քեմի առաջնորդական փոխանորդ
Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որի ներհուն խոհերն
ու կյանքն անմնացորդ նվիրում են հայ ժողովրդի ինք-
նապահպանման մաքառմանը, «հույսի» և «շնորհի»
Աստծո անզին ընծան էր բերել հայ գիտնականներին, ո-

որոնք հավաքվել էին Հայաստանի գիտությունների ազ-
գային ակադեմիայի դահլիճում՝ տարեկան ընդհանուր
հաշվետու ժողովի, քննարկելու և ճշմարիտ լույսի տակ
զննհատելու կատարած աշխատանքները, արդի գի-
տության, գիտնականի և ազգային կաճառի հոգսերը:

Անշուշտ, բոլորին ծանոթ է ինչպես հանրապետու-
թյան շատ գիտական ու մշակութային հաստատություն-
ներում, այնպես էլ Հայաստանի գիտությունների ազգա-
յին ակադեմիայում ստեղծված ծանր վիճակը, կուտակ-
ված ու չլուծված հարցերը, սակայն ուրիշ է, երբ անձամբ
ես տեսնում ու լսում, հոգով շոշափում կենդանի իրակա-
նությունը: Իսկ 2001թ. ապրիլի 10-ի ժողովը, որին ներկա
էր նաև հանրապետության վարչապետը, ոչ միայն հաշ-
վետվություն էր, այլև նախաակ. քննարկել այն բոլոր մի-
ջոցներն ու հնարավորությունները, որպեսզի Հովսեփ
Օրբելու, Մանուկ Աբեղյանի, Սերգեյ Մերգելյանի, Վիկ-
տոր Համբարձումյանի, Գրիգոր Գյուրգաղյանի, Գևորգ
Ջահուկյանի և այլոց նվաճած մեծ ու սուրբ գործը, ան-
ցած ու ներկա ձեռք բերած գիտական միտքն ու համբա-
վը կարողանան շարունակել: Ապրումը, այն ապրումը,
որն ընկած էր գիտնականներից յուրաքանչյուրի ելույթի
հիմքում, իր մեջ խտացնում էր թե՛ անցյալի հուշը, թե՛
ներկան և թե՛ այդ պահին ի մի բերող ուժը, որը նաև աշ-
խարհայացք է ու ամենից առաջ՝ գործընկերների հետ
կիսվելու փորձ, նաև կոչ ու հորդոր՝ տեսնելու այն, ինչը
մնայուն, տևական ու հավիտենական է: Ի վերջո, սոսկ
հարցադրումը չէ, որ արժեք ունի, այլ՝ լուծման ձևերն ու
եղանակները: Չէ որ մեր ժողովուրդը կարող է հարստաց-
նել ոչ միայն սեփական, այլև համաշխարհային գիտու-
թյան գանձարանը նորանոր հայտնագործություններով:

Այսօր, ավելի քան երբեք, զգացիմք մեծությունը մեր
գիտնականների, որոնք, չնայած սոցիալական ծանր վի-
ճակին, անմար են պահում այդ վառարանը ի փառս մեր
ժողովրդի, մշակույթի ու գիտության: Երանի բոլոր

նրանց, ովքեր շնորհ ունեն արարելու: Ուստի Նավասարդ սրբազանը, որի խոսքը խարսխված է ժամանակակից գիտության նվաճումների վրա և սնվում է կրոնական խորունկ ապրումներից՝ նյութը, երկրային հացը ամենևին չմերժելով, մեկ անգամ ևս հստակ ընդգծում է, որ «Ի սկզբանե բանն էր...»: Այսօր գիտական նվաճումների գոյության փաստը սերտորեն միահյուսված է նաև հայոց եկեղեցու հետ:

Վերջին տասը տարիներին մեր հոգևոր առաջնորդները հովանավորել և շարունակում են արարել գիտական-ստեղծագործական աշխատանքները, ակադեմիայի հրատարակչությունը, գիտաժողովների կազմակերպումը և այլն: Ուրիշ կերպ չի կարող լինել, քանզի ս. Էջմիածնում իրենց կոչումին ու ծառայությանը նվիրված հոգևոր հայրերը, ակադեմիայում գիտությանն ու մշակույթին փարված մշակները կամար են կազմում, որի երկու սյուների վրա վառվում է գիտության, հավատի ու մեր սուրբ ավանդությունների ջահը: Այդ կամուրջը կմնա կանգուն, կենդանի և հավիտենական, ինչպես իր խոսքում վստահեցնում ու հաստատում է Նավասարդ սրբազանը. «Գիտությունների ազգային ակադեմիան ամրակուռ մի հաստատություն է, որը պսակավորումն է մեր ազգի գիտական, իմացական և մշակութային մակարդակի: Այն, որպես վեհ և ազնվական մի կաճառ, անխաթար է պահում ազգային լինելու իր բարձր կոչումը՝ չընկրկելով հարանցիկ դժվարությունների առջև:

Սակայն այսօր՝ իմացականության գերիշխանության այս դարաշրջանում, բոլորովին այլ խնդիրներ են ծառայած մեր ազգի և ի մասնավորի՝ գիտության, մեր հանրապետության մտավորականության առջև: Որպես ինքնիշխան պետություն՝ մեր ազգային իմացական արժեքներով պիտի կարողանանք մրցակցություն ստեղծել մեր միակ, սակայն և գորեղ զինատեսակի՝ իմացական ներուժի միջոցով: Մեր գիտնականները Աստվածային

անսպառ շնորհ ունեն՝ ընդլայնելու իրենց իմացական դաշտը և մրցակցության դուրս գալու աշխարհի գիտնականների հետ:

Վերհիշենք այն երանելի ժամանակները, երբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց մեր գիտության հիմնաքարն ու վեճը՝ որպես բանաձև ունենալով Հին Կտակարանի իմաստությունը: Սուրբ Մաշտոցը սպառազինեց մեր ազգի հոգեմտավոր կարողությունները, և նրա գործն արժանացավ պետական հոգացողության: Հայոց արքունիքը, հոգևորականաց դասը, շինականները ցնծությամբ շարժվեցին դեպի Ռահ գետի ափ՝ համաժողովրդակաևորեն ընդունելու գիտության գորեղ սաղմերը: Օշականի Սուրբն այսօր էլ մեզ լուսավորում ու գորացնում է և դարձնում ավելի քան երբեք լավատես ու զոտեպինդ: Ուստի կյանքի կոչենք այն ուխտը, որ մեկ դար առաջ մեզ կտակել է մեծ բանաստեղծը՝ իր խոսքն ուղղելով հայ ժողովրդին. «Մենք՝ զավակներդ օգոստոսափառ, պիտի կերտենք նոր արշալույս»: Հարկ է, որ չթերանանք ազգովի և սատարենք մեր գիտնականներին, որոնք, ինչպես Հովհաննես Երզնկացին է ասում. «Ի գիտութեան ճշմարտութեան կան եւ ոչ մոլորին ուղիղ ճանապարհէն»: Ուրեմն թող օրհնվի ձեր ուղիղ ընթացքը, Աստծո սուրբ աջի հովանավորությամբ պտղավորվեն ձեր մտքերը՝ մղելով ձեզ առույգ կենսագործունեության և ստեղծագործական բարձունքների»:

Եթե պատմական մի հայացքով ու մտքով չափենք անցյալը, իրականությունը նույնիսկ գերազանցում է երազին: Այդ պահին գիտնականների հոգում բախվում են զգացումները, և նրանց հիշողության մեջ կենդանանում է մեծ բանաստեղծի բառերի ու տողերի մեջ մարմնավորված անկեղծ ու անկաշկանդ ցանկությունը.

Հանճարդ Հայկյան, Նավասարդյան սա
տոներուն Արևափառ՝

Ալ վերածնն փլատակներն, և փառագոչ
Քրնարդ առ:
Չի մենք, հանուն Մերին, Մերմին,
բու հին Յեղիղ Մարմարեն կոյս
Մենք, Չավակներդ օգոստոսափառ,
պիտի կերտենք Նոր Արշալոյս:

Հավարվածների համար սրբազան հոր խոսքը բերկ-
րալի այն ցողն էր, որ նյութեղեն չէ, այլ իմանալի լույս:
Եվ մեր չզնահատված, չբավարարված գիտնականները,
որ հավարվել էին մեկ անգամ ևս ճշգրտելու ժամանակի
ու գիտության հրամայականի արդի պահանջները,
մաքրված սրտով ու հոգով խաղաղված տուն էին տա-
նում սրբազան հոր օրհնությունը և այն անտեսանելի,
հավատարույր ցողը, որը միշտ հայ հոգևոր պարտեզը
կանաչ է պահել:

«ՄԱ Է ՏՈՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ»

«Այս օրերուն, երբ այնքան սակավ են իրական ար-
ժեքներով օժտված հոգևոր առաջնորդները, Ձեր անունը
կկանգնի քիչ թվով ընտրյալներու կողքին, որոնք կոչված
են մեր եկեղեցին և հավատավոր ժողովրդին առաջնոր-
դելու ուղիներն»: Այս տողերը կարդալով՝ հպարտության
զգացումով ես համակվում և խորհում, թե որքան ազնիվ,
մաքուր, իր ուխտին ու գործին հավատարիմ ծառայու-
թյուն պիտի մատուցած լինի Նավասարդ եպիսկոպոս
Կճոյանը, որ արժանանար նման բարձր գնահատանքի
լիբանանյան մամուլի կողմից, երբ 1999 թվականին, Ա-
րամ վեհափառի հրավերով, սրբազան հայրն այցելել էր
Լիբանան:

Միանգամայն հստակ ու պարզ է դառնում դրվատան-
քի արժանացած հոգևորականի դիմանկարը, երբ թեր-
բում ենք էջ առ էջ սրբազանի կյանքի ու գործունեության
տարիների օրագիրը, ծանոթանում եկեղեցուն, ազգին
մատուցած ծառայությունների տարեգրությանը, որ բա-
րեխիղճ նվիրումով ծավալեց Արագածոտնի թեմում:

Նավասարդ սրբազանը ծնվել է անսակարկ, առաքի-
նի հոգևորականի ընտանիքում, սնվել և ջերմացել հայ-
րենասիրության և եկեղեցասիրության այն տաք բուրա-
յից, որի մեջ ձևավորվում է ապագա մարդն ու քաղաքա-
ցին, ազգի շահերով ապրող գործիչն ու հոգևորականը:
Սրբազանը մշտապես առաջնորդվել է, իր իսկ բառերով
ասած, «Մարդու կոչումը երկրի վրա ոչ այլ ինչ է, եթե ոչ
աշխատել, հոգնել, տառապել, պայքարել, որպեսզի հա-
ջողություններն ու գեղեցկություններն ազնվացնեն ու
սրբացնեն մեր կյանքն ու գործերը» նշանաբանով: Եվ
չնայած բոլոր դժվարություններին՝ նա կենտրոնացրեց
իր բոլոր ուժերն ու գործողությունները՝ մի ձեռքին խաչը,
մյուսին՝ Ավետարանը, քարոզեց Հիսուսի պատգամները,
վերանորոգեց եկեղեցիներ, շենացրեց թեմը, քրիստոնյա
հավատքի քաղաքակրթությունը գուգորդելով մերօրյա
առաջընթացին՝ հիմնադրեց մշակույթի, իմացության,
լույսի կենտրոն Մեսրոպ Մաշտոց դպրատունը: Այդպես
նա ստեղծեց ջերմ մթնոլորտ, սիրվեց և վայելեց հեղինա-
կություն: Նա իր գործով, խոսքով, քարոզով դարձավ ու-
սուցիչ, բարոյական և գաղափարական սրտառուչ նկա-
րագրով եղավ հայրենասիրության ու եկեղեցասիրու-
թյան խորհրդանիշ:

Սրբազանը հորիզոնի վրա երևացող այն հոգևորա-
կաններից է, որոնք խորունկ հավատքով ու պատրաստ-
վածությամբ և ուժեղ նկարագրով կոչված են դիմակայել
ու հաղթահարել բոլոր փորձությունները: Ու թերևս այս
արժանիքներն էին, որ տեսավ ու գնահատեց Հայոց
հայրապետը, հրավիրեց, սրբատառ հրամանով նշանա-

կեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, որպեսզի սիրով ու եղբայրությամբ միատեղ տրնեն ու իրագործեն մեծ և սուրբ նպատակներ, քանզի եկեղեցին արդեն սոսկ հավատի տուն չէ. այն ամբողջացնում է ազգի կենսափիլիսոփայությունը, հարատևելու կամքը, որը հնարավոր է կուռ ու ամբողջական կառույցի մեջ դնել նման եռանդուն հոգևորականի շնորհիվ:

Ու չսխալվեց Գարեգին վեհափառը, քանզի այս ամիսների ընթացքում չեղծվեց նրանց համագործակցությունը, որի հաստատումն էր այն բացառիկ միջոցառումը, երբ Հայոց հայրապետի գլխավորությամբ հոգևորականների դասը, երկյուղածությամբ ու հիացմունքով օրհնության, երախտագիտության խոսք մըմնջալով մեր լուսաբնակ ժողովրդի գավակների հավատի ամբողջական և շինարարական տաղանդի համար, օժեց Նորքի ս. Մարգիս նորակառույց վեհաշուր եկեղեցին: Հայոց հողի վրա բազում են եկեղեցիները, շատ են նաև այնպիսիները, որոնք ս. Մարգիս անունն են կրում: Այդ տաճարները, որոնցից յուրաքանչյուրը, մի ոգեաշխարհի մարմին առած, կենդանի վկան է եկած ու անցած ժամանակների, մեզ ազուցում են անցյալի հետ այդ ոգեաշխարհի ժառանգորդն ու շարունակողը լինելու զգացումը՝ փոխանցելով այն բացարձակ իրողությունը, որ մեր ազգը գիտի անշունչ քարից շքեղ տաճարներ կերտել, քարերի մեջ դնել իր հոգին, նրան փոխանցել իր շունչը, որոնք ոգեղիանում են այսօր այնպես, որ երբ տեսնես՝ պայծառացած կբացականչես. «Մա է Տունն Աստուծոյ»: Ահավասիկ Աստծո տաճարում Գարեգին վեհափառը բացառիկ ինքնամոռացությամբ կատարեց օժման ծիսակարգը, ուր Աստվածորդին, ասես, ոչ թե պատարագվում, այլ հարություն առնելով՝ երկինք էր համբառնում՝ տանելով իր հավատացյալների երազներն ու քարի հույսերը: Նման մթնոլորտում (ներկա էին պետական այրեր, հյու-

րեր արտերկրից, հին ու նոր երևանցիներ) եկեղեցու օժումը Հայոց հայրապետի ձեռամբ դժվար է երևակայել, թե ներկա բազմության համար ինչպիսի ցնծագին տրամադրություն ստեղծեց և վերածվեց միասնականության տոնահանդեսի, որը վկայում էր, որ նրանք վեհափառի կողքին են և մեծ սեր ու հարգանք ունեն իրենց սիրելի հայրապետի նկատմամբ:

Հանդիսության ժամանակ վեհափառ հայրապետի, Նավասարդ սրբազանի ոգևորիչ, հուզառատ, հայրական սիրո հորդորները, աստվածամերձ աղոթքներն ու շարականները շատ սրտեր սրբեցին ու տաճարի վերածեցին: Սրբազան կամարների տակ խնկաբույր աղոթքներով ուղեկցվող խոսքն ու խոհը, ջերմ մթնոլորտը ներկաներին համախմբեց Հայաստանյայց եկեղեցու միավորիչ խաչվառի ներքո: Հավաքվածները միասիրտ հուզումով խոնարհվում էին Հայոց հայրապետի առջև, գիտակցում Հայոց եկեղեցու ազգային դերն ու նշանակությունը: Այսօր վստահորեն կարելի է երանի տալ, որ ապրում ենք մեր հավատի վանքերի հովանու ներքո, վանքեր, որոնք ամփոփում են շունչն ու տեսիլքը մեր եռամեծ վարդապետների, և որոնց աշակերտները հետևորդներն են Հայոց հայրապետն՝ իր հոտով, ուստի մարթենք, որ փառավոր ընթանա մեր մեծ նախնիների և նրանց արժանավոր հետևորդ Ն. Ս. Օծության բացած լուսավոր ճանապարհը. «Թագաւոր երկնատր, գեկեղեցի քո անշարժ պահեա»:

Թերևս այս ակնարկն ամբողջական չէր լինի, եթե չվկայենք այն ճշմարտությունը, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և նրա հավատարիմ զինակից Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի աներկմիտ հավատքը, հույսը, գիտակից հանձնառությունը մի հրավեր են, կոչ ու հորդոր, որ միշտ պետք է դողանջեն Հայոց եկեղեցու զանգերը, որի համար չեն երկնչի և ոչ մի խոչընդոտի առջև:

ՆԱՎԱՍԱՐԴ ՍՐԲԱԶՆԵ ԲԱՅՈՒՄ Է ՀՈԳՈՒ ՓԱԿԱԳԾԵՐԸ

Գարեր շարունակ մշտահոծ ձևավորված, փնտրտուքներով ձեռք բերված քարոզախոսությունը անցյալ և առկա հաջողություններով, ընդունելի կամ վիճելի կողմերով զբաղեցրել և զբաղեցնում է նաև այսօրվա եկեղեցամշակութային միտքը, որը եկեղեցասիրություն և հայրենասիրություն խորհրդանշող անկյունաքարերից մեկն է, քանզի քարոզներում է արտացոլվում մեր իմաստուն հայրերի ապրումների, երազների, ծրագրերի, մտահղացումների ընտրանին:

Յուրաքանչյուր հոգևորական իր հոգեհարազատության կապերն ունի նախորդների հետ, որոնք հիմք են դառնում անհատի նախասիրությունների, մտքի ձևավորման ու պայծառացման, ինչպես նաև զարգացման համար, որն էլ նրան մղում է որոշակի ուղղությամբ զարգացնելու ու ինքնուրույնացնելու սեփական խոհն ու խոսքը, մտածումի ուղին: Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի քարոզների հասունացման համար առաջնորդող է եղել ինչպես մեծ պատմահայր Մովսես Խորենացու «Հավատով ուղիղ, հույսով համբերող, սիրով անկեղծավոր, ուսուցանելով անձանձրույք» հորդորը, այնպես էլ զարգացում, ճաշակ ու խոհականություն են հաղորդել համաշխարհային և հայոց մեծ իմաստասերների ծաղկաբաղ ընտիր մտքերը, իսկ Ներսես Շնորհալու, Գրիգոր Մագիստրոսի, Նարեկացու, Տաթևացու, Հովհաննես Իմաստասերի, Գարեգին Ա-ի գրքերն ու աշխատությունները եղել են նրա համար նոր օրերի Ավետարան: Եվ այդ իրողությունը պատահական չէ, քանզի երիտասարդ Նավասարդ հոգևորականի ներքին ձայնի վերարտադրման ու կերպավորման հարցում այս անուններն ու նրանց քրիստոսաբանական, դավանաբանական, մշակութային, փիլիսոփայական խորունկ մտածո-

ղությունը և գործերը, միաժամանակ՝ նրանց հանդեպ տածած սերը, հարգանքն ու ակնածանքը այն նախադրյալներն են, որոնք ձևավորեցին Նավասարդ հոգևորականի բարոյական ու գաղափարական ինքնատիպ կերպարը: Այդ վեհ գաղափարների ու ոգու հրամայականն էր, որ Նավասարդ սրբազանը Օշականում հիմնեց Մեսրոպ Մաշտոց դպրատունը, որտեղ հրավիրված անդրանիկ գիտաժողովում (ներկա էին Հայաստանի և արտերկրի աշխարհիկ ու հոգևորական գիտնականներ, մտավորականներ) հայտարարում է. «Այսօր ստույգ իրողություն է հայոց հոգևոր, ազգային, մշակութային կյանքի վերընձույզումը: Այդ ճշմարտության կենսագործման համար պարտական ենք մեր քարգմանիչներին ու նրանց արժանավոր հետևորդներին: Ինչքան լույս, ուրախություն, լավատեսություն է ներշնչում մեզ բողոքիս այս իրողությունը և ինչքան հավատք՝ դեպի մեր ժողովրդի ապագան»:

Եվ չնայած նրան, որ քարոզախոսությունը հին արմատներ ունի, սակայն սրբազանի խոսքում հնչում է քարն ու նորովի, և դա նրա անկրկնելի ու անգուգակյան կյանքի ժամանակակից ինչու և ինչպես հարցերի բացահայտման քարմության, մաքրության, անկեղծության շնորհիվ, ինչը կարևորվում է նաև մատուցման ձևի, ոճի, դիմացինին ներկայացնելու ներդաշնակ եղանակով. «Այսօր օծումն է Գվիմի նորակառույց եկեղեցու, որ կերտվեց ձեր քրտինքով արժեքավորված հողի մեջ, և այն էլ կոչվեց առանցքը հանդիսացող մեր քրիստոնեության՝ Մուրբ Հարություն անունով: Հարություն, որ նշանակում է հաղթանակ մահվան դեմ, հարություն, որ նշանակում է նոր կյանք: Այս շնորհավորանքով ուզում եմ իմ ջերմ զգացմունքներն ու սերը փոխանցել ձեզ, շաղախել ձեր զգացմունքներին իմ հույզերը և հավատալ այն հարության խորհրդանիշին, որով մեր Տերը, փարատելով մեր աչքի առաջ ունեցած ամենամեծ անձանորի վարագույրը, մեզ կյանք շնորհեց: Տարեք հարության ավետիսը ձեր տներից ներս, որպեսզի կյանքին նայեք նոր

աչքերով, վերանորոգվելու նոր տենչանքով և հաղթանակի անասկարկ հույսով ու վստահությամբ»:

Պատահական չէ, որ Նավասարդ եկեղեցականի քարոզները հազեցած են իրական կյանքի հերոսական շնչով, քանզի հայրը նրան կտակել է. «հաւատք, պատիւ, ազգ, ազատութիւն եւ լեզու», իսկ ավանդապահ մայրն իր զավակի մանկական առաջին թոթովանքների հետ կրկնել էր տալիս «իմ հայրենյաց հողի» Վարդանի անունը: Ազգային ակունքներին հաղորդակցվելը շարունակվեց հայոց պատմության դասագրքերի էջերում. ազգի հերոսական կերպարը իր հմայիչ և սրտառուչ հայրենասիրությամբ, շողափայլ գեւն ու գրահի մեջ խանդավառել է նրա մատաղ հողին: Վարդանանց ու Ղևոնդյանց խորհրդով, Անդրանիկի ու քաջ ֆիդայիների ոգով դաստիարակված հոգևորականը, առաջին իսկ քարոզից սկսած, ամենևին չտատանվեց երկնելու, ստեղծագործելու որոնումների մեջ, աշխատեց չղավաճանել իր խառնվածքին: Բնականաբար, ազատաբաղձ ոգու տեր հայ ժողովրդի զավակը իր քարոզներում շեշտը դնում է Հայոց ցեղասպանության, Արցախի դատի արդար լուծման հարցի վրա: Գեղարվեստական արհեստականությունը երբեք չթափանցեցին Նավասարդ սրբազանի էության ու խոսքի մեջ: Թերևս դրանով է հիմնավորվում, որ նրա գրեթե բոլոր քարոզներում պատասխանատվության զգացողություն կա. «Հնադարյան մեր վանքերն ու եկեղեցիները հայկական ճարտարապետության քարահյուս գոհարներ են հանդիսանում: Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող նրանցից միշտ լույս ու երկնային շնորհներ տարածվեն մեր հավատավոր ազգի բոլոր զավակների վրա»:

Սրբազանի քարոզները ծնվում են հայրենիքի, եկեղեցու ակունքներից և սնունդ առնում հարագատ ժողովրդի խոհերից ու հույզերից, նրա նկատմամբ ունեցած խանդաղատանքից ու մտահոգությունից: Ապրած ժամանակների տրամադրությունները դառնում են սրբազան հոր գրած քարոզներին ծնունդ տվող միտքն ու պատկերը

շարժման մեջ դնող պատումի շունչն ու շեշտը կարգավորող գլխավոր ազդակը: Այդպես 1999 թվականին Լիբանանում սրբազան հայրը հորդորեց տարագիր եղբայրներին ու քույրերին. «Պահեք ազգային դիմագիծը, գերծմնացեք ուժացումից, ստեղծեք սիրո ու եղբայրության կապ հայրենիքի և Սփյուռքի միջև»:

Ուսումնասիրելով Նավասարդ սրբազանի քարոզները՝ եզրահանգում ես, որ իմաստային ու արտահայտչական տեսակետից, ինչպես նաև ներշնչանքի և երևակայության մեջ առկա է մի քանի սկզբունքային տարրերի որոշակի կոտ կազմ ունեցող կենսափիլիսոփայություն, որի միջոցով նա կյանքն ընկալում է և մատուցում ժամանակի հրամայականին համահունչ, որոնք այնքան հրաշալիորեն դրսևորվում են բարի ու խաղաղ լուսաբացի մման բազմաթիվ տարբերակներով և ստեղծում նոր հայեցակետի ու դիտողականության որոշակի ուղղվածություն: Ամենակարևորն այն է, որ սրբազան հայրը կարողանում է իր քարոզներում անհատականացնել երևույթն ու զգացողությունը և ինքնարտահայտման համար գտնել իր գույնն ու գիծը, ստեղծել միայն իր պատկերը և այդ նրբաճաշակ զամմայի մեջ դնել իր հոգու էության ու տրամադրության տոների ու կիսատոների ստեղծաշարը: Ուրախալի է նաև, որ Նավասարդ սրբազանը հենց այնպես, ի միջի այլոց, սոսկ մի բան գրելու համար ավելորդ տողեր ասպարեզ չհանեց, այլ թարմ մտածումներով, անկեղծ ապրումներով հազեցրեց իր խոսքը, շաղախելով այն ավետարանական հավատով, ստեղծեց մտքի գողտրիկ հնոց, որտեղ դարբնվում է հույսի, սիրո և ապրելու կամքը: Արվեստապաշտ ու աստվածապաշտ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը ունի թափանցող միտք, գրելու հարուստ փորձ և բարձր ճաշակ, իսկ խոսքը յուրահատուկ է, պատկերավոր, թևավոր մտածումներով հարուստ, որը դեռևս ընդգրկումների ներքին խորությունը բացահայտելու տեղ ունի: Ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ մտավորականներից շատերը պիտի ջանային տիրապետել արվեստի այս ի վերուստ տրված շնոր-

աչքերով, վերանորոգվելու նոր տենչանքով և հաղթանակի անսակարկ հույսով ու վստահությամբ»:

Պատահական չէ, որ Նավասարդ եկեղեցականի քարոզները հազեցած են իրական կյանքի հերոսական շնչով, քանզի հայրը նրան կտակել է. «հաւատք, պատիւ, ազգ, ազատութիւն եւ լեզու», իսկ ավանդապահ մայրն իր գավակի մանկական առաջին թոթովանքների հետ կրկնել էր տալիս «իմ հայրենյաց հոգի» Վարդանի անունը: Ազգային ակունքներին հաղորդակցվելը շարունակվեց հայոց պատմության դասագրքերի էջերում. ազգի հերոսական կերպարը իր հմայիչ և սրտառուչ հայրենասիրությամբ, շողափայլ գեւն ու գրահի մեջ խանդավառել է նրա մատաղ հոգին: Վարդանանց ու Ղևոնդյանց խորհրդով, Անդրանիկի ու քաջ ֆիդայիների ոգով դաստիարակված հոգևորականը, առաջին իսկ քարոզից սկսած, ամենևին չտատանվեց երկնելու, ստեղծագործելու որոնումների մեջ, աշխատեց չղավաճանել իր խառնվածքին: Բնականաբար, ազատաբաղձ ոգու տեր հայ ժողովրդի գավակը իր քարոզներում շեշտը դնում է Հայոց ցեղասպանության, Արցախի դատի արդար լուծման հարցի վրա: Գեղարվեստական արհեստականությունը երբեք չթափանցեցին Նավասարդ սրբազանի էության ու խոսքի մեջ: Թերևս դրանով է հիմնավորվում, որ նրա գրեթե բոլոր քարոզներում պատասխանատվության զգացողություն կա. «Հնադարյան մեր վանքերն ու եկեղեցիները հայկական ճարտարապետության քարահյուս գոհարներ են հանդիսանում: Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող նրանցից միշտ լույս ու երկնային շնորհներ տարածվեն մեր հավատավոր ազգի բոլոր գավակների վրա»:

Սրբազանի քարոզները ծնվում են հայրենիքի, եկեղեցու ակունքներից և սնունդ առնում հարազատ ժողովրդի խոհերից ու հույզերից, նրա նկատմամբ ունեցած խանդաղատանքից ու մտահոգությունից: Ապրած ժամանակների տրամադրությունները դառնում են սրբազան հոր գրած քարոզներին ծնունդ տվող միտքն ու պատկերը

շարժման մեջ դնող պատումի շունչն ու շեշտը կարգավորող գլխավոր ազդակը: Այդպես 1999 թվականին Լիբանանում սրբազան հայրը հորդորեց տարագիր եղբայրներին ու քույրերին. «Պահեք ազգային դիմագիծը, գերծմնացեք ուժացումից, ստեղծեք սիրո ու եղբայրության կապ հայրենիքի և Մփյուռքի միջև»:

Ուսումնասիրելով Նավասարդ սրբազանի քարոզները՝ եզրահանգում են, որ իմաստային ու արտահայտչական տեսակետից, ինչպես նաև ներշնչանքի և երևակայության մեջ առկա է մի քանի սկզբունքային տարրերի որոշակի կուտ կազմ ունեցող կենսափիլիսոփայություն, որի միջոցով նա կյանքն ընկալում է և մատուցում ժամանակի հրամայականին համահունչ, որոնք այնքան հրաշալիորեն դրսևորվում են բարի ու խաղաղ լուսաբացի նման բազմաթիվ տարբերակներով և ստեղծում նոր հայեցակետի ու դիտողականության որոշակի ուղղվածություն: Ամենակարևորն այն է, որ սրբազան հայրը կարողանում է իր քարոզներում անհատականացնել երևույթն ու զգացողությունը և ինքնարտահայտման համար գտնել իր գույնն ու գիծը, ստեղծել միայն իր պատկերը և այդ նրբաճաշակ գամմայի մեջ դնել իր հոգու էության ու տրամադրության տոների ու կիսատոների ստեղնաշարը: Ուրախալի է նաև, որ Նավասարդ սրբազանը հենց այնպես, ի միջի այլոց, սոսկ մի բան գրելու համար ավելորդ տողեր ասպարեզ չհանեց, այլ թարմ մտածումներով, անկեղծ ապրումներով հազեցրեց իր խոսքը, շողախելով այն ավետարանական հավատով, ստեղծեց մտքի գողտրիկ հնոց, որտեղ դարբնվում է հույսի, սիրո և ապրելու կամքը: Արվեստապաշտ ու աստվածապաշտ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը ունի թափանցող միտք, գրելու հարուստ փորձ և բարձր ճաշակ, իսկ խոսքը յուրահատուկ է, պատկերավոր, թևավոր մտածումներով հարուստ, որը դեռևս ընդգրկումների ներքին խորությունը բացահայտելու տեղ ունի: Ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ մտավորականներից շատերը պիտի ջանային տիրապետել արվեստի այս ի վերուստ տրված շնոր-

հին, որ շռայլորեն ունի Նավասարդ սրբազանը: Տաթևացու խոհականություն, Նարեկացու անկեղծություն՝ շաղախված վաղնջական ժամանակների շարականագիրների անգարող ասերգությամբ, ահա այն նորն ու ինքնատիպը, որ կրոնական մեր հարուստ գրականության մեջ բերում է իր համեստ բաժինը Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը:

ՎԵՐԱԲԹՆԱՅՈՂ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՈԳԻՆ

Քրիստոսի երկրորդ հազարամյակի ավարտը հայ ժողովրդի համար նշանավորվեց որպես ազգային զարթոնքի ու վերածննդի մի նոր շրջան, որ հայոց վերադարձն է դեպի արմատները, պատմությունն ու լեզուն, հավատքն ու մայր եկեղեցին: Իսկ ո՞վ պետք է այսօր մեր ժողովրդի ոգին բարոյապես գորացնի, վսեմ գաղափարներով լցնի, մաքուր ոգևորության և բարձր բռնիքների ընդունակ դարձնի: Որքան ծարավ սրտեր, անմշակ անապատներ կան, որոնց եթե ավետարանական ճշմարտության մի կաթիլ ցող դիպչեր՝ կբացվեին, կպտղաբերեին:

Մեղանիս վրա դրված է Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի միջնադարի ամենախոշոր մտածողներից մեկի՝ Գրիգոր Տաթևացու «Քրիստոսաբանական հայացքները» աշխատությունը: Աշխատությունը կարդալով՝ մեր ժողովրդի հոգին կրկին բարոյապես կգորանա, կլցվի վսեմ գաղափարներով, կդարձնի բռնիքների ընդունակ: Մեծ է Տաթևացու մատուցած ծառայությունը աստվածաբանական գիտությանը, որին ժամանակի պատմիչը՝ Թովմա Մեծոփեցին, անվանում է «անմար արեգակն, երկրորդ լուսավորիչն»: Նրա թողած հարուստ գրական ժառանգության մեջ առավել հայտնի է «Գիրք հարցանցը»: Այս մեծածավալ աշխատությունն իր տեսակի

մեջ եզակի ու դարագլուխ կազմող գործ է, որն, իրավամբ, համարվում է հայ միջնադարի հարուստ և բազմաբովանդակ հանրագիտարան: Այդ գրքով շատ անվանի գիտնականներ, հոգևորականներ են իմաստասիրություն սովորել, իսկ Հայաստանի օրհասական պահերին եղել է «հայ եկեղեցու դավանաբանական անկախությունը», հետևաբար՝ հայ ժողովրդի ազգային ինքնությունը օտարացումից պաշտպանող գորավոր վահան: Գրիգոր Տաթևացու իմաստասիրության քրիստոսաբանական հայացքների գնահատման հարցով լրջորեն զբաղվել են կրոնական ու աշխարհիկ պատմաբաններ, աստվածաբաններ, փիլիսոփաներ, բանասերներ: Ահավասիկ մեծանուն մտածողի քրիստոսաբանական հայացքներն ուսումնասիրել է նաև Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը: Աշխատությունն իր գիտական ու բազմակողմանի լուրջ պատրաստությամբ չի զիջում մինչև այսօր մեզ հայտնի ու ծանոթ ուսումնասիրություններին: Ահա թե ինչ է ասում հեղինակն առաջաբանում. «Եթե Տաթևացու փիլիսոփայական ու սոցիալ-տնտեսական հայացքներն ուսումնասիրվել են հանգամանալից, ապա աստվածաբանությունը, որ հեղինակի հոգևոր վաստակի հիմնական ու գլխավորագույն մասն է, ցարդ մնում է չուսումնասիրված: Ներկա հետազոտությունը նպատակ ունի ոչ միայն լրացնել այդ կարևոր բացը, այլև Տաթևացու աստվածաբանական ժառանգության միջոցով վեր հանել Հայ Առաքելական Եկեղեցու աստվածաբանության բուն նյութը կազմող քրիստոսաբանությունը: Եվ իրապես, հայ մատենագիրներից ոչ մեկի մոտ քրիստոսաբանությունը (և ինչու միայն քրիստոսաբանությունը) այնպիսի համակողմանիությամբ և խորությամբ չի ներկայացվում, ինչպես Ս. Գրիգոր Տաթևացու մոտ»: Աշխատությունը բաղկացած է չորս գլուխներից, որտեղ շերտ առ շերտ վերլուծվում է մեծ գիտնականի աստվածաբանության ընդհանուր սկզբունքները, տրամաբանությունը, լեզվամտածողությունը: Յու-

րովի է մեկնաբանվում Բրիտանի փրկագործությունը: Արծարծված է նաև Բրիտանի բնության հետ կապված խնդիրներ, որոնք հեղինակի գրչի տակ խորհրդածության նյութ են դառնում՝ գրված համոզմունքով, խոր հավատով, նոր ու քարմ մտածումներով, հոգեշահ մեկնությամբ, բարեպաշտ զգացումներով: Տաթևացու քրիստոսաբանական հայացքների մասին իր խորհրդածությունները հեղինակը վերջացնում է հետևյալ եզրակացությամբ. «Իր դարին և դավանած ուղղությանը հատուկ սկզբունքով Տաթևացին ոչ միայն ամբողջացնում և աստվածաբանորեն իմաստավորում, վերլուծում է քրիստոսաբանության ենթակարգերը, այլև աշխատում է հավատարիմ մնալ հայրախոսական աստվածաբանության դարավոր ավանդներին՝ ընդհանրացնելով և ամբողջացնելով քրիստոսաբանության բոլոր առավել կարևոր հիմնակետերը: Տեսական վերլուծումների մեջ իսկ երևում է իր ժամանակի դավանաբանական հոգսերով ու շահագրգռություններով ապրող հեղինակը, որի համար Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանական և ոչ միայն դավանաբանական անձեռնմխելիությունը վեր է ամենայն ինչից»:

Անշուշտ, Նավասարդ սրբազանը վերջին խոսքը չի ասել, սակայն գլխավորն այն է, որ կարողացել է ընդգրկել պատմական դեպքերի ահագին տարածություն և սուր դիտողականությամբ որոշել դրանք միմյանց հետ կապող և շարժող էական տարրը: Մեր հոգևոր եկեղեցական գրականության պատմության մեջ Նավասարդ սրբազանի տեղը որոշողը նրա գրած ծանրակշիռ աշխատությունները, քարոզներն ու գիտական հոդվածներն են: Այսօր էլ սրբազանը գրասեղանի առջև է՝ ստեղծագործելու տրամադրությամբ և լի եռանդով:

Մեզ մնում է ավելացնել, որ այս շնորհակալ աշխատությունը հող է նախապատրաստում, որպեսզի հայոց աստվածաբանական միտքն արթնանա դարավոր թմբի-րից և ինքնուրույն աստվածաբանական արժեքներ

ստեղծի սուրբգրային անդաստանում: Այդ ճշմարիտ հոգևոր ավետարանական լույսով առաջնորդող գիտությանը կկարողանանք մաքառել կեղծ գիտության բարությանքների դեմ, քանզի կատարելության և մաքրագործման ճանապարհը սկսվում է ճանաչողությամբ՝ «Ծանիր գրեզ» կարգախոսով:

Մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ Նավասարդ սրբազանի աշխատությունների բոլոր ծայքերը բացահայտել, բայց մեկ հատկանիշ անհրաժեշտ է ընդգծել: Նրա աստվածաբանական ուսումնասիրությունները, որոնք խարսխված են ժամանակակից գիտական նվաճումների վրա և սնվում են կրոնական խորունկ արմատներից՝ զուգակցելով ճշմարիտ հավատի հետ, մարդուն են ընթերցողի հոգին անհավատության ժանգից, մարդուն հնարավորություն են շնորհում խորհելու, հայացքը երկրից դեպի երկինք ուղղելու:

1998թ.

ՏԱՍԸ ՏԱՐԻ ՕՇԱԿԱՆՈՒՄ

«Ինձ թվում է՝ Ս. Մեսրոպի ոգին ու շունչը շրջում ու հսկում է մեզ, իսկ մենք, խոնարհվելով ու համբուրելով մեծ ուսուցչի մարմարյա շիրիմը, մշտապես զգում ենք մեր պարտավորությունները ազգի, եկեղեցու նկատմամբ: Ամեն անգամ հեգելով իր գեղեցկությամբ անմրցակից մեր ոգու աղոթքը՝ Այր-Բեն-Գիմ-ը՝ մրմնջում ենք հայ ժողովրդի մեծագույն «Հայր մերը», իսկ մեծ Վարդապետը, այն որպես աղոթք, հասցնում է առ Աստված»: Հավանաբար այս խորհրդածությամբ ու հավատքով էր, որ 1989 թվականին Նավասարդ հոգևորականն անսաց իր կոչմանն ու ուխտին, մեծ սիրով ու եռանդով

ստանձնելով Օչականի Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վանահայրությունը այնպիսի մի պահի, երբ հայ ժողովուրդն ապրում էր հուսահատության դժնդակ օրեր, իսկ կայսրության փլուզումից հետո մշուշի մեջ էր նրա ապագան:

Այդպիսի մի պահի հայրենասեր անհատի՝ Նավասարդ Կճոյան եկեղեցականի մտածոնները չէին կարող անտարբեր մնալ և շրջանցել ժողովրդի հոգսերն ու ցավերը, ակնկալիքները: Նա հայտնվում է հայոց կյանքի բեմում, որտեղ իր ուրույն, սրտամոտ ճանապարհն է գտնում՝ հայ եկեղեցուն ու ժողովրդին ամբողջովին ծառայելու ասպարեզում. մի անհանգիստ շրջան, որը փորձաքար եղավ ու ինքնահաստատման միջոց թե՛ հավատավոր գործչի և թե՛ ազգի համար: Ծանր ու պատասխանատու տարիներն ինքնագտնումի ու գոյապայքարի շրջան էին ասես, որ հաղթահարվեց բացառիկ կամքի և օժտվածության շնորհիվ:

Լայն մտահորիզոնի և հետաքրքրության տեր անհատականությունը, տիրապետելով խոսքի հմայքին՝ բարոզների, հորդորների, ճառերի հիմնական գաղափարական բովանդակությանը, աստվածապաշտությունը և հայրենասիրությունը նպատակամղեց ժողովրդի կենսական ուժերը ոգեկոչելուն: Նրա բառ ու բանից առիմքնող սուրբ օրհնություն է կաթկթում և կազդուրիչ լիցք հաղորդում՝ մարդկանց հոգիները մի տեսակ բարոյական մագնիսացման ենթարկելով: Այդպես նա կարողացավ սրտեր նվաճել և իր շուրջը համախմբել հավատացյալ ու անհավատ զավակներին: Անբասիր նկարագիր, շրջահայաց սկզբունքայնություն, որոնք զուգակցվեցին արդյունաշատ գործունեությամբ, որին գումարվեցին անձնական հմայքն ու խորագիտությունը. նա իր ջանքերը միավորեց մյուս հոգևորականների ճիգերին՝ հավատացյալ ժողովրդին 70-ամյա թմբիկից դուրս բերելու հաստատուն ճանապարհ: Աշխատելու բնածին ընդունակությունը, խառնաշփոթ իրավիճակներում կողմնորոշվելու կա-

րողությունը, որ բնության շնորհած պարզևն է՝ նեցուկ եղավ եկեղեցասեր հոգևորականի գործունեությանը և ապահովեց ու բազմապատկեց հաջողությունները, որոնք բանվեցին կաթիլ-կաթիլ, աննկատ, բայց մի օր տեսանելի դարձան կյանքի բոլոր ոլորտներում: Այսպես, ամենքիս աչքի առջև ծնվեց ու կայացավ իսկական առաջնորդը:

Եվ ահա, 1996 թվականին, Աստու կոչումով, իր ժողովրդի ցանկությանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի սրբատառ կոնդակով Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը նշանակվում է Արագածոտնի թեմի առաջնորդ: Թեմակալ առաջնորդի անմիջական նախաձեռնությամբ վերանորոգվեցին ու աղոթքի տաճարների վերածվեցին Մուղնիի ս. Գևորգ, Աշտարակի ս. Մարինե, Թալինի ս. Աստվածածին, Մելիք գյուղի ս. Հովհաննես, Տեղեր, Ապարանի ս. Խաչ եկեղեցիները: Հատկապես Օչականը դարձավ շինարարական մի մեծ հրապարակ, որտեղ կառուցվեց մեր հույսերն ու ակնկալիքները մարմնավորող եռամեծ սրբին արժանի առաջնորդարանը: Նավասարդ սրբազանի իմաստուն, եկեղեցական բարեկարգումներին հաջորդում են ինքնատիպ ազգային ծրագրեր, որ թեմի հոգևոր կյանքին հաղորդում են նոր բովանդակություն: Այս իրադարձությունների հաստատուն վեմի վրա վեր է հառնում Մեսրոպ Մաշտոց դպրատունը՝ մի շքեղ կառույց, որի սյունազարդ կամարների տակ, մեր եռամեծ սրբերի արձանների տիրական հայացքների հսկողությամբ (3 մ բարձրությամբ դահլիճում դրված է ս. Սահակ, ս. Մեսրոպ և Վռամշապուհ արքայի արձանախումբը) ծնունդ է առնում պատմական, մշակութային, բանահյուսական, գիտական միջոցառումների հույլ՝ զարկ տալով հատկապես պատմամշակութային մատենաշարի հրապարակման այնքան օգտաշատ գործին: Սրբազանը շատ բարձր է գնահատում ներկա մշակութային արժեքները: Նրա համար մեծ կարևորություն է դարձան հրավիրել գիտաժողովներ, սիրում է մեծ

մտածողների հետ քննարկել, գրուցել մեր ժողովրդի վաղվա օրվա խնդիրների շուրջ: Նրան հավասար չափով հետաքրքրում են գրականությունը, նկարչությունը, երաժշտությունը: Թերևս այդ մեծ սերն էր, որ ստիպեց սրբազանին դարձանալ քաղաքացիական գործերի արվեստի գործերի ցուցահանդես, որտեղ պետք է հավաքվեն մեր ժողովրդի 5000-ամյա պատմությանը վերաբերող անկորնչելի արժեքներ, հիմնել իր տեսակի մեջ եզակի գրադարան: Դարձան գոյության փաստը սերտորեն միահյուսված է սրբազան հոր անվան հետ: Տասը տարիների տառապանքը հավասարագոր է երկունքի ցավի, որը պասկվում է խնդությամբ: Նրա ջանքերով ստեղծվեց հրաշք մանուկներից կազմված ժողովրդական երգի-պարի համույթը, որպեսզի դրանով կարողանա ցրել մեծն Թումանյանի մտահոգությունը. «Իրենց փառքերը՝ ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները՝ մոռացության, անհայտության մեջ»: Նրանք տարբեր բեմերում ներկայացրել են հայ ժողովրդի կենցաղը, բարոյական ըմբռնումները, արտացոլել բազմաթիվ տոներ ու հանդեսներ, ծեսեր ու ծիսակատարություններ, որոնք փառաբանում են ազգի հաղթանակները, ձեռքբերումները, հոգևոր պատկերացումներն ու ապրումները: Սրբազանը իրեն հատուկ հետևողականությամբ և գործիմացությամբ, ոգեղեն մտածումներով առաջնորդարանում իր շուրջն է հավաքում երեխաների, երիտասարդների՝ խոսում, բացատրում, զինում նրանց հավատքով, գիտությամբ, մեր նախնայաց ոգով և ապագա առաքելության կրակով: Այս տարիների ընթացքում սրբազան հոր հայացքի, խնամքի ներքո հասակ է առնում, աճում, ամրապնդվում եկեղեցասեր նոր սերունդ, տոգորված նրա հավատով, ծառայության ոգով. «Որդի հարազատ զննանութիւն հօրն բերէ», ուստի սրբազանն ուրախ է, որ հոգևոր որդիներն իր տեսիլքով և օրինակով խոստումնալից ապագայի շարունակողներն են լինելու:

Բնականաբար, բարձրաճաշակ հոգևորականը, որը օժտված է բնատուր աստվածային ձայնով, չէր կարող մոռանալ մեր հոգևոր երգերը: Ուստի ընդառաջ գնալով քրիստոնեության 1700-ամյակին՝ Լոնդոնում իր, Մայր Աթոռի և Արագածոտնի թեմի երգչախմբի մենակատարների հետ համատեղ ձայնագրել է հայոց պատարագը, շարականները, որը պիտի սփռվի աշխարհով մեկ: Սրբազանը հայ եկեղեցու վերականգնման աշխատանքներում և հայ ժողովրդի կրոնաբարոյական դաստիարակության գործում մեծ և պատասխանատու դեր է հատկացրել կրոնական մամուլին, որոնք ժամանակաշրջանի արտացոլողն ու վավերացնողն են: Այդ մտահոգությամբ ստեղծեց Արագածոտնի թեմի պաշտոնաթերթը՝ «Շողակն ամսօրեայ»: Թերթի էջերից միշտ հնչել են սրբազան հոր քրիստոնեական շնչով, հայ կյանքի մտահոգություններով շաղախված հայրենաբույր և հոգելից պատգամներն ու խոսքը:

Նավասարդ սրբազանը չունի անձնական կյանք: Նա ապրում է իր եկեղեցու, ժողովրդի ամենօրյա ուրախություններով, տեսիլքներով: Նրա օրը բացվում է հայ եկեղեցու և ժողովրդի բազմազան մտահոգություններով: Նրան անհարիր է անտարբերության ամեն մի դրսևորում, և երբ ընկալում ես նրա գործունեության հավատամքը, որը ոչ միայն ծրագիր է, այլև երդում, ապա գիտակցված ներքին հավատով ու վստահությամբ ես ապավինում սրբազանի խոսքին, որը տրոփում է ժամանակի ռիթմով և հոգևորականին հատուկ պատասխանատվությամբ:

Նրանք, ովքեր պատիվ ու բախտավորություն են ունեցել աշխատելու սրբազանի անմիջական հովանավորության ներքո, անշուշտ, նկատած կլինեն հետևողական, համառ այն աշխատանքը, որ սրբազանը հանդես է բերում եկեղեցական, քարոզական, մշակութային, վարչական գործունեության բոլոր բնագավառներում, որի համար չենք ասում շնորհակալություն, այլ ասում ենք՝

օրհնյալ է ծնունդդ, սրբազան, թող շնորհավոր լինի և նորանոր եկեղեցական ու ազգօգուտ գործերով զարդարվի լուսապսակ Ձեր ճակատը: Ժողովրդի իրագործումներն ու հայրենիքի ձեռքբերումները նվիրյալ անհատների մեղվաջան, կաթիլ-կաթիլ կուտակվող ջանքերի արդյունք են: Նման նվիրյալ անհատներից է սրբազան հայրը, որ համեստորեն իր գործն է անում՝ նպաստելով Հայոց եկեղեցու և մեր նորոգ պետության ինքնահաստատմանը:

2000թ.

«ԵԿԱՅՔ ՇԻՆԵՍՅՈՒՔ ՉԽՈՐԱՆՆ ԼՈՒՍՈՅ»

Մարդու հոգու բնատուր հարստությունը կազմող զգացմունքներից ամենից նվիրականը, տիրականը հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունն է, և մեր եկեղեցին ու հայրենիքը, որ մոխիրների, ցավի ու արցունքի միջից հարյավ, ավելի շատ կարիք ունի նվիրումի ու գոհաբերության: Եկեղեցին հնուց անտի միշտ եղել և մնում է մշակույթի, իմացության, լույսի կենտրոն, որի ծոցում վերջերս հիմնվեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը, որն առաքելություն ունի՝ կամրջել հայոց ազգային լինելության երեք հազարամյա անցյալը գալիք ժամանակների հետ: Այդ գիտակցությամբ, քրիստոնեական հավատքի ջերմությամբ, հայկական հոգու պայծառությամբ, ինչպես նաև անարատ սիրով ու հավատարմությամբ և հայրապետական տնօրինմամբ Օշականում հաստատված Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը նոյեմբերի 18-ին, Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ, հավաքվել էին մերօրյա կաճառականներ Գրիգոր Խանջյանը, Գա-

գիկ Մարգարյանը, Գևորգ Տեր-Վարդանյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Ալֆրեդ Շահնազարյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Արտաշես Մաթևոսյանը... Առաջնորդանիստ Օշականը հյուրընկալել էր մտավորականների լուսն մի փաղանգի, որպեսզի մեկ անգամ ևս միակամ ու միասիրտ սրբազանն ու ճշգրտեն դպրատան գիտական, քարոզչական աշխատանքների շրջանակը՝ ոսկեդարից մինչև մեր օրերը: Թերևս պատմությունն արձանագրի այդ օրվա հավաքը՝ որպես հերթական գիտական ժողով, բայց այնտեղ տեղի ունեցավ բացառիկ ու գուցե աննախադեպ մի մանրամասն, որը նույնքան արժանի է հիշատակման, քանզի խորհուրդ և իմաստ ունի իր մեջ: Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մկրտվեց ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը, որը, իբրև անգոր մի մանուկ, աշխարհ է եկել՝ մի քանի տսվանյակ տարի ճանապարհորդելու ժամանակավոր այս կայարանում, որ երկիր ենք անվանում: Իր կոչմանը և ճակատագրին հետևելով՝ հասցրել է շատ նշանակալի գործեր կատարել, քափանցել անցած դարերի իմաստության խորքերը, երևակայության թռիչքով անտեսանելի աշխարհներ քնակոխել, կամավոր նվիրվել գիտությանն ու ժողովրդին, որպեսզի ապրի մերձավորների սրտում և պատմության մեջ: Ու հանկարծ առաջացած տարիքում նկատել և զգացել է, որ իր կյանքում մեծ վրիպում է տեղի ունեցել: Նրան պակասել է ամենագլխավորը՝ այն դրոշմն ու մեռոնը, որ հային առ այսօր հայ է պահում: Պատահական չէր, որ սրբազան արարողությունից հետո, կնքահոր՝ Վլադիմիր Բարխուդարյանի և Նավասարդ սրբազանի կողմից արդեն առաջարկված և ընդունված մկրտության անունով, Լևոն Խուրշուդյանը խոստովանեց իր վաստակին ու կոչումին յուրահատուկ հակիրճությամբ. «Ես ազդվեցի: Մի գիրք եմ գրել՝ «Ազգային գաղափարախոսություն», կարծում եմ՝ այդ գիրքը նորից պիտի գրվի»: Հուզված են նաև հյուրերը: Ինչպես Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ Գագիկ Մարգարյանը խոստովանեց. «Նավասարդ սրբա-

զանը ոչ թե քարոզում է, այլ սիրով խոսք ու գրույց է անում իր ունկնդիրների հետ: Մրբազանը իր գրույցներում օգտագործում է նույն կրոնական քեմաները՝ մեղքից խուսափում, գոջում, սրտառաք բարեգործություն և այլ հոգեչափ խրատներ, որ վեր է հանում հոգիդ: Չանապ նրա հորդորներին՝ նշանակում է կորցնել կարևոր մի բան, որը չափանիշ է կեցության համար: Վստահ եմ, որ սրբազան հայրը հաջորդ անգամ ինձ է մկրտելու):

Այստեղ ուզում ես հասկանալ Նավասարդ սրբազանի խոսքի, մտքի ուժը, որի ցանած սերմերը տեղ գտան մեր գիտնականների հոգում և ծիլ տվեցին: Տարիներ շարունակ կար եկեղեցի, բայց չկար այն մղիչ ուժը, որը կարող էր՝ նպաստել հոգու վերափոխմանը: Մրբազանը, անշուշտ, նպաստեց յոթ տասնամյակ ապրած մարդու վերածննդին: Ու վերստին համոզվում ես սրբազան հոր հրապարակավ հայտնած՝ «կամօք յօժարութեամբ սրտի» քահանայական քաղցր լուծը ստանձնելու իր պատրաստվածությունը, որ նախ՝ սրտի և հոգու թելադրանք է և եկեղեցուն ու ազգին նվիրաբերվելու անսասան ընծայաբերում: Անկասկած, հոգևորականի կոչումը դժվարին է և արգասարեր: Վստահաբար կարող ենք ասել, որ Նավասարդ սրբազանը եկել և լրացնում է վեղարավորների շրթայի մի կարևոր օղակ, որ ավելի պայծառ գիտակցությամբ և տքնաջան նվիրումով, պատվով ու սրբությամբ ծառայի Աստծուն, ս. Սեղանին, հայ հավատավոր ժողովրդին: Գեռ որքան պապակ սրտեր պիտի ջերմանան սրբազան հոր հորդորներից. «Աշխատենք, որ Աստվածահաճո լինեն մեր սրտերը՝ իբրև Տիրոջ տաճար և աղոթենք Ներսես Շնորհալու հետ. «Հնությունների նորոգող, նորոգիր և ինձ», և բռնեն այն ճանապարհը, որով անցավ ծերունագարդ գիտնականը»:

Ավարտվում է օրը: Մեծապատիվ հյուրերը հեռանում են՝ հաքստացած օրվա խորհրդով, խանդավառված ու բարձր տրամադրությամբ: Իսկ Նավասարդ սրբազանը մնում է մեծ ու փոքր հոգսերի հետ: Նա գիտակցում է նախաձեռնած գործի՝ դպրատան կայացման դժվարու-

յունները, որոնց հաղթահարումը ջանք, եռանդ ու համբերություն է պահանջում: Ժամանակ կանցնի, տարիները կրողրեն, թե Աստված կամենա՝ «դպրատունը կդառնա հայ ժողովրդի կրոնաքաղաքական մաքառման հարուստ պատմությունը հետագոտող մի հաստատություն և զեք մասամբ կհատուցի եռամեծ սրբազան հայրերի հանդեպ մեր ժողովրդի 1600-ամյա պարտքը», այնժամ տարիների հեռվից, թերևս, այս օրվա խորհուրդը առավել իմաստավորվի:

Մաղթելով նորաբաց հոգևոր հաստատությանը հաջողություն՝ հավատանք նրա անբապինդ հիմքերի անսասանությանը, որ ժամանակի մեջ պիտի արդյունավորվի: Գիտական այրերը, թեմակալ առաջնորդը, հյուրերը, անշուշտ, հավատում էին և ունեին գիտակցությունը, թե զալիք լավ օրերի համար բարի մի գործի սկիզբ են դնում, որ պիտի օրհնի Աստված և թույլ չտա, որ տկարանա: Թող բազմապատկվեն ազգային նման հաստատությունները, որ մեր հոգևոր զանձատներն են դառնալու զալիք ժամանակներում: Մեծն Մաշտոցի սրբալույս նշխարները, որ հանգչում են Օշականի հողում, կարծես ավետարանական հայտնի առակի խորհուրդն են կրկնում, թե ցորենի հատիկը՝ եթե չմեռնի հողի մեջ՝ չի բազմապատկվի: Մաշտոցյան ոգին ու գործը վստահաբար արդյունավորվել ու բազմապատկվել էր այդ օրը՝ տալով մեկին երեսուն, մեկին՝ վաքսուն և մեկին՝ հարյուր:

«ՄԻ ԱԶԳ, ՈՐ ՄԵՐԺԵԼ Է ՄԵՌՆԵԼ»

Իմաստուններն ասում են, որ մեծ մարդիկ ծնվում են հենց այն ժամանակ, երբ պատմությունը նրանց ոգեկոչում է, և ծնվում են, որպեսզի նոր լուսավոր մայրուղիներ բացեն իրենց ժողովրդի առջև:

1997 թվականի դեկտեմբերի երկուսին Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի գլխավորությամբ Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը լուսավոր ծրագրերով և խոհերով գիտաժողովի էր հավաքվել հայոց ազգի ընտրանու մի մասը՝ շաղկապելու միմյանց հայոց հինգհազարամյա պատմության երեկն ու այսօրը: Օրհնանքից ու մաղթանքից հետո Ամենայն Հայոց հայրապետը համակողմանի և խորությամբ շարադրեց իր մտածումները նորաստեղծ դպրատան կենտրոնի գործունեության ուղեգծի շուրջ և խոսքը մասնավորելով՝ ասաց. «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անուամբ մկրտուած դպրութեան տունն Օշականի մէջ ահա դռները բացեր է իր առաքելութեան սկզբնավորման համար: Սուրբ Մեսրոպի նուիրական եւ սրբաճաճանջ շիրիմը այցելող ուխտավորի համար այլևս կարելի կդառնայ նրա գերեզմանի կողքին այցելել մեծ սուրբի անունին նուիրված տունը եւ այնտեղ հաղորդվիլ Մեսրոպ Մաշտոցի եւ քարգմանիչ վարդապետներու, մեկ խօսքով՝ մեր ոսկեդարեա ժառանգութեան արժեքներուն հետ: Մերունդներ, դուր ձեզ ճանաչեք Օշականի մասունքացեալ շիրիմէն: Այն պետք է տարբերվի մնացած գիտական օջախներից (ակադեմիա, մատենադարան, քանգարաններ): Թող հավաքվի ոսկե դարի մեր քարգմանիչների ժառանգութիւնը: Այցելուն, ոտք դնելով դպրատուն, պիտի զգա մաշտոցեան ոգին ու շունչը»:

Հիրավի, դպրատանը հրավիրված գիտաժողովը հաստատեց, որ այն ոչ թե քարեղեն իրողություն կամ քանգարան է, այլ դպրատան պոնոագարդ կամարների տակ ապրում են խոհն ու խոսքը, կնդրուկն ու աղոթքը: Հատկապես դպրատանը շունչ ու ոգի է տալիս մեծ հայր՝ Ուսուցչապետը: Կենտրոնը նաև ծառայելու է գիտաժողովների, ուսումնասիրությունների, շնորհանդեսների համար: Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը հիշեց, թե ինչպես Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ շնորհելիս՝ այն տրվում էր բակում, ոտքի վրա, որ պատշաճ չէ:

Ահա այս փառավոր տաճարում հնարավորություն է ընձեռվում Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակը շնորհել իր անվան համբավին վայել միջավայրում: Իսկ Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Սեն Արեշատյանը շնորհավորեց Վեհափառ հայրապետին, ներկաներին և հայ ժողովրդին՝ հաստատելով, որ այս մշակութային կենտրոնը չկրկնի մյուս հաստատություններին, ունենա իր ուրույն դեմքն ու դիմագիծը: Նոր առաջարկություններով, ծրագրերով հանդես եկան ակադեմիկոսներ Գագիկ Սարգսյանը, Պիոն Հակոբյանը, Գրիգոր Խանջյանը... Գիտնականների յուրաքանչյուր ելույթում, կեցվածքում զգացվում էր պատկառանք և պատասխանատվություն անցյալի անկրկնելի մեծությունների և անկորնչելի արժեքների հանդեպ: Խնկարույր աղոթքներով ուղեկցվող խոսքն ու հորդորը ստեղծել էին սիրո, միասնության բարձր պատասխանատվություն, ցանկալի մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր գիտնական կարծես ներքուստ հաշիվ էր տալիս աշխատատար ու պատվավոր այն գործի համար, որին կոչված է կամոքն Աստծո: Այդ պահին կարծես վերադարձել էին եռամեծ հայրապետների ճախնի փառքն ու իմաստնությունը:

Կենտրոնը յուրահատուկ է նրանով, որ կրոնականը, հոգևորը և աշխարհիկը կապում է ավանդույթների հետ: Գիտնականները հավաստեցին, որ այս քարեղեն փառավոր շինությունը բովանդակությամբ կիմաստավորվի, որը պատշաճում է անվանադիր մեծն Մաշտոցին ու նրա շավղով քայլող հավերժի ճամփորդներին:

Գարեգին վեհափառը պարտավորեցրեց հավաքված գիտնականներին, որ բազմաթիվ ցուցանմուշների հետ կենտրոնին նվիրեն նաև իրենց հեղինակած գրքերը՝ ընծայագրով: Այնուհետև հրավիրյալները հավաքվեցին հանդիսությունների սրահ, որտեղ շարունակվեց հոգու, մտքի, խոհ ու խոսքի, օրհնության տոնահանդեսը, որ ծայր էր առել դպրատան կամարների ներքո: Հատկապես տպավորիչ էին Վեհափառ հոր համով պատմությունները. «Ես իմ սաներին մարդասիրության, բարութեան

յան նվիրված դասերը անց են կացրել որբանոցում, ծերանոցում, որպեսզի նրանք տեսնեն, զգան և ըմբռնեն հոգու ցավը»:

Իսկ Ղարաբաղյան հարցի շուրջ ծավալված գրույցը և Վեհափառ հայրապետի պարզաբանումները, խտացված հայրենասիրությամբ, փիլիսոփայությամբ և մտքի թռիչքով, մի տեսակ խաղաղության և թարմության ցող բերեց ներկաներին:

Ամենահուզիչ հանդեսը Վեհափառ հայրապետին և գիտնականներին սպասվում էր եկեղեցու բակում, որտեղ Արագածոտնի թեմի փոքրիկ երգիչների համույթը համեստ մի ծրագրով ողջունեց բարձրապատիվ հյուրերին, որը, կարծես, հաստատում էր վերջերս Լոնդոնի Օքսֆորդի համալսարանում Հայոց հայրապետի կարգացած դասախոսության այն միտքը, թե. «Մի ազգ, որ մերժել է մեռնել՝ կայրի հավերժորեն»:

Այնտեղ, ուր վերջանում է խոհը, սկսվում է ճարտարապետությունը և երաժշտությունը:

Արագածոտնի թեմում տեղի ունեցած միջոցառումը հոգեպարար էր և անկրկնելի: Դ-ա մի պահ էր, որտեղ խոհն ու խոսքը, երաժշտությունն ու ճարտարապետությունը, աղոթքն ու բանաստեղծությունը, երազանքն ու իրականությունը միաձուլվել, պարզ ու նախնական մի դաշնություն էին ստեղծել՝ ոգու, հավատի և հավերժության դաշնություն... Արագածոտնի թեմի առաջնորդը լիահույս է, որ իր սկսած գործը ավարտին կհասցնի, որովհետև թիկունքում մեծն Մաշտոցն է, առջևում՝ շնորհաշատ Ամենայն Հայոց 131-րդ կաթողիկոսը, իսկ երիտասարդ առաջնորդը լցված է կառուցելու, ստեղծելու անուրանալի ձիրքերով, որի անխոս վկան է նորահիմն Մեսրոպ Մաշտոց դպրատունը:

Բնականաբար, հյուրերը չէին կարող չտեսնել և չզգալ այն կարևոր առաքելությունը, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ այսօր իրականացնում է Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը: Սրբազան հայրն իր ծրագրերն անում է

քրիստոսավանդ սիրով և, որ կարևորն է, նրա գործը և խոսքը համոզում են մեզանից յուրաքանչյուրին: Անկարելի է լսել սրբազան հոր ոգևորիչ, սրտաբուխ խոսքը և չարվել այդ ուժին, ու, թերևս, սրբազանի խորունկ խոսքի ուժն էր, որ պարոն Բարխուդարյանը պիտի խոստովաներ. «Սրբազանի խոսքը խորք ունի և կարողանում է սրտեր նվաճել»: Իսկ 70-ամյա ակադեմիկոս Լեոնորուշ Խորշուդյանի կյանքում տեղի ունեցավ հրաշքի համագոր վերածնունդ. նա, ներշնչված օրվա խորհրդից, որոշեց ու մկրտվեց Մեսրոպ Մաշտոց եկեղեցում: Հյուրերը հեռանում էին՝ իրենց հետ տանելով օրվա խորհուրդը, ապագայի հույսը, և ինչպես ակադեմիկոս Լեոն Հախվերդյանը հակիրճ ու պարզ բանաձևեց. «Վեհափառ տեր, սրբազան հայր, մենք խոնարհվում ենք Ձեր առջև, մենք Ձեզ սիրում ենք»:

Իրոք, սիրո և ակնածանքի օր էր, քանզի ազգի մտքի ու հոգու մեծերն էին իրար գլխի հավաքվել, ասես, մեծն Մաշտոցի հրավերով, և տեղին է հիշել ավետարանական կարճառոտ ու դիպուկ ասույթը՝ «Բարուք է մեզ աստ լինել...»:

ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՕՐՀՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԸ

Ս. Էջմիածինը պատկանում է բոլոր հայերին անխտիր, համայն հայ ժողովրդի զավակներինն է իբրև սիրո ոստան և լույսի փարոս, իբրև միության կամուրջ և փրկության ճանապարհ: Համերաշխության և ազգային ներքին միության ոգին պետք է տարածվի ոչ միայն եկեղեցում, այլև նրա սահմաններից դուրս, մեր ժողովրդի ազգային կյանքի, նրա կազմակերպությունների վրա: Այս է հրամայականը թե՛ մեր եկեղեցու, թե՛ Մփյուռքի հայության:

Արդարև, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա, ասես մեկ անգամ ևս իր հավատացյալներին վստահեցնելով, որ սիրալիր են երկու աբոռների հարաբերությունները և հայ եկեղեցու կանոնների, ավանդությունների ու միության սկզբունքի վրա խարսխված, հրավիրել էր Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբան, Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին Անթիլիաս, որպեսզի հայ եկեղեցու ամենասիրված Վերափոխումն Աստվածածնի տոնին սրբազանը պատարագ մատուցի լիբանանահայ մեր քույրերի և եղբայրների համար:

Նավասարդ սրբազանը ճշմարիտ քրիստոնեական սիրով այցելել է Լիբանան, տանելով իր հետ Հայաստանից օրհնություն ս. Էջմիածնից, բարի հիշատակներ մեր սուրբ տաճարներից, որոնք մեր ժողովրդի իղձերի ու ակնկալիքների լուռ վկաներն են, հավատի, հույսի մշտավար կանթեղները, որ պատմության դժնդակ կեանքներում ուղեկցել և ապրեցրել են մեզ: Իսկ Օշականի Մեծ Սրբից տարել էր նրանց հայկական հոգի, ազգային կամք, հայերեն ապրելու պատգամ, ինչպես նաև Լիբանան էր հասցրել Արարատյան դաշտի ոսկեշող, քաղցրահամ խաղողը, որի փխրուն պտուղները Նոյի համար նախապատմական ժամանակներում դարձել էին արբեցնող զինի:

Արամ Ա վեհափառի գահակալության տարիներին առաջին անգամ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունում Վերափոխումն Աստվածածնի տոնին նվիրված պատարագը մատուցելու էր Մայր Աթոռ ս. Էջմիածնից հրավիրված բարձրատիճան հոգևորականը:

Առաջին անգամ Անթիլիասում բերքի ու պտղի օրհնության ժամանակ պիտի օրհնվեր Հայաստանից բերված արևաշող խաղողը:

Արամ վեհափառը ավանդության համաձայն թուլլատրել էր պատարագը մատուցել «Պիքֆալայի հովոցի» մեջ, բացօթյա: Պետք էր տեսնել այն ոգևորությունը, որ տիրում էր հոգևորականության և ծովածավալ հավա-

տացյալ ժողովրդի շարքերում: Ու պատահական չէր, որ Արամ վեհափառը, ողջունելով ներկաներին, ընդգծեց. «Այսօր մեզ հետ է Նավասարդ սրբազանը, որ մեր հրավերին ընդառաջելով, ներկա է այստեղ, մեզ հետ աղոթակից դառնալով, բաժանելու մեր ուրախությունը, հավատը և հույսը:

Ահավասիկ տեսնում եք, որ Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Աթոռների միջև անվերապահ ու ամբողջական գործակցության նոր էջ է բացված: Մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է այս էջը լցնել բարության գործերով»:

Այնուհետև Արամ վեհափառը նշեց, թե հիմնականը և կարևորը այն ոգին է, սիրո, եղբայրության և փոխադարձ հարգանքի ոգին, որով սկզբնավորվում է մեր ճանապարհը, որ բացվեց և հետզհետե պիտի գտնի իր հարազատ հունը և առավել ևս պիտի լուսավորի ամբողջ հայության կյանքը: Վեհափառը նաև շեշտեց, որ առաջին անգամ սրբազան տոնը նշանավորում են Հայաստանի քաղցրահամ խաղողով, որը սնվել է մեր ժողովրդի սիրո, բարության քրտինքի կաթիլներով:

Արամ վեհափառը շնորհակալություն հայտնեց նաև նավասարդ սրբազանին, որը մտահոգացավ մայր հայրենիքից արևաբույր խաղողը հասցնել Լիբանան, որ «Մենք օրհնենք սպիտակափառ Մասիսների հսկողության, Արարատյան դաշտավայրում Հայաստանի մեր զավակերի ձեռքով հասունացրած պտուղը»:

Եվ ապա վեհափառը վստահեցրեց, թե այսուհետ խորհուրդ, խորհրդանիշ ու ավանդույթ կդառնա և այս տոնը, կճոխանա ու կսրբագործվի Հայաստանից բերված խաղողով:

Այդ օրը հուզված էր նաև Նավասարդ սրբազանը: Նա գիտակցում էր իր առաքելությունը: Սրբազանը հավատքի ու օրհնության ճառագայթումի իր խոսքով դիմելով անդաստական ժողովրդի բեկորներին՝ հորդորել է. «Բարի հույզերով ու մտածումներով գոտեպնդված, լավատեսությամբ և ճշմարիտ ուրախությամբ բոլորս միա-

սիրտ ու միական հավաքվել ենք, որպեսզի մեկ անգամ ևս միատեղենք զլիսավոր այն ոսկեթելը մտածման, որը հյուսված է երկու թելերի համագործակցության և մեր եկեղեցու ծաղկման տեսիլքում»:

Այնուհետև նա ներկայացրեց հայրենի երկրի, Արցախի հայության դժվարությունները և ընդգծեց, որ այս փորձությունից հայ ժողովուրդը դուրս կգա իր հավաքական ջանքերի շնորհիվ:

Թողոր օրերին մամուլը, հեռուստատեսությունը բարի գալստյան ողջույնով անդրադառնում էին սրբազանի այցելությանը, նրա սրտաբուխ քարոզին, պատարագին, որ մատուցվեց ինչպես օգոստոսի 14-ին, Աստվածածնի տոնին, այնպես էլ հաջորդ կիրակի Անթիլասի Մայր Տաճարում:

Ահա ինչ է գրում «Ազդակ» թերթը. «Պատարագիչ Նավասարդ սրբազանը յայտնեց, որ Հայաստանի մայր հողէն իրեն հետ բերած է հայրենի խաղողը՝ խառնելու համար Լիբանանի խաղողին: Իր քարոզին ավարտին սրբազանը շնորհակալութիւն յայտնեց վեհափառին՝ իրեն ընծայած այս գեղեցիկ առիթի համար»: Նավասարդ սրբազանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Աթոռի միաբանության հայրերի հետ ներքին հափշտակությամբ ու խորին երկյուղածությամբ «Հայր Մերը» շուրթերին այցելեց «Թռչնի բույն» Եղեռնի գոհերի հիշատակի վկայարան-աղոթատուն, խոնարհվեց, ինչպես բանաստեղծը կասեր, «հոգու ծնկներով»:

Տասը օր շարունակ հայրենասեր հոգևորականը խորհրդակցեց Արամ վեհափառի հետ հայրենիքում տիրող իրավիճակի մասին ի մտի ունենալով առաջիկայում գումարվելիք Հայաստան-Սփյուռք համաժողովը, ինչպես նաև համայն հայությանը հուզուղ կաթողիկոսական ընտրությունը:

Բնականաբար հայ եկեղեցու և ազգի գերագույն շահերի ըմբռնումով Արամ վեհափառը և Նավասարդ սրբազանը ապրում և խորհում են ոչ թե ներկայի համար, այլ նայում են ապագան, որ հորիզոնի վրա կան

շատ ավելի ծանրակշիռ հարցեր, սեպուհ պարտականություններ ժողովրդի, եկեղեցական-ազգային կյանքին վերաբերող:

Արամ վեհափառը պիտի ցանկանար, որ նորընտիր Ամենայն Հայոց հայրապետի հետ շարունակեն եղբայրաբար վերահաստատված խաղաղ համագործակցությունը նվիրապետական Աթոռների միջև ինչպես կտակել է հայ եկեղեցու միասնականության ջատագով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ը. «Մեր բոլոր ուժերը, գրիչը, խոսքը, փորձառությունն ու պաշտոնի հեղինակությունը ի սպաս դնել բոլորանվեր, ընդհանուր Հայաստանյայց եկեղեցու փառքի, պայծառության և բարոյական ազդեցության գորացման համար»:

Նավասարդ սրբազանի հյուրընկալվելը Կիլիկիո Աթոռում մի վկայությունն է հայոց երկու նվիրապետական աթոռների մերձեցման, որին ակնդետ հետևում է հայ ժողովուրդը:

Վստահ ենք, որ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի այցելությունը կարդյունավորվի և կնպաստի հայրենիքի ու Սփյուռքի հարաբերությունների առավել սերտացմանը:

Մեծազանգված տաճարներն անգամ քար քարի վրա դրվելով են կառուցվում: Հայ եկեղեցու ամբողջացման տաճարի քարերին Մեծի Տանն Կիլիկիո գահակալ Արամ Ա և Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը ևս մի քար ավելացրին:

«ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՐԸ ԼԻԱՅՐԵՅ ՈԳԵՂԵՆ ՀԱՅՈՎ»

Սեպտեմբերի 26-ին Արագածոտնի թեմի պատմության մեջ քայվեց մի նոր էջ: Թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը քրիստոնեությունը որպես

պետական կրոն ընդունման 1700-ամյակի ծրագրերի շրջանակում նախաձեռնեց վերանորոգված ու բարեկարգված Կարփիի ս. Աստվածածին եկեղեցու վերաբացումը, որի բարերարն է արգենտինահայ Արմեն Մեծատուրյանը:

Ահավասիկ, եկել էր այն օրը, երբ եկեղեցին ուրախ դողանջներով հրավիրել էր իր հավատացյալներին՝ ադոքելու և խոկալու: Բազմամարդ էր եկեղեցին: Կրկնակի տոն էր Կարփիում, քանզի եկեղեցին օծելու էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ը: Ծես ու ծխահանդես էր Կարփիում, որին մասնակցում էին ոչ միայն ներկա, այլև նախկին կարփեցիներ, հավատացյալներ հարևան գյուղերից, հավատարմագրված դեսպաններ, պաշտոնյաներ: Հուզված էր Արամ վեհափառը, քանզի, թերևս, Աստծո մեծագույն պարգև էր նրա համար, որ հայրենի հողում, սիրելի ժողովրդի համար, իր իսկ ձեռամբ օծելու և ադոքքի տաճարի էր վերածելու մի նոր Աստծո տուն, որտեղ այլև չպիտի լռեն զանգերը, և խնկարույր ադոքքներ պիտի համբառնան առ Բարձրյալն: Ոգևորված էր հավատացյալ ժողովուրդը: Ընդհանուր ոգևորության և հավատքի զարթոնք էր նկատվում ամենուրեք:

Արամ Ա վեհափառը զգում էր պահի խորհրդավորությունը և մի առանձնակի ջերմեռանդությամբ էր կատարում օծման արարողությունը: Օրվա պատարագիչն էր Ս. Սահակ հայրապետի տեսիլքով ներշնչված և Ս. Մեսրոպ Մաշտոցի հանճարից ճառագող լույսով օծված Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը:

Արամ Ա վեհափառի հիշողությունից տակավին չէին ջնջվել իր իսկ հրավերով Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ սրբազանի այցելության մանրամասները Լիբանան, որտեղ փոխըմբռնման մթնոլորտում քննարկել էին այն բոլոր եկեղեցաշեն, ազգանվեր ծրագրերն ու մտահղացումները, չլուծված կնճիռները, որի շաղախի համար անչափ կարևոր է ժամանակ-մարդ-հոգևորական գործոնը:

Ահավասիկ, չավարտված զրույցը համերաշխությամբ սիրո ոգով շարունակվում էր հայրենիքում: Այն ամենը, որ տեսավ Արամ Ա վեհափառը սեպտեմբերի 21-ին Հանրապետության հրապարակում, որտեղ զինվորական շքերթի էին դուրս եկել հայոց բանակի զինված ուժերն ու զորամիավորումները, և դրան հաջորդ օրերին՝ Հայաստան-Սփյուռք համաժողովը, իրոք, բացառիկ երևույթ էր մեր նոր իրականության համար: Համազգային նշանակություն ունեցող գործ է կատարվել, որ նոր ճանապարհի պիտի բացի հայրենիքի համար: Այսօր հայոց թե՛ եկեղեցական, թե՛ աշխարհական առաջնորդների առջև դրված են համայն հայ ժողովրդի և եկեղեցու կենսական շահերը:

Պատահական չէ, որ Արամ վեհափառը տարբեր առիթներով նշել է, թե համատեղ ու միասնաբար տքնելու նախաձեռնությունը հյուսել են երջանկահիշատակ Գարեգին Ա-ի հետ՝ առանց որևէ կողմնակի նկատումների, սակարկության ոգիի կամ թերահավատության և ոչ իսկ երկմտության: Այս օրերին առավել հստակվեց և ամրացավ համոզումը, որ եթե կա փոխադարձ սեր, վստահություն, բարի կամեցողություն, մնացյալն ինքնին պիտի գա, և այդ ոգին հետզհետե շինարար ու բարերար դերը պիտի կատարի Հայոց եկեղեցու կյանքում:

Չրույցը, որ ծավալվում էր Արամ վեհափառի և Նավասարդ սրբազանի միջև, հեռագնա շեշտեր էր պարունակում՝ ոչ միայն պեղելով անցյալի դասերը, այլև ուղիներ որոնելով զայիք իրագործումների համար:

Այսօր մեր ազգը, որ հայրենիք ունի, որը նրա գոյության, բարօրության և զարգացման անխորտակելի ապավենն է, կարիք է զգում իմաստուն հոգևոր առաջնորդի, քանզի առջևում կաթողիկոսական ընտրություններ են:

Որոնումների ու տազնապների մեջ Արամ Ա վեհափառը եկել է վաղվա նկատմամբ վառ հույսերով, երկխոսության, պատասխանատվության խորունկ զգացումով՝ խորհրդածելու, հանրագումարի բերելու՝ ո՞վ է այն անձը,

որ ժառանգորդն է լինելու Գրիգոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու, Ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հայրիկի և հայ եկեղեցու շատ ու շատ պանծալի հայրերի, որոնք եկեղեցու հիմքերն արմատավորել են հայ ժողովրդի պատմության րեղուն անդաստանում:

Արամ Ա վեհափառը գիտի, թե ինչ խնդիրներ են դրվում նորընտիր կաթողիկոսի առջև. առողջ միաբանական կյանք, փոխըմբռնման և համագործակցության սիրալիր հարաբերություններ նվիրապետական արձանների միջև, միջեկեղեցական հարաբերություններում դիվանագետ ու քաղաքագետ, Հայ Դատի ու Հայոց եկեղեցու պաշտպանն ու ներկայացնողը: Լուծում պահանջող բազում նման կնճիռներ, որոնցով պայմանավորվում է ազգի բարգավաճումը:

Արամ Ա վեհափառը հավատում է, որ Աստծո ողորմությամբ նորընծա կաթողիկոսը կփշրի հավատացյալների իրարից բաժանող՝ «որոմների» և «ցորյանների» անբնական պատվարները, կցրի փոխադարձ կասկածամտությունը, կստեղծի հասկացողության, հանդուրժողության, վստահության և հարգանքի մթնոլորտ:

Նման լայնախոհ մտածումը շեշտվեց նաև Նավասարդ սրբազանի հրաժեշտի գոհունակության և շնորհակալական խոսքում. «Արամ Ա վեհափառը Կարփիի ս. Աստվածածին եկեղեցին հարստացրեց ոգով և մեզ ևս գոտեպնդեց ու լիացրեց ոգեղեն հացով»:

Արամ Ա վեհափառն ուներ խորունկ հավատ, որը բանաձևեց. «Ես հավատում եմ, որ Աստված իր Տան՝ Էջմիածնի գահն առանց գահակալի չի թողնի: Վստահ եմ, որ նորընտիր հայրապետը պիտի լինի երիտասարդ, առույգ՝ հոգով ու մտքով, ստեղծագործող անհատականություն և կոչված լինի Աստծո պատգամներն իրագործող ճշմարիտ առաքյալ»:

Արամ Ա վեհափառը մեկնում էր՝ իր հետ տանելով հայոց աշխարհի քանկագին պատկերներ՝ ծառ ու թուփ, խաչ ու խաչքար, գիրք ու մատյան, որոնք պիտի օտար

ափերում փոխարինեն հայրենիքի տեսիլքին: Հյուրասիրած աղն ու հացը, մատաղօրհները, եկեղեցու օծման խանդավառ մթնոլորտը երկար ժամանակ կուղեկցեն նրան:

1999թ.

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ**

Ընդամենը երկու տարի է անցել, ինչ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի սրբատառ կոնդակով ստեղծվեց Արագածոտնի թեմը, որի մեջ մտնում են նախկին Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի շրջանները, այժմյան Արագածոտնի մարզը: Մակայն այդ կարճ ժամանակն էլ բավարար է, որպեսզի այսօր կարողանանք տեսնել ու գնահատել Հայոց հայրապետի գլխավորությամբ և թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ ծավալած բազմաբնույթ աշխատանքները:

Իսկ ո՞րն է այն հարաճուն մղիչ ուժը, որ վստահություն ներշնչեց և օգնեց երիտասարդ առաջնորդին՝ իրագործելու այսօր արդեն անհավանական քվացող աստվածահաճո, եկեղեցաշեն, ազգօգուտ ծրագրերը:

Առաջինը՝ տևապես մեր ժողովրդի մեջ հարատևող և անցյալից մեզ հասած սրբազան արժեքներն են՝ մշակույթ և կրոն: Հայոց եկեղեցին, որ եղավ մեր կյանքի լուսաշավիղը, հավատքի ու հույսերի անփշրելի կանթերը և աննահանջ դրոշակակիրը՝ համախմբումի ու գոյատևման: Այդ նվիրական սրբությունների՝ Հայոց եկեղեցու, մշակույթի, ավանդությունների նկատմամբ հայ ազգի պաշտամունքի գիտակցումով է, որ Արագածոտնի

թեմի առաջնորդարանը նպատակահարմար նկատվեց հաստատել հենց Օշականում, ուր հանգչում է Ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունը:

Համոզված կարող ենք ասել նաև, որ մեր հոգեկան և իմացական արժեքների նկատմամբ ունեցած սերն ու գուրգուրանքը թելադրեցին, որպեսզի Մեսրոպ Մաշտոցի եկեղեցու կողքին հաստատվի և գործի նրա անունը կրող դպրատունը: Այդ փառահեղ կառույցը մեր օրերի մի տեսակ «ազգային-եկեղեցական-մշակութային վերնատուն» է՝ գիտական ժողովների, հանդիսությունների և հանդիպումների ժամադրավայր: «Լեհափառ հայրապետի խոսքերով ասած. «Այս կենտրոնը պետք է լինի անլռելի մի զանգակատուն, բայց հնչեցնի միայն մեսրոպյան զանգեր: Այստեղ պետք է հավաքվի ոսկեդարի մեր թարգմանիչների ժառանգությունը»:

Երկրորդ հանգամանքը, որ այս մեծ ծրագրերի իրագործումների հաջողության գրավականն է, Ամենայն Հայոց հայրապետի անձի ու նրա իղձերի հանդեպ ցույց տրված հարգանքի, սիրո և հնազանդության կեցվածքն է: Հայոց հայրապետի «հրաման ի Տեառնէ» պատվերն է, որ արձագանքում է «Եկայք շինեսցուք սուրբ զխրանն լուսոյ» կոչ-նշանարանին: Եվ այդ հրաման-պատվերը, որպես հայրական հորդոր, ուղի է հարթում և դառնում լույսի ճանապարհի բոլոր ժամանակներում և ազգի զավակներին առաջնորդում դեպի ավանդական ու նվիրական անառիկ մի ոգեղեն ամրոց, ուր սրբազան մյուռոնով օծված հույսը կաթկթում է ամեն հայի սրտից ներս:

Այսպիսի զգացումով ու նպատակադրումով է, որ Արագածոտնի թեմում բարեգարդվել ու գործում են Մուղնիի ս. Գևորգ, Աշտարակի ս. Մարինե, Թալիհի ս. Աստվածածին, Մելիք գյուղի ս. Հովհաննես, Մաստարայի ս. Հովհաննես, Մաղմուսավանքի, Հովհաննավանքի, Տեղերի եկեղեցիները:

Երրորդ ոչ պակաս կարևոր գործոնը, որը խանդավառ աշխատանքներ ծավալելու բուն գաղտնիքն է, մեր

ժողովրդի կրոնական և ազգային արժեքների շուրջ անշփոթ միավորվելու ոգին է, որ մեր պատմության և ճակատագրի ելևէջների համայնապատկերում միշտ կենդանի է մնացել և ազգի զավակներին առաջնորդել խաղաղ հանգրվաններ: Աշխարհի չորս ծագերում ցրված Միյուտքի մեր հայրենակիցները զիտակցաբար մեկ սիրտ և մեկ հոգի են դառնում ի խնդիր ազգի մտավոր և հոգևոր արժեքների պաշտպանության:

Մեր ժողովուրդն իր հանապազօրյա ապրումներից և պատմությունից գիտի, որ հավատքը, հոգևոր արժեքները շատ ավելի կարևոր են ժողովրդի գոյության համար և միշտ ապավինել է կյանքով ու պատմությամբ փորձված այդ արժեքներին՝ «ոչ միայն հացի կեցցե մարդ»: Այս գիտակցությամբ Չիկագոյից Ջիվան Կորոյանը վերանորոգեց Մեսրոպ Մաշտոց դպրատունը, Գյուլպենկյան Ֆոնդն իր վրա վերցրեց կահավորման ծախսերը, իսկ բազմաթիվ արվեստագետներ, գրողներ, մշակույթի գործիչներ իրենց գրքերով, արվեստի գործերով հարստացրեցին նորաստեղծ թանգարանի և գրադարանի հավաքածուները: Լիբանանահայ Հասմիկ և Ժիրայր Գաբրիելյանները վերակառուցեցին առաջնորդարանի շենքերը, արգենտինահայ Արմեն Մեծատուրյանի հովանավորությամբ վերանորոգվել է Կարփիի ս. Աստվածածին եկեղեցին և կառուցվում է երիցատուն, սպարանցի Հովհաննես Մարգարյանի միջոցներով վերանորոգվում է Գնթունիների կողմից կառուցված չորրորդ դարի եկեղեցին, վերանորոգվում են Գառնահովիտի և Բյուրականի ս. Հովհաննես եկեղեցիները, Օշականի եկեղեցու և շրջակա բնակչության ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներն իրականացնում է ՀՕՖ-ի գրասենյակը Տ. Վիզեն եպիսկոպոս Այբազյանի գլխավորությամբ, և այսպես կարելի է շարունակել:

Ծրագրերը բազմատեսակ են և պարտավորեցնող, քանզի առջևում Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակն է, ուստի անհրաժեշտ է, որ այդ տոնակատարությանը Արագածոտնի թե-

մը պատրաստվի պատշաճ մակարդակով, արժանապատիվ, հատկապես, երբ այս տարվա օգոստոսին Արագածոտնի թեմը պետք է հյուրընկալի ուխտավորաբար հայրենիք ժամանած հավատացյալներին, որոնք Օշականում հանգչող մեծ Սրբի գերեզմանի վրա բարեպաշտորեն պիտի խոնարհվեն և աղոթեն, քանզի նա է եղել հայոց բոլոր ժամանակների մեծագույն մարգարեն ու առաքյալը, որ հովվել է ցիրուցան իր հոտը և փրկել բազում տեսանելի ու անտեսանելի վտանգներից:

Սրբազան Ռուսոցչապետի նշխարներն անգամ ազգի զավակներին կոչում են ծնրադիր աղոթքի և հավատքի, սրբազան հուրը միշտ արծարծում վիատ հոգիներում՝ վերակենդանացնելով հայկյան նախնի աստվածապաշտության ոսկեդարը:

Թեմի բարեխնամ առաջնորդ Նավասարդ սրբազանը ունի նաև ուրիշ մտահոգություններ. «Մեր գերխնդիրն է քրիստոնեական ու ազգային գիտակցություն սերմանել մանուկների, երիտասարդների սրտերում: Այդ նպատակով Աշտարակի թիվ մեկ դպրոցում բացվել է կրոնի ուսուցիչների լսարան, ուր հմտանալով կրոնագիտական առարկաների մեջ և վկայականներ ստանալով՝ թվով երեսունմեկ ուսուցիչ կլծվի մանուկների հոգևոր դաստիարակության սրբազան գործին: Մուղնիի առողջարանական կենտրոնում հիմնվել է կիրակնօրյա դպրոց:

Փառք Աստծո, դժվարությունները դանդաղորեն, բայց հաստատական հաղթահարվում են: Եկեղեցու և ժողովրդի միասնությամբ, համընդհանուր սիրով, քրիստոնեական ջերմությամբ, հոտ ու հովիվ պիտի դիմավորենք գալիք դարակազմիկ տոները»:

Սրբազան հայրը գիտակցում է իր նախաձեռնած գործի դժվարությունները, որոնց հաղթահարումը նոր խնդիրներ և ծրագրեր, մտահղացումներ է պահանջում:

Ժամանակը կանցնի, տարիները կբոլորեն, ով գիտի, գուցե մի օր թեմի տարածքում գտնվող 170 եկեղեցին էլ իր հոգեպարար դողանջներով հրավիրի հավատացյալ

ժողովրդին աղոթքի: Այսօր գործի սկիզբը լավ է դրված, և այն հաջող ընթացքի երաշխիք է: Ուրեմն աղոթենք ի խորոց սրտի, որ եկեղեցական և ազգային բոլոր ձեռնարկները, շնորհիվ մեր ժողովրդի նվիրումի, հաջողությամբ պսակվեն «ի փառս Աստծու և ի պարծանս ու ի վայելումն հավատավոր ու եկեղեցասեր ժողովրդի»:

Ասվածը, թերևս, բավարար համարվեր, եթե մի հանգամանք ևս չգրավեր մեր ուշադրությունը: Պատմությունից հայտնի է, որ Օշականը, Աշտարակը և հարակից այլ բնակատեղիներ ամրոցների, հուշարձան-համալիրների քանդարաններ են, որոնք այսօր ընդգրկված են Արագածոտնի թեմում և կարող են հոգաժողության: Առաջնորդ սրբազանը հնամենի վանքերն ու մյուս հուշարձանները վերանորոգելու, պահպանելու, հաջորդ սերունդներին կանգուն վիճակում հասցնելու երազանքով է, որ այսօր նախատեսել է մի շարք ծրագրեր, որոնց այստեղ շատ համառոտ անդրադարձանք: Նորը կառուցելն օրվա հրամայական է, բայց հինը, անցյալից մեզ հասած վանական ճարտարապետության գլուխգործոցները պահպանելն անհրաժեշտություն է, քանզի նորը բարձրանում է հնի վրա: Արագածոտնի թեմում նորը և հինը հրաշալիորեն ոսկե կամուրջ են կապել՝ որպես անցյալը ներկային կապող անձեռակերտ ծիածան:

1998թ., հունիս

**«ՊԱՆԾԱՅԸ ԴՈՒՔ ԸՆԴ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ՉԵՐ, ՆՈՐՈԳԵՑԵՐ ԱՊԱ ՉՅԻՇԱՍԱԿՍ ՆԱՆՆԵԱՅ»**

Պատմությունը մի անխորհուրդ ու աննպատակ խաղ կլիներ, և փրկագործության զաղափարը ոչ մի բովանդակություն չէր ունենա, եթե չլինեին «սակաւ ընտրեալ»

ներ»՝ բարոյապես և գործունեութեամբ հաղթած, կոչված աստվածային արդարութեան նոր շնորհներ ընդունելու և զարգացնելու իրենց շրջապատողների մեջ: Վերը ասվածի հաստատումն է նորաստեղծ Արագածոտնի թեմի տարաբնույթ, բազմաշերտ ծրագրերի իրականացումը, որը մեզ՝ ապրողներին համար նույնիսկ անհավանական է թվում:

Դարերի փորձութեան հողմապտույտում հայկազուն հանրությունը հավատարիմ է մնացել կառուցելու, ստեղծելու աստվածատուր շնորհին:

Ահավասիկ, Արագածոտնի թեմի պատմութեան փառավոր էջերից մեկն արձանագրեց, որ Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը երիզող երկնագույն ժապավենը կտրեց այդ շքեղ կառույցի բարերար չիկագոյարնակ Ջիվան Կորոյանը և դպրատան հյուրընկալ դռները բացեց ներկաների առջև (հոգևորականներ, գիտնականներ, մշակույթի, արվեստի գործիչներ, պետական այրեր): Հատկանշական է, որ հայրապետական օրհնություններով հիմնադրվում է գիտամշակութային օջախ մի այնպիսի ժամանակ, երբ հանրապետությունը դժվարին կացութեան մեջ է, իսկ Արագածոտնի մարզի մարզպետ Հրայր Կարապետյանի խոստովանութեամբ՝ «Տնտեսությունը ետ է մնում»: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է, որ թեմի երիտասարդ առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանն իր հոգու մեջ կրում է աննվազելի հզորությունը և անկորնչելի շնորհը Փրկչի իջման խորհրդի և հավիտենական լույս փառաց Լուսավորչի կանթերի: Ուստի այսպիսի զավակներ ունեցող ազգը չի կարող տկարանալ, մեռնել և կորսվել, քանզի նա թոռն է Վարդանի, որը հավատի և փառքի լույսով լցրեց պատմությունը հայոց: Այդ նույն պատմութեան էջերը՝ շնորհիվ Նավասարդ սրբազանի ջանքերի, ավելացնում են եկեղեցաշինութեան, արվեստի, քրիստոնեական մշակույթի նոր ընձյուղումներ, որը ստեղծվում է ոչ միայն այսօրվա, այլև ոսկե ալազայի համար. «Պան-

ծայր դուր ընդ հայրենասիրութեան ձեր, նորոգեցէք ապա զյիշատակս նախնեաց»:

Թերևս այդ համոզումն է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն, դիմելով իր հոգևոր զավակներին, ասում է. «Մեր եկեղեցական-կրոնական գործը զարգացնելու, զորացնելու, ժողովրդի կյանքի մեջ տարածելու մտահոգութեամբ և առաջադրութեամբ՝ առանձին թեմ հռչակեցինք Արագածոտն զավառը և առաջնորդ նշանակեցինք երիտասարդ մի հոգևորական, որ զավակն է այս շրջանի, և վստահաբար դուր ծանոթ եք նրան՝ իբրև Օշականի նախկին հովիվ և այժմ՝ առաջնորդ Արագածոտն զավառի: Հասակով՝ ինձանից ավելի երիտասարդ և աշխույժ, հավատքով լեցուն, ծառայութեան կամքով զսպանակված: Ցանկանում եմ, որ Արագածոտն զավառի ամբողջ մեր ժողովուրդն ապրի հոգևոր վերարթնութեան մի նոր շրջան, և Նավասարդ սրբազանը լինի լուսարարը այդ հոգևոր լույսին, որ Մայր Աթոռ ս. Էջմիածնից տարածվում է մեր ողջ ժողովրդին»:

Ազնիվ ու բարի հովիվը, խանդավառված նոր ծրագրերով, վստահեցնում է. «Որպես հնագույն քրիստոնյա ազգի զավակներ՝ պարծանքով պիտի կրենք մեր անունն ու կոչումը, սիրասուն զավակունք Արագածոտնի, մեր կյանքով ու գործով պիտի ապացուցենք, որ հազարամյակների ընթացքում սրբորեն բարձր ենք պահել Քրիստոսի անունը: Ուրիշ ո՞ւմ, եթե ոչ Բարձրյալին, ուրիշ ո՞ւր, եթե ոչ Նրա տանը՝ Սուրբ Եկեղեցում մենք պիտի բացենք մեր սրտերը, բյուրեղացնենք մեր հավատքը»:

Հիրավի, դպրատանը հրավիրված «Քրիստոնեությունը և հայ իրականությունը» գիտաժողովը հաստատեց, որ այստեղ է հղանում և ծնվում ճշմարիտ քրիստոնյա կրոնի պատմությունը, որը, հայեցողական կանոնակարգ լինելուց բացի, նաև գիտություն է, ավելի ստույգ՝ գիտությունների և արվեստների սինթեզ: Սրբազան հայրը ոչ միայն իր ծրագրերի առանցքը կենտրոնացրել է եկեղեցաշինութեանը, գիտական-գրական-բանահյուսական մշակույթին, այլև չի մոռացել ոսկեղեն շարականներն ու

հոգևոր, ժողովրդական երաժշտությունը: Այդ ամենի հաստատումն է քեմուս հրաշամանուկ երեխաներից կազմված երգչախումբը, որի ելույթները տարբեր բեմերից հուզել և ոգևորել է բազմաթիվ ունկնդիրների, իսկ վերջերս սրբազան հոր ջանքերով, Բարբառա Էզրնիի, Ռոբերտո Դանովայի և Նիկոլաս Միխնիչի համագործակցությամբ, Քրիստոսի Ծննդյան 2000-ամյակի առիթով ձայնագրվել և աշխարհով մեկ պիտի սփռվի հայ հոգևոր երգը, պատարագը:

Չայնագրություններին ընդգրկված են Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Արագածոտնի քեմի երգչախմբեր (մենակատարներ՝ Լիլիթ Գրիգորյան և Անահիտ Մխիթարյան): Այդ ձայնագրությունները պետք է լույս տեսնեն առանձին ալբոմով:

Բնականաբար, Հայոց հայրապետը ուրախ է և հոգով խաղաղ, որ Քրիստոսի եկեղեցու պուրկերից մեկն է Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որի ուսերին ծանրացած է մեծ պարտականություն:

Մենք էլ վստահ ենք, որ հայ հավատացյալ ժողովրդի աջակցությամբ և Աստծո օգնությամբ ու ողորմածությամբ երիտասարդ հոգևորականը երկար ճանապարհ ունի անցնելու և կարողանալու է իրագործել աստվածահաճո գործեր, որոնց շնորհիվ պիտի ծաղկի մեր եկեղեցին և նոր հաջողություններ կարողանանք արձանագրել ազգի հոգևոր կյանքի կազմակերպման ու զարգացման ոլորտում:

Մեր հանրային գոյության ծանրաբեռ նավը, որ երագում է Ամենայն Հայոց հայրապետը, պիտի քեմակալ առաջնորդի մեզան խիզախ նավավարներով առաջնորդի հուսո նավահանգիստը:

1998թ.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

«ԱԶԳԻ ԱՌԱՋՆԹԱՅԻ ՀՈՒՅՄՆ ԵՄ
ՏԱՐԵԼ ՀԱՋՈՐԴ ՀԱՋԱՐԱՄՅԱԿ»

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, զի գործք
իրեանց չոգան զհետ նոցա»:

Չնայած պատմությունը մոռացության գիրկն է հանձ-
նում հիշատակներ, սակայն Վազգեն Ա և Գարեգին Ա
Հայոց հայրապետների անուններն անցնող տարիներին
առավել լուսավոր ու արժևորված պիտի հիշվեն:

Ակնհայտ է, որ տարիների գումարը հակադարձ
համեմատական է երիտասարդության գեղեցկությանը,
մինչդեռ Վազգեն վեհափառի համար ոչ միայն ծերուր-
յունը ուղիղ համեմատական էր գեղեցկությանը, այլև
նրան պարզեւ էր վեհ կերպարանք ու անբերի կեց-
վածք՝ միշտ բարձունքում ճախրող արծվի տեսքով:

Նա հղկված շարժումներով, խորաթափանց, իսկ որ-
պես հայրապետ՝ իմաստուն էր, խոհական, լայնախոհ,
գործնական: Մեզ՝ սաներիս համար, նա ոչ միայն ուսու-
ցիչ էր, դաստիարակ, այլև խորհրդանիշ, որը ժամանակ-
ների պահանջով ու թելադրանքով, շրջահայացությամբ,
զգուշությամբ ու հեռատեսությամբ կարողացավ իր բո-
լոր քայլերը, ծրագրերը և մտահղացումները լրումին
հասցնել անգամ անհավատ և աստվածամերժ ժամա-
նակներում:

Հուզաբաթախ էր: Հատկապես նրա զգայուն և
փխրուն ապրումները դրսևորվեցին երկրաշարժի ժամա-
նակ: Վազգեն վեհափառն իր ամբողջ էությամբ արտա-
հայտում էր այն վիշտը, որ կրում էր բովանդակ հայուր-
յունը: Եվ այդ ապրումներն իրենց կնիքը թողեցին, քան-
զի նրա հայացքն ավելի մռայլվեց, խոժոռվեց, դեմքը
սմբվեց, հոգին ընկճվեց, խեղճացավ ու քարացավ:

Ինձ համար մեր դարի շնորհագարդ հայ եկեղեցական մեծ դեմքերից մեկն է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն, որը լուսաշող ջահ հանդիսացավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունում: Նա համակ ոգի էր, անսպառ եռանդ ու փայլատակող սուրբ մտածում՝ արդիական ըմբռնումով: Նրա սրտի մեջ տրոփում էր հայրենի հողի ձայնը, իսկ մտքի ավիճ էր՝ Մաշտոց ու Խորենացի, որոնք նրա համար եղել են ջահակիր ուղեցույց: Իր ամբողջ էությանը նա սիրում ու պաշտում էր հարազատ, չարքաշ ժողովուրդը և մայր երկիր Հայաստանը:

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա-ը շաղախվել էր Հայոց եկեղեցու հետ: Նրա համար հայոց պետականությունը երազանք էր ու այդ սուրբ երազին փարված՝ թողեց փափուկ ու ճոխ կյանքը, եկավ հայրենիք, որպեսզի իր կյանքը խառնի ժողովրդի հոգւերին ու ծով տառապանքներին:

Նա ոչ թե իշխանամետ էր, ինչպես որոշ մարդիկ նրան բնութագրեցին, այլ նրա համար հայոց պետականություն, անկախություն, երկրի հզորացում, արժանապատվություն հասկացությունները բեկվում էին սեփական մտքի ոսպնյակով ու ստանում մաքուր լուսապատկերը, որի համայնապատկերում նրա համար ուրվագծվում էին միայն հայրենիքն ու հայոց պետականությունը, որոնք սուրբ ու թանկ են: Նա ոչ միայն գուրգուրանքով էր մոտենում այդ գաղափարին, այլև հորդորում էր իր զավակներին տեր կանգնել անկախ հայրենիքի անվտանգության բանալիներին:

Ու, թերևս, այդ ապրումներն ու իր անսահման հուզականությունն էր պատճառը, ինչպես նաև տեսնելով ժողովրդի օրեցօր վատթարացող սոցիալական վիճակը՝ չդիմացավ, մոմի պես այրվեց ու հավվեց:

Լուսաբնակ հայրապետ է, և պիտի մնա բոլոր գալիք սերունդների հիշողության մեջ՝ որպես մարմնացումը

աստվածային խաղաղարար կամքի ու հայոց պատմության հարազատ ոգուն: Այսպիսիների համար է Մովսես Խորենացու քևավոր խոսքը. «Մահկանացու ծնեալ, անմահ գիրն յիշատակ եթող»:

Այս խոհերով ու մտորումներով ծավալվեց մեր գրույցը Վազգեն Ա վեհափառի շնչով դաստիարակված ու հասունացած, Գարեգին Ա հայրապետի ձեռամբ եպիսկոպոս ձեռնադրված Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի հետ:

Մրբազան, այնքան էլ շատ ժամանակ չի անցել, ինչ Գուր այս պաշտոնին եք կոչված: Խնդրում եմ պատմեք, թե ինչ աշխատանքներ են տարվել առ այսօր:

– Բնականաբար, ցանկացած հարցազրույց նաև ինքնագովություն է, մինչդեռ ժողովրդի ծոցից դուրս եկած հոգևորականի նպատակների ու ծրագրերի առանցքը հարազատ ժողովրդին ծառայելն է. ծառայել ոչ թե ծափողջույնների, դափնիների ու փառաբանությունների համար, այլ ծառայել իբրև խոնարհ քրիստոնյա:

Արարատյան Հայրապետական թեմն իր գործունեության ընթացքում որպես կարևորագույն և հիմնական նպատակ՝ եկեղեցական համայնքների հոգևոր կյանքի կազմակերպումն ու ամրապնդումն է, հովվական ու կրոնադաստիարակչական աշխատանքների առավել աշխուժացումն ու ծավալումը, թեմից ներս՝ ժողովրդի շրջադարձը դեպի եկեղեցի և ազգային ավանդներ՝ խարսխված Մայր Աթոռ ս. Էջմիածնի ավանդական առաքելության վրա: Ինչպես Հայոց եկեղեցու յուրաքանչյուր թեմ, Արարատյան Հայրապետական թեմում նույնպես գործում են կառույցներ, որոնք ապահովում են թեմի բնականոն կյանքը:

Անվերապահորեն կարող եմ ասել, որ մեր ժողովրդի զավակներից յուրաքանչյուրի մեջ նստած է նկարիչը, բանաստեղծը, գրողը, որոնք եթե նույնիսկ արթնանում

են ուշացած, բայց քարնություն են բերում և լցնում, հարստացնում են մեր կյանքը: Ուստի քեմից ներս հոգևոր կյանքի վերագարծոնքին և ամբակայմանը նպաստելու համար ես մեր բոլոր շնորհագարդ գավակներին հրավիրում եմ Արարատյան Հայրապետական քեմում կազմակերպվող բոլոր ծրագրերին ու միջոցառումներին՝

քրիստոնեական դաստիարակության (հանրակրթական և կիրակնօրյա դպրոցների երեխաների կրթություն և դաստիարակություն, բուհերում կրոնական դասընթացներ, քարոզչություն մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ),

մշակութային («Շողակն Արարատյան» քերթ, ցուցահանդեսների կազմակերպում, Լուսո որդիներ ուսանողական կազմակերպության, ՀԵՄ-ի միջոցառումներ),

բարեգործական (այցելություններ ծերանոցներ, մակատներ, մեկուսարաններ):

Ես վստահ եմ, որ մեր ազատամիտ ու լուսամիտ երիտասարդները, իրենց հոգու շաղախը խառնելով եկեղեցաշինության սուրբ գործին, տարիներ հետո՝ անկաշառ ու աննահանջ հայրենասիրությամբ, հավատքով և շնորհներով լի նվիրյալ մշակներ կդառնան ազգի, եկեղեցու համար:

– *Սրբազան հայր, աղանդները Ձեզ չե՞ն մտահոգում:*

– Այնքանով, որքանով նրանք առկա են ու որո՞մ են սերմանում և բաժան-բաժան անում մեր ժողովրդի գավակներին: Մինչդեռ, իմ համոզմամբ, և դա այդպես է, մեր ժողովրդի մաշկի գույնը Հայ Առաքելական եկեղեցու քրիստոնեությունն է, որը փոխել հնարավոր չէ: Պարզապես հնարավոր է, որ սոցիալական այս անհաստատ իրավիճակում որոշ բեկորներ պոկվեն, բայց ամբողջական՝ ոչ:

Հայոց եկեղեցին և ժողովուրդը դարձել են մի ամբողջություն: Հայ ազգը, անկախ նրանից, ինչքան է հավա-

տում, աղոթում, եղել է, կա ու փարված կլինի իր ավանդական, ազգային եկեղեցուն, որտեղ դաջվել է հոգին, շաղախվել է մշակույթը, քաղաքակրթությունը:

Մեր մտայնությունը Հայոց եկեղեցու գույներով է զարդարված: Հավատքի վերածննդի այս օրերին «բարւօք պատերազմ» ենք մղում մեր հուսացյալ ժողովրդի ծոցում:

1700 տարի ս. Էջմիածինը վկան է բազմադարյան պատմության մեր սուրբ հավատքի գորության, ժողովրդի շինարար հանճարի և ապրելու անկուն կամքի: Ահա այն անշեղ ուղին, որով պիտի քայլի մեր ժողովուրդը:

– *Ինչպիսի՞ն են Ձեր փոխհարաբերությունները լրատվամիջոցների հետ:*

– Ես չեմ մտածում, քե յուրաքանչյուր գործի մասին պետք է մեծ աղմուկ բարձրացնել: Բայց հավաստիացնում եմ, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի իմաստուն եկեղեցական բարեկարգումներին հաջորդում են դարակազմիկ նոր հեղաշրջումներ, որոնք Հայոց եկեղեցուն հաղորդում են նոր բովանդակություն:

Մեր ժողովրդին հետաքրքրում է գործը և ոչ քե ինքնագովությունը: Ահա քե ինչու ես պատշաճ չեմ համարում հարցազրույցները:

Մենք ազգի ծառաներն ենք և եկեղեցու զինվորները: Չինվորը կովի դաշտ գնում է մարտի ոչ նրա համար, որ պարգևների սրժանանա, այլ հայերնիքի ու ազգի համար նահատակ դառնա: Ժողովուրդն է, որ անքերի տալիս է այս կամ այն երևույթի, անձի իրական գնահատականը, հիշողության մեջ պահում անուններ, եղելություններ, որոնք մեր պատմության հիմնական ընձյուղներն են: Եվ այնքան անաչառ է ժողովրդի հիշողությունը, որ պատմության մեջ ճշգրիտ սրբագրում է անգամ ամենագոր ժամանակի բոլոր եղելությունները: Ուստի ես վստահ եմ, որ ժամանակի մեջ կսրբագործվեն բոլոր լավ ու վատ գործերը:

– *Ինչպե՞ս եք վերաբերվում քննադատությանը:*

– Յանկացած հարցի մասին կարելի է տարակարծիք լինել և վիճել, սակայն ճշմարտությունը վեր պետք է լինի վեճերից և դառնա բոլորի համար մտածելու և գործելու գերագույն կանոն: Եթե քննադատությունն առողջ է, տեղին և ամենակարևորը սիրով հրամցված, ապա ողջունելի է: Նման քննադատությունը ուսանելի է, իսկ եթե այն չարությանը, բամբասանքի մակարդակով, չհիմնավորված փաստերով է արվում, ապա միանշանակ մերժում են նման մոտեցումը:

Եկեղեցուն, ինչու չէ, նաև հոգևորականին պետք է մոտենալ երկյուղածությամբ և ոչ թե չարամիտ, մերժողական կեցվածքով: Որքանո՞վ է արդար, որ աղանդավորության հետևորդը գրիչ է վերցնում գրելու հայ եկեղեցու և նրա ծառայողի մասին: Նա կարո՞ղ է անաչառ լինել:

Ի վերջո, ո՞ր ընտանիքում թերություն չկա: Բայց ոչ ոք իր տան ցավերն ու հոգսերը հրապարակ չի հանում, այլ կքած այդ բեռի տակ՝ քաշում է լուծը: Մենք էլ մեր լուծն ենք տանում:

Հարկ չկա մեկ առ մեկ վեր հանել այն թեր ու դեմ կարծիքները, որ հաճախ շահարկվել են: Հենց նման շահարկումներից զգուշանալով՝ ես խուսափում եմ լրատվամիջոցներից:

– *Հոգևորականի Ձեր բազմազբաղ առօրյայից դուրս ինչպիսի՞ նախասիրություններ, «թուլություններ» ունեք:*

– Իմ մեծագույն թուլությունն է. ես սիրում եմ մեր ազգի մեծամեծ հերոսներին ու նրանց գործերը: Իմաստուն հայրերից ինձ համար ավելի հոգեհարազատ է Հովնան Օձնեցին՝ իր հայրենասիրությամբ, գործելաճով, մաքի բռիչքով ու խորը տրամաբանությամբ, ինչպես նաև հզոր կամքով, որ բոլորանվեր ծառայեց իր ազգին ու եկեղեցուն: Որքանով հաջողվել է, փորձել եմ ծանոթանալ և ուսումնասիրել նրա հայրապետության իրագործումները. վստահորեն կարող եմ ասել՝ նա այն մեծագործ կարողի-

կուսներից եղավ, որ կարողացավ Հայոց եկեղեցին փառավորել և ժողովրդի համար մեծամեծ գործեր կատարել:

Այսօր ես ավելի շատ կարդում եմ պատմական, փաստավարագրական, գիտավերլուծական գրականություն, բնականաբար, իմ սեղանի գիրքն են «Հայ ժողովրդի պատմությունը» և «Աստվածաշունչ» Մատյանը: Հետևում եմ նաև նոր լույս տեսած գրականությանը:

Անբաժան եմ հայ հոգևոր երաժշտությունից, շատ եմ սիրում նաև հայ և արևմտաեվրոպական դասական երաժշտությունը:

Արվեստներից սիրում եմ նկարչությունը՝ հավասարապես ընդունելով բոլոր ժամանակաշրջանները (բարոկկո, Վերածնունդ, իմպրեսիոնիզմ) ու դպրոցները (ֆրանսիական, ֆլամանդական, ռուսական, հայկական): Ինձ համար կարևոր է, թե արվեստն ինչպիսի տաղանդով ու հուզումով է ստեղծված և ինչ տպավորություն է թողնում այն իմ ներաշխարհի վրա:

– *Համակարծի՞ք եք, որ արվեստը, գիտությունն անկում են ապրում Հայաստանում:*

– Ընդհանրապես ես անկում բառը մերժում եմ: Վստահորեն կարող եմ ասել, որ ունենք հիանալի ներուժ, նախադրյալներով օժտված անհատներ, ուղղակի հնարավորությունները սահմանափակ են, որպեսզի տաղանդները բացահայտվեն:

Սակայն չպետք է մոռանանք սերնդափոխության մասին, որը կյանքի բնականոն օրենքն է: Եկեղեցին իր կարելին անում է, որպեսզի երիտասարդ արվեստագետներին ու գիտնականներին սատարի: Եկեղեցին մշակութաստեղծ է, իսկ ժողովուրդը՝ եկեղեցասեր: Եկեղեցին և ժողովուրդը ձուլված ամբողջացել են հայ քրիստոնյա հասկացության մեջ, որտեղից էլ ծնունդ է առել մշակույթը: Մենք դրա կրողներն ենք: Քրիստոնեությունը ինչպես որ ծնեց հայ քաղաքակրթությունը, մշակույթը, այնպես

էլ ողջունում է ցանկացած առաջադիմական քայլ, միջոցառում, նպատակ ու միտք: Մենք իրավունք չունենք անտարբերություն ցուցաբերել մեր ժողովրդի ու հայրենիքի համար կարևորագույն միտք ու մտահղացում, հատկապես այսօրվա գիտատեխնիկական հզոր դարում: Ուստի օգնում ենք, որպեսզի ոչ միայն մեր ժողովրդի զավակները բացահայտեն իրենց կարողությունները, այլև իրենց երկնածիժը շնորհները օգտագործեն ի շահ ազգի ու հայրենիքի:

– Ո՞րն է Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի քաղաքական հավատո հանգանակը:

– Ծառայել եկեղեցուն, ազգին, այս է իմ ամբողջ էությունը. հայացքները, որին ինչ անուն կուզեք տվեք՝ հավատո հանգանակ, ուխտ, հավատարմություն: Ինձ համար քաղաքականը, ազգայինը, եկեղեցականը՝ բոլորը շաղախված են միևնույն քթխմորից:

Հատկապես ես մտահոգված եմ իմ հայրենիքի անվտանգության, ժողովրդի սոցիալական վիճակով: Ինձ համար Եկեղեցի, Պետություն, Ազգ ամբողջություն է. մեկնումենկը եթե վտանգվի՝ ես առաջամարտիկ եմ՝ խաչով, մտքով, արոքքով, հորդորով, կոչով և նույնիսկ՝ սրով:

– Անշուշտ, դժվար է մի ակնարկի մեջ ներառել բոլոր կարևոր հարցերը և խնդիրները, ուստի ի՞նչ կմտադրեիր:

– Ոչ թե մադքանք, այլ կոչ կուղղեի աշխարհի բարի կամքի տեր մարդկանց, որպեսզի Ղարաբաղի խնդիրը լուծվի մեր տեսանկյունից՝ վերամիավորում կամ անկախացում, որով պայմանավորված են հաջորդ քայլերը 21-րդ դար տանող ճանապարհին:

Իմ շատ թանկ ու սիրելի զավակներին կուզենայի հորդորել. հայրենիքի շահը վեր դասենք անձնական ու մասնակի շահերից:

Իմացական գերիշխանության դարաշրջանում, 21-րդ դարի արշալույսին, մեր բոլորանվեր իմացական կարո-

ղությունները բացահայտենք, արդյունավորենք և մրցակցենք ուրիշ ժողովուրդների հետ ոչ թե սրով, թրով, այլ խելքով և կամքով, կամք, որը մեր միտքը կդարձնի ավելի նպատակասլաց, այդպես մեր քանքարը կկարողանանք մատուցել համաշխարհային զանձարանը:

– 20-րդ դարից ի՞նչ տարաք Ձեզ հետ դեպի 21-րդ դար:

– Հույսեր: Փնտրում եմ հուսադրող նշմարներ, որպեսզի երևութականը բանձրացական դառնա: Մեր ազգի առաջընթացի հույսն եմ տարել: Ես հավատում եմ մեր հայրենիքի գալիքին:

ՀԻՇՇՅՈՒՄ ԵՎ ԿԱՆՉ ՉԳԱՍՏՈՒԹՅԱՆ

Գարեբ շարունակ աշխարհաափյուռ հայությունը ազգային հպարտությամբ ապրել է Մեսրոպյան խորհրդով: Եթե Մայր Աթոռ ս. Էջմիածինը հայ ժողովրդի պոռթկումն է, անմար փարոսը մեր հավատքի ժայռի վրա, ապա Ս. Մաշտոցը հայության ներկայությունն է երկրի վրա, որը հայ մտքի ու սրտի բերրի հողի մեջ ծաղկեցրեց ծիլերը իմաստության և բարու: Առանց Ս. Մեսրոպ Մաշտոցի հնարավոր չէ հասկանալ մեր ժողովրդի հարատևությունը և ոչ էլ նրա հանճարի փթթումը:

Բնականաբար, հաշվի առնելով Օշական գյուղի բազմադարյան պատմական փառավոր անցյալը և խոնարհվելով հայ գրերի գյուտի նահապետի սուրբ գերեզմանի առջև՝ Արագածոտնի թեմի առաջնորդարանը հաստատվեց Օշականում:

Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ վարդապետ Կճոյանի հետ մեր գրույցը նորակազմ թեմի ներ-

կայի ու վաղվա իրագործումների մասին պիտի որ հետաքրքրի ընթերցողին:

– Հայր սուրբ, Արագածոտնի թեմի մեջ ո՞ր շրջաններն են ընդգրկված և ինչպիսի՞ ժառանգություն եք ստացել:

– Արագածոտնի թեմը ստեղծվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին առաջինի՝ 1996 թվականի մայիսի 30-ի պաշտոնագրով և ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը (այն ընդգրկում է պատմական Այրարատ նահանգի Արագածոտն և Նիգ գավառների մեծագույն մասը):

Ստացված ժառանգության միակ մխիթարությունն է, որ մեր տարածքում կան տասից ավելի գործող եկեղեցիներ, որոնք հիմնովին կամ մասնավոր վերանորոգման կարիք ունեն՝ Մուղնիի ս. Գևորգ, Աշտարակի ս. Մարինե, Թալինի ս. Աստվածածին, Մելիք գյուղի ս. Հովհաննես, Մաստարայի ս. Հովհաննես, Մաղմուսավանք, Հովհանավանք, Տեղեր, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց: Թվարկված եկեղեցիներում և նրանց տարածքներում բարեկարգման ու նորոգման աշխատանքներ են տարվում: Կարծում եմ, որ շուտով հիշատակված եկեղեցիներում կողոպանջեն զանգեր, և նրանք կձառայեն նպատակի համար, ինչ գոհաբերությամբ ու նվիրումով կառուցել են մեր իշխանական տների նահապետները:

– Ի՞նչ դժվարություններ ունեք:

– Թերևս այսօր անհավանական հնչի, եթե խոստովանեմ, որ մեր թեմում աշխատանքները, ծրագրերը կյանքի կոչելու և կազմակերպելու համար ոչ մի դժվարություն չունենք: Ես իմ որդիական խոնարհությամբ գոհունակությունս և երախտագիտությունս եմ ուզում հայտնել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ին, որ միշտ աջակցել և ստեղծել է հնարավորություն, որպեսզի աշխատանքներն ընթանան կանոնավոր, բարձր մակարդակով:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ Վեհափառ հայրապետը ուշադիր, սրտացավորեն ու համբերատար ոչ միայն լսում է յուրաքանչյուրին, այլև հայրական գուրգուրանքով է վերաբերվում ցանկացած բարի, գիտակից առաջարկի և իր անմիջական հորդորներով օգնում, խրախուսում, որ կյանքի կոչվի ցանկացած եկեղեցաշեն գործ: Օրինակ՝ Գարեգին վեհափառը սիրով և պատրաստակամությամբ վերաբերվեց մեր կողմից առաջարկված ճարտարապետական և շինարարական նախագծերին, և կարող եմ հպարտությամբ վկայել անդրանիկ շինարարական իրագործումը՝ Օշականի դպրատան հիմնական վերանորոգումը:

Օրհնությունը կատարեց Վեհափառ հայրապետը, որի արարողությանը մասնակցում էր նաև բարերարը՝ Չիկագոյից 89-ամյա Ջիվան Կորոյանը: Երկու ամսից կավարտվի առաջնորդարանի շինարարությունը, որի հովանավորն է Բեյրութից մեր հայրենակից Ժիրայր Գարրիելյանը, սքանչելի մի մարդ, որը ցանկացել է ուրիշ շինարարական աշխատանքների ևս սատար կանգնել: Արգենտինահայ Արմեն Մեծատուրյանի հովանավորությամբ վերականգնվում է Կարփիի ս. Աստվածածին եկեղեցին: Վստահ եմ, որ հոկտեմբերին եկեղեցին իր հավատացյալ հոտին կհրավիրի աղոթքի և խոկումի:

Վերանորոգվում է Գառնահովիտի եկեղեցին: Հատկապես կուզենայի նշել ապարանցի Հովհաննես Մարգարյանի միջոցներով Գնթունիների կողմից կառուցված 4-րդ դարի ս. Հրաչ եկեղեցու վերանորոգումը և բացումը, որ կատարվեց նոյեմբեր ամսին: Բարերարը նվիրաբերեց 35.000 ԱՄՆ դոլար և վատահեցրեց, որ իր բարեսիրական գործունեությունը չի սահմանափակվի միայն դրանով:

Մենք ունենք մի դժվարություն՝ սպասավորների պակաս: Գործող տասը եկեղեցիներից միայն հինգ եկեղեցիներում ունենք սպասավորներ, որոնք ինչպես տոն,

այնպես էլ մնացած օրերին շրջում են անհովիվ շրջաններում, այցելում և խորհրդակցում նորաստեղծ ծխական խորհուրդների հետ, հոգում բնակչության հոգևոր կարիքները, տանում քարոզչական աշխատանք:

Որպեսզի լրացվի հոգևոր սպասավորների պակասը, Վեհափառ հայրապետը արտոնել է, որպեսզի երաշխավորությամբ ուսանողներ ընդունվեն ճեմարան և ուսումնական շրջանն ավարտելուց հետո վերադառնան ու իրենց հոգևոր ծառայությունը բերեն Արագածոտնի թեմի տարածքում: Ես երաշխավորել եմ վեց ուսանողների, որոնք ավարտելուց հետո պետք է կոչվեն ծառայության Մելիք, Մաստարա գյուղերում:

Բարձրագույն կրթությամբ երկու ուսանողներ ազատ ունկնդրի կարգավիճակով ճեմարանում հետևում են դասընթացների և ավարտելուց հետո դարձյալ կվերադառնան թեմ:

— *Օշականում դայրատան հոյակերտ պալատը ի՞նչ նպատակների է ծառայելու:*

— Հայոց եկեղեցին մեծ շուքով տոնում է Թարգմանչաց, Ս. Մահակ և Ս. Մեսրոպ տոները: Ս. Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն քրիստոնեական, այլև ազգային սրբություն է, ուստի նրա հիշատակի ոգեկոչումը վեր է ածվում համաժողովրդական տոնի, որին մասնակցում են երզնի, պարի, ազգագրական համույթներ, արվեստագետներ, ասմունքողներ, ցուցադրվում են քատերականացված ներկայացումներ: Տոնին մեծ շուք և խորհուրդ է հաղորդում Ամենայն Հայոց կաթողիկոսը իր հոգևոր դասով: Մաշտոցյան գործի խորհուրդը անկշռելի է մեր ազգի անցյալի, ներկայի և ապագայի կերտման համար:

Դրոշակ և նշանաբան է դարձել հայերեն գրերով քարգմանված առաջին նախադասությունը, որն այնպես հրաշալիորեն իմաստավորել է լինելիության խորհուրդը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Երախտագետ սերունդներս, շարունակելով

նրա տիտանական գործը, երրորդ հազարամյակ ենթմտնում մաշտոցյան հանճարի շնորհիվ՝ իբրև ազգ և տիրություն:

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում վերջերս շքեղորեն վերանորոգված այս պալատը պիտի ծառայի գիտական, գեղարվեստական, մշակութային, քարգմանական արվեստին նվիրված գիտաժողովների և այլ հանդիսությունների:

— *Արդյոք Հայոց եկեղեցու ծիրից ներս կգործի՞ կուսանոց: Կարծում եմ՝ կգտնվեն հայուհիներ, որ կյանքի պերախումներից կուզենան առանձնանալ և նվիրվել Աստծուն և ազգին, ինչպես անցյալում է եղել:*

— Ուրախությամբ պետք է ասեմ, որ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը մի պատկառելի գումար է հատկացրել, որպեսզի վերանորոգենք Մուղնիի հյուսիսարևելյան պատը, տանիքը: Կառուցվելու է երկրորդ հարկը, որը միանձնուհիների համար ննջարան-կացարան է ծառայելու: Ծրագրված է կառուցել հնձան, որպեսզի ստեղծվի բնատնտեսություն: Եթե Աստծո կամքով ամեն ինչ բարեհաջող ընթանա, ապա կարող եմ վստահեցնել, որ հայ միանձնուհիները երկար դարերից հետո առաջին անգամ իրենց ծառայությունը պիտի բերեն մեր ժողովրդին և Աստծուն:

— *Դուք վատա՞հ եք, որ կգտնվեն այդ գործի նվիրյալներ:*

— Հնարավոր է սկզբնական շրջանում մարդկանց տարօրինակ թվա, մանավանդ Մուղնին փոքրիկ համայնք է, սակայն, ես կարծում եմ, որ ժամանակի ընթացքում կհաղթահարվի այդ փոքրիկ հոգեբանական կողմը, կգտնվեն, բանաստեղծի խոսքերով ասած՝ «փափկասուն տիկնայք», որոնք իրենց համբերատար, հետևողական պատրաստվածությամբ կլծվեն բարեսիրական այդ առաքելությանը: Կանայք ավելի զգայուն, քնքուշ ու մեղմ են բնավորությամբ, ավելի շուտ կկարողանան ըն-

տելանալ միջավայրին, կարեկից լինել նեղալին, հիվանդին, որրին:

Ես վստահ եմ, որ կգտնվեն իրենց բարձրության վրա կանգնած անձնուրաց կին առաքյալներ. կզան, կյանքի կկոչեն կուսանոցը, որով մի նոր քրիստոնեական կրակ պիտի վառվի քեմից ներս, և չեմ կասկածում, որ նոր փառավոր էջ են բացելու Հայոց եկեղեցու պատմության մեջ:

– *Ձեր քեմի տարածքում աղանդավորներ կա՞ն:*

– Օշականը, որը 6000-ից ավելի բնակչություն ունի, աղանդավորներ չկան, մեկ կրիչնայական կար, համայնքը նրան վտարեց: Պատճառն այն է, որ ժողովուրդը շատ ավանդապահ է: Աշտարակում, Ապարանում, Ուջանում փոքր թվով հոգեգալստականներ կան: Եհովայի վկաները, որ շատ ավելի վտանգավոր աղանդ է, մատների վրա կարող ենք հաշվել:

Ես վստահ եմ, որ երբ ունենանք համապատասխան թվով հոգևորականներ, և ծխական խորհուրդներն էլ իրենց ողջ կազմով գործեն, ապա աղանդավորներին հետևորդներ չեն լինի:

– *Ի՞նչ ծրագրեր ունեք:*

– Ծրագրերը շատ են, բազմապիսի: Մեր գերխնդիրն է քրիստոնեական դաստիարակություն սերմանել մանուկների, երիտասարդների մեջ: Անդրանիկ սարկավազի ուժերով գործում է 3-14 տարեկան երեխաների ազգագրական երգի-պարի համույթ: Աշխատանք է տարվում ստեղծել մարզական խմբեր, որտեղ կհաճախեն մեծ թվով երեխաներ: Թող մեծադորդ չինչի, եթե ասեմ, որ մեզ մոտ սովորում, կրթվում և դաստիարակվում են որպես քրիստոնյա, քանզի երեխաները, պարապմունքների մասնակցելուն զուգահեռ, ընթերցում են Ավետարան, լսում հոգևոր երաժշտություն, հաճախում եկեղեցի: Աշտարակի Ներսես Աշտարակեցու համալսարանում դասավանդվում է հայ եկեղեցու պատմություն և վարդա-

պետություն: Լավագույն ուսանողները խրախուսվում և պարգևատրվում են մեր քեմի կողմից: Անում ենք կարելին, որպեսզի երեխաները դաստիարակվեն Հայոց եկեղեցու ոգով ու ավանդներով:

– *Հայր սուրբ, ի՞նչ կմաղթեիք մեր ժողովրդին, քանզի հոգևորականի շուրթերից հնչող մաղթանքը աղոթք է՝ հղած իր հավատացյալ հոտին:*

– Ես վստահ եմ և լավատես, որ քրիստոնեությունը կծաղկի, մեր պապեմական հավատքը կարմատավորվի հայի հոգում և քրիստոնեության 1700-ամյակը մեր քեմը ոտք կդնի իր ամբողջ վեհությանը, նոր ձեռքբերումներով ու նվաճումներով, քանզի այդ ծրագրով նախատեսվում է կառուցել մի շարք եկեղեցիների համալիրներ, երիցատներ, հովվատներ: Կցանկանայի, որ մեր ժողովուրդն ավելի ներհայեցողական լինի, չտարվի անիմաստ, անտեղի բամբասանքներով, որոնք ավելի շատ խաթարում և դժվարացնում են մեր կյանքը: Բոլոր դարերում ժողովուրդը զգույշ և զուսպ է եղել, մինչդեռ այսօր հրապարակի վրա են հայտնվում մարդիկ, որոնք անվստահության կոչերով ու հայտարարություններով են զբաղվում: Հավատացնում եմ, որ այս մեկ տարում մեր քեմի տարածքում արվել է շատ ավելի, քան նախորդ տասը տարիներին: Եվ չնայած նրան, որ այսօր արտակարգ ոչինչ չի պատահել, ես զգաստության կոչ եմ անում:

ՔԱՅԼԵՆԷ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՄԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Հայոց եկեղեցու նշանավոր կրոնական և մշակութային գործիչ, Արարատյան Հայրապետական քեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կոնյա-

նը խորհում է Մեծ պահքի մասին: Ըստ նրա՝ Մեծ պահքը հավատացյալը պիտի անցկացնի աղոթքով, պահեցողությամբ, անցյալի գործունեության վերազնահամար: Սրբազան հոր վկայությամբ՝ Մեծ պահքը միայն ճոխ ուտեստներից հրաժարվելու շրջան չէ, այլ Աստծու կողմից տրված մի առիթ՝ քրծվելու, կամքը ուժեղացնելու, ներքին էությունը մաքրելու: Մեղքի ծանր կապանքներից ազատվելու միջոց է, մի շրջան, որը թույլ է տալիս մարդուն իր գործերով, խոսքով, մտքի մաքրությամբ բերեփոխվել և աստվածահաճո անձ լինել: Անհատը կարիք ունի ինքնահաստատման, ինքնաճանաչման, ինքնամաքման: Այս շրջանը նաև աշխատանքի շրջան է:

Գործած մեղքը պահանջում է գիտակցում և պիտի հատուցվի լավությամբ, ողորմությամբ, ապաշխարությամբ: Քրիստոնեության նպատակը առաքինություններով զարդարելն է մարդու հոգին, նրա միջից վանել, դուրս շարտել մոլությունները, քերությունները:

– *Սրբազան, հավատացյալ մարդու համար ի՞նչ է աղոթքը:*

– Մեր հավատավոր նախնիները հնուց ի վեր սովորույթ ունեին յուրաքանչյուր բարի գործ ձեռնարկելուց առաջ աղոթքով և ուխտով դիմել առ Աստված՝ ամրապնդելու հավատն առ Բարձրյալը և հաստատուն ընթանալ դեպի ցանկալի նպատակը: Անկեղծ գրույցը մարդու և Աստծու միջև հավատ և հաստատակամություն է հարդորում բանական էակին, սրբագործում բարի գործերը:

Հարկ է ընդգծել, որ աղոթքը մաքրագործող և յուրաքանչյուր ձեռնարկած գործն առաջ մղող գործություն ունի: Այն ուղղված լինելով երկինք՝ միաժամանակ կոչ է անհատի ներքին ուժերի կազմակերպման և ձեռնարկած բարի գործերն առաջ մղելու ներքին հնարավորությունների համախմբման:

Քրիստոնյան, երբ հավատում է իր աղոթքին, լիով վարձատրվում է:

Աղոթքը ոչ միայն կապ է մարդու և Աստծու միջև, այլև անհատի ու նրա ներքին ուժերի միջև:

Աղոթքը երդում է, աղերս, հույսի և լույսի ու բարության փառաբանություն: Արդ, «Տերունական» հոգերուխ աղոթքով հանապազօրյա, զնանք վերստին մեր եռամեծ նախնիներին ընդառաջ և հաստատենք հավիտենական Ուխտը մեր և նրանց, Աստծո և մարդու, ազգի ու եկեղեցու միջև՝ «Հայր մեր, որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն քոյ...»:

– *Որպեսզի մենք ունենանք քրիստոնեական առաքինությամբ, գոհողության գիտակցությամբ, վեհանձն, քաղաքակրթված սերունդ, ի՞նչ է հարկավոր:*

– Եթե նկատի ունենանք հայ ժողովրդի քաղաքական անհանգիստ ու խռովահույզ կյանքը, պարզապես անհավանական պիտի թվա Հայոց Առաքելական Եկեղեցու հարատևությունն ու անմահությունը: Սա հայ ազգի ու նրա եկեղեցու միասնության արգասիքն է և Աստծո պահպան Աջի հովանավորությունը:

1700 տարիների ընթացքում հայոց կաթողիկոսական գահին 132 հայրապետներ են բազմել: Կաթողիկոսներից յուրաքանչյուրը եղել է ազգային շահերով ապրող, հայրենիքին անմնացորդ նվիրված գիտնական ու քաղաքագետ: Նրանցից քանի-քանիսները արյամբ և կյանքով են սպալուցուցել իրենց նվիրվածությունը ազգին և հայրենիքին՝ գրերի գյուտից Ավարայր և Ավարայրից՝ Սարդարապատ ու Արցախ: Շնորհիվ մեր իմաստուն և հայրենասեր նախնիների՝ Հայոց Եկեղեցին միահյուսվեց ազգային կյանքին, դարձավ նրա երազանքների, ակնկալիքների, հույսերի պաշտպանը, հաճախ փոխարինելով հայոց կորսված աշխարհիկ իշխանություններին, համախմբելով ժողովրդի առողջ, հայրենասեր ուժերը: Իսկ ո՞րն է եկեղեցու, կրոնի անխառն հիմնական խորհուրդը, որի գիտակցումը հարկավոր է մեր երիտասարդներին:

Ուսումնասիրելով ու մեկնաբանելով եկեղեցական հիմնական խորհուրդները, ծիսակատարությունները, տոները, դավանաբանությունը, աստվածաբանությունը, պատմությունը՝ ավելի ամբողջական կճանաչենք ինքներս մեզ, կմերձենանք մեր արմատներին, որպեսզի կարողանանք մերժել օտարամուտ, խորք, վնասակար տեսությունները, աղանդները, որպեսզի կանխենք օտարածին այլասերումը և հավատարիմ մնանք նախնայաց սրբալույս ավանդներին: Առանց համապարփակ, խոր ճանաչողության հազիվ թե կարողանանք անվթար պահպանել մեր գոյության նավը օտար ծովերի կործանարար ալեբախումներից: Ճանաչողությամբ միայն հնարավոր է հաղորդակցվել հոգևոր և կրոնական բարձրարժեք գանձերին, որով ազգը և անհատը առավել գիտակից ու ամբողջական գոյություն կդառնան՝ բնության, բանականության և հավատի, որպես միասնական ամբողջություն: Սակայն, ինքդ քեզ ճանաչելու համար, հարկ է ճանաչել ոչ միայն այն միջավայրը, որի ներսում ապրում ես, այլև այն հզոր ուժերը, որ «սկիզբն ու վախճանն են ամենայն բանի»:

Ահավասիկ, սկսենք խորհուրդներից, որոնք քրիստոնեական կրոնի և նրա եկեղեցու հիմնական և անշարժ անկյունաքարերն են: Ժամանակի հոռի բարբերը, որ համաճարակի նման սպառնում են խարխուլ մեր ազգի հարատևման հիմքը հանդիսացող ազգային մտածողությունը, բնավ խստասիրտ թող չհնչի, եթե նշեմ, որ մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է հավատով ու երկյուղածությամբ հետևել ավետարանական խորհուրդներին, քանզի այն թելադրված է Աստվածային անքնին կամքից և ուղղված է մարդկության անկում գնացող հոռի բարբերը շտկելու ըղձալի նպատակին:

Խորհուրդների անխաթար իրագործումով Աստված մշտապես ներկա է երկրի վրա, և մարդու հոգու մեջ հուստ պատուհան է բացվում՝ Աստծո շնորհները ներանելու համար:

Ուսումնասիրելով Հայոց եկեղեցու պատմությունը, քերևս, կարողանանք մոտենալ ինքներս մեզ և կայացած մեծախորհուրդ այն հրաշքին, որի ժամանակները ոչ թե ակնթարթներով, այլ տասնյոթ երկար ու ձիգ դարերով է չափվում:

Իմ փափագն է, որ մեր երիտասարդները մեծանան քրիստոնեական ազնիվ, մաքուր, սիրով լեցուն, որը պատրաստում է մարդուն երջանկության:

Հուսանք, որ մեր երեխաները, հաճախելով եկեղեցի, օր օրի ունկնդիր ու մասնակից մեր հոգևոր հայրերի բարոյախոսությանը, քրիստոնեական ուսմունքին, իրենց երեսի մեռոնի խորհրդով կմերժեն բոլոր վատը, չարը և կղրսկորեն հայ քրիստոնյային վայել կեցվածք՝ խոնարհվելով մեծի, հոգևորի առջև, քանզի երիտասարդի կյանքի արշալույսը անշեղորեն ցույց է տալիս նրան առաքիլության ուղին, որ Հիսուսի կյանքի ուղին է, լուսաճաճանչ ճանապարհը փառավոր գործերի ու նվիրումի: Այդ ճանապարհի վրա ամեն բան նոր ու գեղեցիկ է. կյանքը նորոգվում է, փթթում են հույսերը, ծաղկում են սպասումների պարտեզները:

Յուրաքանչյուր նոր օր անփոխարինելի է իր արժեքով, անկշռելի՝ իր բարիքներով ու մանավանդ՝ ընծայված թանկագին պատեհություններով: Անհրաժեշտ է, որ մեր երիտասարդները գնահատեն մշակութային արժեքները, բարեգործությունը քաջալերեն, տիրապետեն քիչ բառերով շատ բան ասելու, բառի վրա մեծ բեռ դնելու արվեստի փիլիսոփայությանը:

Որպես ամփոփում՝ կմադքեի ապագա երիտասարդությանը. գիտությամբ լուսավորեք ձեր միտքը, սիրեցեք ճշմարտությունը, գրականությամբ, արվեստներով մշակեք ձեր հոգին և սիրեցեք գեղեցիկը, սուրբգրային ընթերցումներով, մաքուր իղձերով և առաքինի գործերով ջերմացրեք, ազնվացրեք ձեր սիրտն ու ձեր կամքը և սիրեցեք բարին: Այդ առաքիլություններով ոգեշնչված՝ սուրբ հավատքի կրակը վառ պահեցեք միշտ ձեր հոգու մեջ:

«ԵՎ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՏՈՒԳՈՒԹՅՈՒՆ՝
ՀԱՅԱՅՔՍ ՄԱՍԻՄՆ Է ՓՆՏՐՈՒՄ»

(Վերջաբանի փոխաբեն)

1700 տարի առաջ Աստծո որդին և Տերն ու Փրկիչը մեր երկնային պատգամով կամոքն Աստծո իջավ ի Հայաստան աշխարհ՝ հյուսելով հրաշալի, ամենագեղեցիկ լուսն երազը սուրբ Գրիգոր Լուսավորչի:

Մենք զավակներն ենք այդ լուսն երազի:

1700 տարի անընդմեջ հայ ժողովուրդը եկեղեցու մեջ գտավ աղբյուրը երկնային շնորհների ու հանճարի.

Ազգը ծնունդն է այդ հանճարի:

1700-ամյա Ամենայն Հայոց հայրապետության սուրբ Աբրուք՝ այդ վեճը, հաստատ ու անշարժ է իբրև վավերական վկա ազգի քրիստոնեական հավատի ու մեր եկեղեցու կենդանության.

Նրա տերն ու ծառան եղան հայրենասեր ու եկեղեցասեր 132 գահակալները, որոնք գորավիզ են ունեցել սուրբ Էջմիածինը և ժողովրդական ազատագրական մտատիպարը՝ «վասն հավատո և վասն հայրենյաց», որով առաջնորդել և կրթել են անտերունջ հոտը:

1700 տարի շարունակ Միածնի իջման սուրբ Սեղանը եղավ սիրո և լույսի աղբյուր, ինչպես քերթողահայր Մովսես Խորենացին է վկայում. «մերոյ լուսաորութեան լուսաւոր վերակացուն».

Չահակիորներն այդ լույսի եղան երիցս Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, Մահակ Պարթևը, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթևացին, Մոմիկ և Տրդատ ճարտարապետները, Կոմիտասը, Եղիշե Չարենցը, Արամ Խաչատրյանը, Մարտիրոս Մարյանը, Վիկտոր Համբարձումյանը...

1700 տարի միակ ուժը, գորությունը և պաշտպանությունը, որ կար, որին ընդունում էին առավել կամ նվազ չափով օտար պետությունները, Ամենայն Հայոց կաթո-

ղիկոսությունն էր: Նրա ընդերքում էին կենտրոնացած հոգևոր մշակութային բովանդակ կյանքը՝ կրոն, լեզու, հավատ, դիմագրավելու կորով: Հայոց եկեղեցիներն ազգային գոյության վառարաններ էին, որտեղ մշտապես առկայծում էին ժողովրդի ազատության բաղձանքները, լուսավոր ապագայի հավատն ու հույսերը:

1700 տարի հայ եկեղեցին փրկեց իր զավակներին ձուլվելուց, իբրև ինքնուրույն ազգություն ոչնչանալուց՝ դառնալով նրա համար հուսո և ինքնապաշտպանական ջրղեղված վահան:

1700 տարի հետո վերջապես հասավ երկունքի բաղձալի այն օրը, երբ ամենախոր ու ամենակենդանի զգացումով, հոգու քրթիռով կարող ենք մրմնջալ.

«Մեռելներուս որպես խաչ ես այս ծառը տնկեցի»:

Ահավասիկ կենաց ծառը: Բոլորիս համար քանկ է ու սուրբ 2001 թվականի սեպտեմբերի 23-ը, երբ Հայոց հայրապետն աղոթքով և օրհնությամբ բացում է նորակառույց սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարի դռները և պատարագ մատուցում նորած սուրբ Սեղանի առաջ: Այս եկեղեցին համակ խորհուրդ է, մարմին առած ապրող ոգի՝ հայ հանճարի լույսով բյուրեղացած, որը կենսագործվեց բարերարների սրտաբուխ նվիրատվության շնորհիվ. նվիրատուների անուններն անջնջելի պիտի մնան մեր ժողովրդի պատմության մատյաններում, և նրանց միշտ պիտի հիշենք երախտագիտությամբ: Երանի նրանց, որ իմաստությունը ունեն իրենց հիշատակը հավերժացնելու շինարար գործերով հայրենի մայր հողի վրա, քանզի մեր բոլոր հնադարյան տաճարներն անմահ և հավերժական հուշարձաններ են հայ ժողովրդի լույս հավատքի ու կյանքի և կառուցողական հանճարի:

Ու թեև փոխվել են ժամանակները, փոխվել են կյանքի պայմանները, սակայն չի փոխվել կրոնական առաքելության մասին խոսելու այժմեականությունը, որովհետև չի փոխվել ու չի կարող փոխվել մարդն իր ապ-

րումների աշխարհով, իր հոգու ծարավով, հավիտենական ճշմարտություններ և փրկության ճանապարհ գտնելու հույսերով. «Երանի եկեղեցի շինողաց, թող Աստված հավետ անասան ու լույսերի մեջ պայծառ պահի այս աղոթքի տունը և բոլոր նրանց, որ պիտի գան այստեղ աղոթելու», – ասում է Վեհափառ հայրապետը:

Հայ ժողովրդի համար ամենամեծ, ամենապանծալի օր է: Այսօր լրանում է մեր ազգային գոյության ամենահաստատուն, կարևոր հիմքի տարեդարձը՝ 1700 տարի, և աշխարհասփյուռ հայությունը հավաքվել է տոնելու և ոչ միայն հայարտանալու պատիվ բերող Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցողական արվեստով, այլև հաղորդակցվելու դարերի մեծասքանչ խորին խորհրդին, որ ազգի համար եղել է հարատևման ուղի: Եվ նրանք, ովքեր ժամանակին քննադատել էին, ի տես այս իրականության, խոստովանում էին, որ իրենց խորհրդածությունների մեջ մեղանշել են: Իսկ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը հայարտությամբ խոստովանում է. «Փառք ու պատիվ մեր ազգի զավակներին, որոնք ի հեճուկս ճակատագրի անարդար հարվածների՝ կանգուն մնացին, և կանաչ պահեցին հայկազյան ցեղի կայծակնազարկ տոհմածառը: Դարերի փորձության հողմապտույտում հայկազուն հանրությունը հավատարիմ է մնացել կառուցելու, ստեղծելու աստվածատուր շնորհին: Ես վստահ եմ, որ հնության հմայքով օժված, ավանդություններով իրականացած սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը կդառնա հայ ժողովրդի ամենասիրելի սրբավայրերից մեկը»:

Ներկաների համար աղոթքը, խնկի ու կնդրուկի բույրը, շարականների հեշտալուր երգերը նպաստում են բուն հոգևոր ապրումին բարձրանալու, որին գումարվում է Հայոց հայրապետի սիրո, միության, հայրենասիրության աղոթք-աղերսը. «Շնորհ, սեր և խաղաղություն,

աստվածային այցելություն և երկնային ողորմություն հանգից է ի վերայ ձեր, ի վերայ Ազգիս հայոց և Հայաստան աշխարհիս»: Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն դարերի բարձունքից է խոսում, և զգում էս, քե ինչպես նրա խոսքը հասնում է մինչև անթափանցելի և խորհրդավոր խորքերը հոգուդ, որտեղ հիշվում են հայ եկեղեցու և ժողովրդի պատմության բոլոր կարևոր պատմական իրադարձությունների տարեթվերը՝ 301, 365, 404, 451, 1651, 1915... Հոգիդ, կարծես, տարրալուծվում է ժամանակի մեջ և մի պահ ներսումդ զգում էս վերակենդանացած ամբողջ անցյալը, ամբողջ հայ ժողովուրդը...

Հայոց հայրապետը օրհնում է ավանդական մատաղը, աղն ու հացը՝ ի նշան առատության, բարեկամության և սրտաբաց հյուրասիրության: Երբեք ու երբեք չի մոռացվի ազնիվ այս ասպնջականությունը, որը կազմակերպել է Նավասարդ սրբազանը: Գարեգին վեհափառը հոգով խաղաղ է և հպարտ իր այդօրինակ տոկուն, ճկուն և ուժեղ բնավորության տեր հոգևորականի՝ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի համար, որին էլ վստահում է սուրբ Գրիգոր Լուսավորիչ աղոթատան «բանալիները»:

Այնուհետև Ն. Ս. Օծությունն ընդունում է բազմախազար հավատացյալներին, որոնք եկել են, որպես ուխտավոր, աշխարհի տարբեր երկրներից՝ երկյուղած բարեպաշտությամբ Հայոց վեհափառին մատուցելու իրենց որդիական սերն ու հարգանքը և ստանալու նրա շնորհաբաշխ օրհնությունները: Դժվար է բառերով նկարագրել համաժողովրդական խանդավառությունը և հոգեկան ապրումները հավաքված բոլոր ուխտավորների, որոնք մեծով և փոքրով, հավատքի հուրով և միասնության կամքով շողախված, մոտենում էին Հայոց հայրապետին՝ աջհամբույր ստանալու: Հայրական գոհունակ ժպիտը դեմքին՝ Հայոց հայրապետն անհոգմաբեկ ու անձանձրույթ ընդունում է իր հոգևոր զավակներին. «Հայր ճշմարտապես որդուվք բերկրեալ»: Այդ պահին

բոլոր հայերի հոգիներն ամենաազնիվ հույզերով են լցված ու նրանց գիտակցության հորիզոնի վրա լուսավոր միայն է շողում:

2001 թվականի սեպտեմբերի 23-ը հրավեր է՝ ուղղված աշխարհի բոլոր հայերին, որպեսզի նրանք իրենց պապերի սուրբ երկիրը դառնան և իրենց նոր ապագան կերտեն:

1700-ամյա խորհրդով սեպտեմբերի 23-ին դրոշակ բարձրացվեց, որի վրա գրված են ազատագրման սպասող հայկական այն նահանգները, որոնք Արաքսի այն ափին տակավին շղթաների մեջ են գտնվում:

Եվ որպես գերազույն ստուգություն՝ հայացքս Մասիսն է փնտրում:

Եվ հիշողությանս մեջ արթնանում է Նավասարդ սրբազանի աղոթք դարձած հավատը. «Ես վստահ եմ, որ մասիսակերպ եկեղեցիների զանգակները պիտի մի օր դողանջեն՝ ազդարարելով ազգի մեծագույն ավետիսը՝ ազատ և ամբողջական հայրենիք»:

1700-ամյա Հայոց եկեղեցու խորին խորհուրդն է սա, որ պիտի սերունդներին առաջնորդի նոր հանգրվաններ: Եվ այնժամ մեր հայացքները կփարվեն ոչ թե գերի, այլ ազատ Մասիսներին...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք. Հովհաննես Մուրադյան.....3

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ծառայությունը նախնիներից ժառանգած ավանդ է.....9

Նույն մտահոգություններով ապրող

արվեստագետն ու հոգևորականը.....16

Երազը և իրականությունը ժամանակի

հետ են միահյուսվում.....20

«Պիտի կերտենք նոր արշալույս».....24

«Մա է Տունն Աստուծոյ».....28

Նավասարդ սրբազանը բացում է

հոգու փակագծերը.....32

Վերաբնացող Տաթևացու ոգին.....36

Տասը տարի Օշականում.....39

«Եկայք շինեսցուք զխորանն լուսոյ».....44

«Մի ազգ, որ մերժել է մեռնել».....47

Արամ Ա վեհափառը Լիբանանում

օրհնում է Հայաստանի խաղողը.....51

«Արամ Ա վեհափառը լիացրեց ոգեղեն հացով».....55

Արագածոտնի թեմի կազմավորման ակունքներում.....59

«Պանծայք դուր ընդ հայրենասիրութեան

ձեր, նորոգեցեք ապա գլիշառակս նախնեաց».....63

ՀԱՐՑԱԶԲՈՒՅՑՆԵՐ

«Ազգի առաջընթացի հույսն եմ

տարել հաջորդ հազարամյակ».....69

Հիշեցում և կանչ զգաստության.....77

Քայլեր ճանաչողության լույսին ընդառաջ.....83

«Եվ որպես գերազույն ստուգություն՝ հայացքս

Մասիսն է փնտրում» (Վերջաբանի փոխարեն).....88

ԴՏՀ 23/28

ԳՄԴ 86.37

Ս 982

Գիրքը հրատարակված է
հեղինակի ծախսերով

Մուրիայան Ս.

Ս 982 Գործունեության հավատամքը ծրագիր է և երդում:
Հոդվածներ, հարցազրույցներ: Եր.: Նաիրի, 2001.—
96 էջ:

0403000000

Ս _____ 2001

705(01)2001

ԳՄԴ 86.37

ISBN 5-550-01229-4

© «Նաիրի» հրատարակչություն, 2001

ՄԻՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՏԱՄՔԸ ԾՐԱԳԻՐ Է ԵՎ ԵՐԴՈՒՄ**
(Հոդվածներ, հարցազրույցներ)

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ծանձնապանյան
Վերատուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան
Համակարգչային շարվածքը՝ Ն. Ա. Վարդանյանի
Ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(Հանրային քաղաքացիական)

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տեղյան 91

«Ազգային գրադարան



NL0171987

400

"

"

"

"

"